1. Փառաց աթոռն ու երկինքը,  
 Ինձի համար իրեն փառքը.  
 Իմ փրկիչըս թողուց եկաւ,  
 Ինձի՞ համար էր որ մեռաւ:  
 Այո՛, ամէնն էր ինձ համար.  
 Իր սէրն է անհուն, անհամար.  
 Միշտ թող այս ըլլայ իմ երգըս,  
 Մեռա՛ւ ինձի համար իմ Տէրս:
2. Յուզիչ երգը սուրբ հրեշտակաց,  
 Հրէաստանը ամբողջ սարսկց.  
 Ինձ համար նախախնամութիւն,  
 է՞ր այսպէս իր կարգապարտութիւն:  
 Այո, ամէնն էր ինձ համար...:

3. Փրկիչս կ'ըսէ, «Իմ բաղկացս մէջ,  
Գնդի միշտ կայ հանգիստ անվերջ».  
Թէ դըննեմ հոն յոգնած գլուխս,  
Հանգիստ պիտի գըտնէ հոգիս:  
Այո՛, ամէնն էր ինձ համար ...»
4. Ազօթելոյ ի Գեթսեման,  
Արիւն քըրտինք թափեց գիշերն.  
Մեղացըս սքատիժն ու անէժք,  
Ինձի համար ինքը կըրեց:  
Այո՛, ամէնն էր ինձ համար ...»
5. Ինձի համար խաչին վրայ,  
Գլուխն ձըգեց ուսին վրայ.  
Անդին արիւնը, ո՞նչ, թափեց,  
Ինձ համար կեանքը նըւիրեց:  
Այո՛, ամէնն էր ինձ համար ...»

## 402 (39) ՍԵՐՆ ՎԵՐՑՈՒՅ ԶԻՍ Սաղմ 40.2\*

I was sinking deep in sin. Sl. St. S. 34

1. Մինչ կ'իջնէի վինն մեղքի,  
Որէ օր աւելի.  
Շատ հեռի եզրէն պայծառ,  
Թոյս չըկար ինձ համար.  
Բայց լըսեց Փրկիչն իմ ձայն,  
Ինձ եկաւ օգնութեան.  
Վեր բարձրացուց զիս ջուրէն,  
Ա՛լ եմ իրենն:  
Սէրն վերցուց զիս, սէրն վերցուց զիս,  
Երբ չկար ոչ մի նար, սէրն վերցուց զիս:

2. Ինձ պարգեւեց սիրա մը նոր,  
 Զայն կուտամ ես Անոր.  
 Միշտ ներկայ է հետս է Ան,  
 Սէրն հըզօր ինձ պաշտպան.  
 Ալ ինքն է Տէրն իմ կեանքին,  
 Ես՝ ծառան իւր փառքին,  
 Իմ երգս ալ նոր՝ մինչ ի մահ՝  
 Իւր սէրն ըլլայ:  
 Սէրն վերցուց զիս . . . .
3. Դու խոր ծովէն կատաղի՝  
 Վե՛ր նայէ Յիսուսի.  
 Տէրն է ծովուն, տայ հրաման,  
 Բուռն ալիք տեղի տան.  
 Տայ քեզ լըման փրկութիւն,  
 Քեզ սրբէ սուրբ արիւն,  
 Նոր կեանք օրհնեալ՝ սէրն հըզօր.  
 Տայ քեզ այսօր:  
 Սէրն վերցուց զիս . . . .

**403** ԱՐԻԻՆՆՐ ՓՐԿԵՅ ԶԻՍ Կող. 1. 20.

S. G. G. 109

1. Ալ չեմ գերի Սատանին,  
 Ոչ ալ մեղաց ծառայ.  
 Ազատ եղայ այն վայրկեանին,  
 Երբ իմ Փրկիչս գտայ:  
 Արիւնն, արիւնն մահուանէ փրկեց զիս,  
 Արիւնն Փրկչիս ազատ ըրաւ հոգիս:
2. Գառնուկն մեռաւ խաչին վըրայ,  
 Ո՛հ, Փրկիչ պատճառական.

Իր մահուան մէջ ես կեանք գտայ,  
Անվերջ փառք իր Անուան:  
Արիւնն, արիւնն մահուանէ:

3. Հեղեալ արեամբն ի Գողգոթա,  
Խաղաղութիւն հղաւ.  
Ես Հորըս հետ հաշտուեցայ,  
Թշնամութիւն վերցաւ:  
Արիւն, արիւն մահուանէ...

4. Արիւնն կ'ընէ հոգւոյն տաճար զիս,  
Քաւութեամբ ձրի.  
Յնձում ունիմ արդ անըսպառ,  
Զի այլ եւս չեմ գերի:  
Արիւնն, արիւնն մահուանէ...

404 (55) ՊԻՏԻ ԵՐԳԵՄ ԵՍ Մաղմ. 87. 1.

I will sing the wondrous story. S. S. S. 875

1. Պիտ՝ երգեմ ես սէրն իմ Փրկչիս,  
Որ մեռաւ մեղքիս համար.  
Թողուց իր վեհ փառք երկնային,  
Խաչն առաւ սիրայօժար:  
Պիտ՝ երգեմ ես զէպքն աննրման,  
Զոր ցոյց տայ ինձ Գողգոթան.  
Երգէ հետըն սըրբոց անմահ,  
Որք պատեն ծովն բիւրեղեայ:

2. Երբ էի մի ոչխար մուր,  
Զիս փնտռեր Տէրս ամէն օր.  
Ան գըտաւ զիս, ըսաւ. «Մի՛ լար,  
Կը սըրիմ արցունքդ բոլոր»:  
Պիտ՝ երգեմ ես զէպքն...

3. Վըշտակոծ իմ հիւանդ հոգին,  
 Գերուած ժանտ մեղքի համէն,  
 Տէրն սիրոյ մը սուրբ կաթոգին,  
 Բուժեց, ցրուեց վախսս ամէն:  
 Պի՛ս՝ երգեմ ես դէպմն անմահն...:
4. Դեռ կու գան մուծ խաւար օրեր,  
 Կը քալեմ վըշտաց շաւղէն:  
 Բայց միշտ հետս է Փըրկիչ իմ աէր,  
 Իր քայլերն շաւիղս կ'ուղղեն,  
 Պի՛ս՝ երգեմ ես դէպմն անմահն...:
5. Թաւալին երբ ոտքերուս քով,  
 Յորդահոս ջուրերն գետին:  
 Պի՛ա՝ անցնէ զիս՝ Տէրն ապահով,  
 Միանալ սրբոց խումբին:  
 Պի՛ս՝ երգեմ ես դէպմն անմահն...:

**405** (54) ՆԱ ԿԱՐՈՂ Է ԵՐԲ. 7. 25.

Such a wonderful Redeemer I have found. Alex. 140

1. Ըսքանչելի Փրկիչ մ'ուներմ մէջն հոգւոյս,  
 Ան է միայն խաղաղութիւնս, լոյս և յոյս:  
 Ազատած եմ օրէնքէն, ազատ մեղքի անէծքէն  
 Կարող է վըրկել քեզ ալ միայն Եահվէն:  
 Կարող է, Ան յաւիտեան,  
 Փըրկելու մեղքէ համայն:  
 Ե՛կ մեղաւորը ըշտապէ, բոլոր մեղքէդ կ'ազատէ  
 Զի կարող է վըրկելու քեզ Ան միայն:
2. Ոչինչ ուներմ զոհելու սիրոյդ վոխան,  
 Միակ յոյսըս Դու ևս, ոյլ սիրոյ ոյլկեան:

Որչառ յարեւել խուրր խաչիդ, կ'երգեմ ուրախ  
Ան է կարող փրկելու մեզքէ միայն: յաւիտեան  
Կարող է Ան յալիսեան . . . .

3. Ո՛հ, ինչ չընորժ փրկարար և կատարեալ,  
Շընորժ անհուն ստպար հոգւոյս, Դու խաչեալ  
երբ փոթորկն սղստնայ. կը յենում քեզ ան-  
Ձի կարող ես փրկելու չիս Դու միայն: Ղազար  
Կարող է Ան յալիսեան . . . .

4. Քեզի համար պառլատարեաժ փրկուծիւնն,  
Շատ քնդւնէ մի՛ մերժեր զսյն երբեք դուն.  
Քեզ կը սիրէ յաւիտեան, բարեկամ է իրական,  
Ձի կարող է փրկելու. քեզ Ան միայն:  
Կարող է Ան յալիսեան . . . .

406 ՆԱ ԳԱՄՈՒԵՑՍԻ ԻՆՁ ՀԱՄԱՐ Գաղ. 3. 20:

What a wonderful, wonderful Saviour. S. H. C. 105

1. Ի՛նչ հիանալի փրկիչ մը ունիմ,  
Ձի մեռաւ խաչին վրայ վասն իմ.  
Թափելով իր անգին սուրբ արիւնն,  
Որ փրկէ ինձ նրման մուգութիւն:  
Նա գամուեցաւ խաչին ինձ համար,  
Նա գամուեցաւ խաչին քեզ համար,  
Խաչին վրայ բարձրացաւ, վասն իմ մեռաւ  
Նա գամուեցաւ խաչին, ինձ համար:

2. Ան թողուց ի՛ր երկնային վառքը,  
Կատարելու շորը կամքը.  
Երնանելով կոյս Մարիամէն,  
Առաւ Նա մարդու կերպարան.  
Նա գամուեցաւ խաչին . . . .

3. Վիրաւորուեցաւ մեզի համար,  
 եւ կրեց նաև մեր ցաւեր,  
 Ինք բժիշկ է մեր հիւանդութեանց,  
 Մըխիթարիչն է մեր վշտաց,  
 Նա զամուեցաւ խաչին ինն համար . . . :
4. Այսպէս տրւաւ իր կեանքն Վասն այլոց,  
 Փրկելու աշխարհ իր մեղաց,  
 Արդ կ'պատրաստէ պալատներ մեզի,  
 Օր մը մեզ իր քովն պիտ' տանի,  
 Նա զամուեցաւ խաչին ինն համար . . . :

**407** (67) ԿԸ ՍԻՐԵՄ ՓՐԿԻՉՈՒ Ա ՅՈՎՏ. 4. 19 :

Gone from my heart the world. F. S. 38, S.S.B. 191

1. Սրտէս ելան հրապոյրներ և աշխարհ,  
 Երբ խաչին տակ ծուներ իջայ ես խոնարհ,  
 Հոն իր արևան մաքրող զօրութեան տակ,  
 Յիսուս լուաց զիս, և ըրաւ ձիւնէն ճերմակ,  
 Կը սիրեմ Փրկիչը, զի նախ ինք զիս սիրեց,  
 եւ զառն խաչին մահուամբ ըստր մեղքերս  
 քաւեց :
2. Երբեմն մեղքով դատապարտուած էի,  
 Երբեմն կըբից և մոլութեանց գերի.  
 Երբեմն եմ Հօր, որդի մը ապրտամբ,  
 Բայց արդ շքնորհք գըտած եմ Յիսուսի արեամբ,  
 Կը սիրեմ Փրկիչը . . . :
3. Կապուած էի, զիս արձակեց Յիսուս,  
 ես կոյր էի. աչքերս բացաւ ի լոյս.  
 Մեռած էի, ինք զիս կենդանացուց,  
 Որ պատմեմ ամէնուն այն սէրն, զոր ինձ ցու-  
 կը սիրեմ Փրկիչը . . . : [ցուց]

# ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔ

408 ԻՆՉ ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ԱՅՍ ԱՇԽԱՐՀ  
ԵԹԷ ՉԴԱՐ ՅԻՍՈՒՈ Ղուկ. 19. 10.

1. Ո՛հ, կորսուած, կորսուած էր այս աշխարհ,  
Փա՛ռք, եկաւ Յիսուս:  
Մեծ Իշխան յազթուէթեան,  
Մեծ Իշխան յազթուէթեան,  
Մեծ Իշխան յազթուէթեան,  
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,  
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:
2. Դա խաչին վրայ մեռաւ քեզ ու ինձ համար,  
Փա՛ռք, փառք քեզ Յիսուս:  
Սե՛ծ Իւլիան յաղթուքեան ...
3. Արդ, երջանիկ եմ ես, ուրախ Տէրօջմովս,  
Փա՛ռք, փառք քեզ Յիսուս:  
Սե՛ծ Իւլիան յաղթուքեան ...
4. Շուս պիտի գայ ա՛հաւոր մեծ օրն վերջին,  
Եւ նաև Յիսուս:  
Սե՛ծ Իւլիան յաղթուքեան ...
5. Այն ատեն մենք պիտի ելլինք այն տեղը,  
Ուր որ է Յիսուս:  
Փա՛ռք, Անոր սուրբ անուան,  
Փա՛ռք, Անոր սուրբ անուան,  
Փա՛ռք, Անոր սուրբ անուան:  
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա,  
Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

409 ՍԷՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՅՈՎԿ. Յ. 16:

1. Սէրն Աստուծոյ արև անշէջ,  
 Խեղճ սըրտերու համար,  
 Թէ լոյսդ ծագի իմ հոգւոյս մէջ,  
 Կ'անուշնան ցաւք դըժուար,  
 Գիշերն կ'անցնի սըրտէս տըրտում,  
 Փարատի մէզն հոգւոյս,  
 Կ'ըզգամ հրճուանք կեանք անպատում,  
 Այ շեմ ըլլար անյոյս:  
 Սէրն Աստուծոյ զեղուն ձրի,  
 Փայլի շողայ դարէ ի դար,  
 Ինձի համար, քեզի համար,  
 Քաշէ Երևն բոլոր աշխարհ:
  
2. Երբ թափանցեց իմ սիրտս խաւար,  
 Խաչէն մի ճառագայթ.  
 Ես արթնցայ Տէրոջս համար,  
 Եւ մեղքս եղաւ անյայտ.  
 Աէ ես գիտեմ անկէ ի վեր,  
 Ով զիս սիրեց մինչ մահ,  
 Իմ սիրտս տուի Փրկչիս նուէր,  
 Որ ինձ համար մեռաւ:  
 Սէրն Աստուծոյ զեղուն ձրի ...:
  
3. Ոէրն Աստուծոյ արև սիրոյ,  
 Որ շողաց աննըման,  
 Է Յիսուս Տէր Էմմանուէլ,  
 Հիմա ու յաւիտեան.  
 Հոս ձորին մէջ ես արտասուաց,  
 Վերն ալ երգեմ հետ հրեշտակաց,  
 Երբ աչքքս Քեզ տեսնայ:  
 Սէրն Աստուծոյ զեղուն ձրի ...:

**410** (61) ՓԱՌՔ ԱՆՈՐ ԱՆՈՒԱՆ Զաք. 12. 1.

Down at the cross where my Saviour died. S. V. 354

1. Տէր Յիսուսի եկայ ի Դողոթմա,  
 Եւ մեղքերուս թողութիւն խնդրեցի.  
 Առատ սրտեց արիւնը սըրտիս վրայ,  
 Փառք Անոր սուրբ անուանի:  
 Փառք Անոր սուրբ անուանի,  
 Փառք Անոր սուրբ անուանի.  
 Առատ սրտեց արիւնը սըրտիս վրայ,  
 Փառք Անոր սուրբ անուանի:
2. Տես իւր կողէն կը հոսի ջինջ աղբիւր,  
 Ի՞նչ պապականի կս առատ ըմպեցի.  
 Անով Յիսուս կը պահէ զիս մաքուր,  
 Փառք Անոր սուրբ անուանի:  
 Փառք Անոր սուրբ անուանի...
3. Հոս խաչին քով մեծ շնորհք ըստացայ,  
 Ըսքանչեկի ազատում մեղքերէս.  
 Եւ արդ Յիսուս օրտիս մէջ կը կենայ,  
 Փառք Անոր սուրբ անուանի:  
 Փառք Անոր սուրբ անուանի...
4. Եկ մեղաւոր, զու ալ եկ Յիսուսի,  
 Անով զըսնես փրկութիւն կատարեալ.  
 Ան սըրբութիւն պիտ' ըլլայ և քեզի,  
 Փառք Անոր սուրբ անուանի:  
 Փառք Անոր սուրբ անուանի...

**411** (64) ՓՐԿՈՒԱԾ ԵՄ Տիտ. 3. 3—7.

I have a song I love to sing. S. V. 49

1. Ունիմ մի երգ սիրեմ երգել,  
 Փրկանքս տալէն հետէ.

Փրկչիս անունն պատուել, յարգել,

Փրկանքս տալէն հետէ:

Փրկանքս տալէն հետէ,

Փրկանքս տալէն հետէ,

Պիտ' գովեմ իւր սուրբ անունն,

Փրկանքս տալէն հետէ,

Պիտ' գովեմ իմ Փրկչիս սէրն անհուն,

2. Գրիստոս կուտայ պէտքերս կ'ըսեմ,

Փրկանքս տալէն հետէ.

Իւր կամքն բնել յապարհս վըսեմ,

Փրկանքս տալէն հետէ:

Փրկանքս տալէն հետէ... .

3. Ունիմ վըկայ պարզ ու մէկին,

Փրկանքս տալէն հետէ.

Յրուէ վախերս կասկածք կրկին,

Փրկանքս տալէն հետէ:

Փրկանքս տալէն հետէ... .

4. Ժըպիտ մ'ունիմ խինդ ամպատում,

Փրկանքս տալէն հետէ.

Արեան պարտ եմ այս իմ ցնծում,

Փրկանքս տալէն հետէ:

Փրկանքս տալէն հետէ... .

5. Ունիմ ո՛հ, ես պատրաստ մի վայր:

Փրկանքս տալէն հետէ.

Ուր պիտ' բնակիմ յաւերժաբար,

Փրկանքս տալէն հետէ:

Փրկանքս տալէն հետէ... .

412 Փ Ա Ռ Ք Ք Ե Զ Սաղմ. 103. 1:

1. Դու մեծ Աստուած, երբ զըննեմ այս աշխարհ,

Զոր ըստեղծած ես խօսքով Գու հըզօր:

Երբ միտքս բերեմ կեանքերն այն անհամար,  
Զորս կը պահես, կը հոգաս ամէն օր:

Յայնժամ գոչեմ փառք քեզ, ամէնիշխան,  
Ի՛նչ մեծ ես Դու, ի՛նչ մեծ ես Դու.

Յայնժամ գոչեմ փառք քեզ, ամէնիշխան,  
Ի՛նչ մեծ ես Դու, ի՛նչ մեծ ես Դու:

2. Երբ վեր նայիմ լուսինին ու արևուն,  
Երբ երկնից մէջ շողալով թաւալին.  
Երբ դիտեմ հոյն անհամար աստղերուն,  
Որք լոյս սփռեն մութ, մտայլ գիշերին:  
Յայնժամ գոչեմ փառք քեզ . . . :
3. Երբ Տէրս ինձի իր խօսքով հանդիպի,  
Երբ տեսնեմ ես մեծ գործերն իր շնորհաց.  
Երբ ես ճանչնամ իմ մեղքերս ահռելի,  
Որոնք ծովուն անդունդն է թաղուած:  
Յայնժամ գոչեմ փառք քեզ . . . :
4. Երբ տեսնեմ ես Տէր Յիսուսն երկրի վրայ,  
Որ կերպարանք առած է ծառայի.  
Երբ տեսնեմ զինքն բարձրացած խաչին վրայ,  
Որ վերցրնէ մեղքն ամբողջ աշխարհի:  
Յայնժամ գոչեմ փառք քեզ . . . :
5. Երբ կենացս բնու ծանրապէս զիս ճնշէ,  
Երբ իմ հոգիս մինչև մահ վըշտանայ.  
Բայց երբ Տէրն զիս անդունդէն աղասէ,  
Մըխիթարէ ու վախերս չըքանայ:  
Յայնժամ գոչեմ փառք քեզ . . . :
6. Երբ վերջապէս Տէրն իջնէ ամպերով,  
Սուրբ հրեշտակաց խումբերով փառաւոր.  
Երբ իրեններն վեր առնէ նա իր քով,  
Երբ յայտնուի մեր Տէրն իբր թագաւոր:  
Յայնժամ գոչեմ փառք քեզ . . . :

## 413 (63) Ա Ձ Ա Տ Ե Մ Հուլմ. 6. 22.

Now the chains of sin are broken. C. C. 173

1. Յիսուս ներած է իմ մեղքերս,  
Ազատ եմ, ազատ եմ.  
Ձոհած է կեանքն ինձ համար Տէրս,  
Ազատ եմ, ազատ եմ.

Ալէլուիա, ալէլուիա,  
Յիսուս մեռաւ ինձ համար.

Ալէլուիա, ալէլուիա,  
Ազատ եմ, ազատ եմ.

2. Վատահելով ես իմ Փրկչիս,  
Եղայ ազատ, ալ ազատ.  
Սուրբ Հոգւոյն ուժն կը պահէ զիս,  
Ալ եմ ազատ, միշտ ազատ:  
Ալէլուիա: ալէլուիա . . . .

3. Մեղքի բոլոր չղթաներէս,  
Ազատ եմ, ազատ եմ.  
Ալ Աստուծոյ որդի եմ ես,  
Ազատ եմ, ազատ եմ:  
Ալէլուիա, ալէլուիա . . . .

4. Գերևաբարոյ չար կիրքերէս,  
Ազատ եմ, ազատ եմ.  
Եւ յուսահատ իմ վիճակէս,  
Ազատ եմ, ազատ եմ.  
Ալէլուիա, ալէլուիա . . . .

## 414 Ե Ս Պ Ի Տ Ի Ե Ր Գ Ե Մ Յուլմ 14. 27.

1. Թող պատեն զիս վիշտեր ու ցաւ,  
Թող բախտն կրկնէ իւր ընդ հարուած.

- Ես վախ չունիմ, սարսափ մի ընաւ,  
 2. Զի հոգւոյս մէջ կայ լոյս Աստուած:  
 Եւ ըստորէն վեր ես պիտ' երգեմ,  
 Ես պիտ' երգեմ, ես պիտ' երգեմ,  
 Եւ ըստորէն վեր ես պիտ' երգեմ,  
 Յիսուսի կեանքն ու սէրն վըսեմ:
2. Ի՛նչ ալ ըլլայ կեանքիս բաժին,  
 Որչափ ունին չունչ իմ թոքեր.  
 Ես պիտ' երգեմ իմ մեծ Փրկչին,  
 Տըխուր մահն ու իւր անհուն սէր:  
 Եւ բոլորէն վեր ես պիտ' երգեմ . . .
3. Ո՛հ, վախ չունին շիրիմն ու մահ,  
 Ալ ցուրտ հոգէն ես չեմ գողար.  
 Շիրմէն անդին ինձ կեանք մը կայ,  
 Անդունդին մէջ լոյս փրկարար:  
 Եւ բոլորէն վեր պիտ' երգեմ . . .
- 415** (75) ՅԻՍՈՒՍ ՍՐՏԻՍ ՄԷՁ ԹՈՎ. 14. 23.
- What a wonderful change. G. M. 472
1. Ի՛նչ զարմանալի կերպով իմ կեանքս փոխուեցաւ  
 Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ.  
 Շատոնց փնտռած լոյսըս հոգւոյս մէջ ծագեցաւ  
 Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ:  
 Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ,  
 Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ.  
 Սիրոյ ցնձման գեատեր հոգիս ողողեցին,  
 Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ:
2. Թողուցի իմ մոլար կեանքըս թափառական,  
 Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ.

Եւ անթիւ անհամար մեղքերս մաքրուեցան,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ . . . :

3. Լեցուեցայ յոյսով մը հաստատուն, անվեհեր,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ.  
Կասկածի սև ամպեր ճամբսու չին մրթագներ,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ . . . :

4. Մահուան ձորին մէջ ինձ համար լոյս ծագեցաւ  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ.  
Եւ սուրբ քաղքին դռներն ինձի բաց են հարկաւ  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ . . . :

5. Խոստում կայ թէ օր մը հոն բնակիլ պիտ' երթամ  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ.  
Եւ շքնորհք կ'ընդունիմ ամէն օր, ամէն ժամ,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ,  
Երբ Յիսուս եկաւ սրտիս մէջ . . . :

416 (70) ԿԱՅ ԼՈՅՍ ՊԱՅՆԱՌ. ԲԹԱԳ. 23. 4:

There is sunshine in my soul to-day. S S. S. 872

1. Կայ լոյս պայծառ և աննրման,  
Փայլի մեր վրայ անշէջ.  
Պայծառ քան մեր արև դարնան,  
Փայլի աշխարհի մէջ,  
Զի Փրկիչ մեր, Տէր Յիսուս մեր,  
Արեգակ սիրոյ արդարութեան.  
Դու ես արև, Դու ես մեր յոյս,  
Դու աղբիւր ես բերկրութեան:

2. Երբ Տէրն արև արդարութեան,  
 Սրտին վրայ մեր փայլի.  
 Ծաղկունք շնորհաց կենդանութեան,  
 Ամէն օր հոն ծաղկի:  
 Զի Փրկիչ մեր, Տէր Յիսուս . . . :
3. Խաւարն ու մեղք անայայտ կ'ըլլան,  
 Երբ Տէրն լոյս տայ վերէն.  
 Սէր, յոյս, հաւատք շատ դօրանան,  
 Աճին բարիք ամէն:  
 Զի Փրկիչ մեր, Տէր Յիսուս . . . :
4. Այսօր թող երգ ուրախութեան,  
 Ամէն սրտէն բղխի.  
 Հրեշտակք լըսեն մեր երգ ցնձման,  
 Աշխարհ համայն բերկրի:  
 Զի Փրկիչ մեր, Տէր Յիսուս . . . :



# ՀԱԻԱՏԱՑԵԱԼԻՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ .

417 Ո՛վ Մեծ Աստուած, ՀԲԱՇԱԼԵԱՅ Սաղմ. 86. 10:

1. Ո՛վ մեծ Աստուած, հրաշքներ հըզօր,  
 Յուցնես դու միշտ մարդոց բոլոր.  
 Քայց սէրդ անհուն՝ որ մեղքս ներէ,  
 է վեր ամէն հրաշքներէ:  
 Ո՛վ է ներող Աստուած Քեզ պէս,  
 Յուցնող ձրբի, ճոխ շնորհք պէս պէս:
2. Ո՛հ, երանի աշխարհ համայն,  
 Ըզգար, վայլեր սէրդ աննրման.  
 Ո՛հ, թէ երկիր՝ վեհ երկինքին,  
 Տար արձագանդ՝ շնորհաց երգին:  
 Ո՛վ է ներող Աստուած Քեզ պէս,  
 Յուցնող ձրբի, ճոխ շնորհք պէս պէս:

418 Տ Է Ր Ն Օ Ր Հ Ն Է Ոսղմ. 103:

Lobe den Herren den... Riechs Lieder 33

1. Տէրն օրհնէ, Տէրն օրհնէ, Տէրը՝ վառաց թա-  
 գաւորը,  
 Տէրն օրհնէ, ո՛վ իմ անձս, Տէրը երկնից տի-  
 Օ՛ն, քընարով, [բապեալը.  
 Քաղցըր երգով, դաշն նուագով,  
 Օրհնէ Անոր Սուրբ անունը:
2. Տէրն օրհնէ, Տէրը՝ որ երկնի, երկրի կառա-  
 վարն է,  
 Որ արձուի պէս քեզ իւր հըզօր թեւոց վըրայ  
 Քեզ կը պահէ. [կ'առնէ.  
 Կ'աղատէ մահէ, ահէ,  
 Մեծ թշնամին վար կը դարնէ:

3. Տէ՛րն օրհնէ, Տէրը որ առողջ մարմին կուտայ  
 քեզի,  
 Կը հոգայ քու կեանքիդ բոլոր պէտքերն միշտ  
 Տէրն ողորմած, [լիուլի,  
 Ո՛հ, ո՛րչափ է քեզ օգնած.  
 Թեւերն կ'ընէ քեզ հովանի:
4. Տէ՛րն օրհնէ, ո՛վ իմ անձս, զի քեզ պատէ ծովն  
 իր շնորհաց,  
 Որ սիրոյ հեղեղներ երկնից՝ քու վրայ է անձ-  
 ինչ չէ կարող, րևած,  
 Մերն Տէրն ամենակարող.  
 Որ քեզ սիրովն է հանդիպած:
5. Տէ՛րն օրհնէ, ո՛վ իմ անձս, իր Սուրբ անուն  
 ամէն ատեն,  
 Թող իր փառքն հոչակին բոլոր երկրի բընա-  
 թումբն հրեշտակաց, [կիչներն:  
 Թող գովին մեր Տէրն Աստուած,  
 Բոլոր երկիրն ըսէ, «Ամէն»:

## 419 ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ Գործ. 4. 12:

The name of Jesus is so sweet S. Sv. 78, G. M. 141

1. Անոյչ է անունն Յիսուսին,  
 Որքան քաղցր հնչէ ահանջին.  
 Ո՛հ, կը բերկրէ սիրտս լիովին,  
 Սիրուն անունն իմ Փրկչին:  
 Յիսուս, ի՛նչ անոյչ անունն,  
 Յիսուս, ամէն որ ես նոյն.  
 Յիսուս, թող սուրբերն երգեն,  
 Արժանի ես գոհուի՛ն ն:

2. Սիրեմ անուանը իմ փրկչին,  
Ձի կը բուժէ վէրքեր իմին.  
Բուրբ վախերս կը վարատէ,  
Սիրեմ անուանն Յիսուսին,  
    Յիսուս, ի՞նչ անոյց անուն...:
3. Սիրեմ լսել անուանն փրկչիս,  
Որ յարասև հրճուէ հողիս.  
Հնչումն Անոր սրբէ արցունքս,  
Գովեմ անուանն Յիսուսի:  
    Յիսուս ի՞նչ անոյց անուն...:
4. Տկար շունչս կարող չէ երգել,  
Փրկչիս անոյշ անուանն օրհնել,  
Ո՛հ, թէ համայն աշխարհ երգէր,  
Գովէր անուանն Յիսուսի:  
    Յիսուս, ի՞նչ անոյց անուն...:

**420**    Տէր ՅԻՍՈՒՍ Սէր է Սաղմ. 116. 13.

1. Տէր Յիսուս սէր է,  
    Նա զիս կը սիրէ.  
    Փըրկիչը՞ սէր է,  
    Նա զիս կը փրկէ:  
        Ուստի նորէն կ'երգեմ,  
        Իմ Տէրը՞ սէր է.  
        Փըրկիչը՞ սէր է,  
        Նա զիս կը սիրէ:
2. Մեղքի բեռան տակ,  
    Ճնշուած մնացի.  
    Մեղքի բեռան տակ,  
    Ես շատ հեծեցի:  
        Ուստի նորէն կ'երգեմ...:

3. Աստուած իր Որդին,  
 Ղրկեց Երկինքէն,  
 Եւ Նա զոհուեցաւ,  
 Իմ սիրոյս համար:  
 Աւսի Գորէն կ'երգեմ...
4. Ո՛վ հաւատարիմ,  
 Փրկիչ իմ Յիսուս.  
 Կիտեմ իմ սրտէս,  
 Թէ դիտ կը սիրես:  
 Աւսի Գորէն կ'երգեմ...
5. Դուն թաչը եչար,  
 Իմ սիրոյս համար.  
 Դուն անէծք հղար,  
 Եւ չարչարուեցար:  
 Աւսի Գորէն կ'երգեմ...
6. Բարձրագոյն սէրը,  
 Մորթուած Գառնուկին.  
 Բարձրագոյն սէրը,  
 Իոցուած կողերուն,  
 Աւսի Գորէն կ'երգեմ...
7. Փառք ի բարձունքս,  
 Քանի որ կ'ապրիմ.  
 Փառք ի բարձունքս,  
 Յաւիտեան Քեզի:  
 Աւսի Գորէն կ'երգեմ...

**421** ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ Ա Պետ. 1. 8.

There is a name I love. S. S. P. 152, R. E. 154

1. Թիսուս անունն, որքան սիրուն,  
 Այբիւրն՝ հոգւոյս ցնձման.

Ինձի կ'ըլլայ երգ օրն ի բունն .

Անունն այն պատուական :

Ո՛հ, կը սիրեմ Յիսուս, ո՛հ, ո՛րքան կը սիրեմ,

Ո՛հ, կը սիրեմ Յիսուս, զի նախ Ինք զիս սիրեց :

2. Այն անուն պատմէ սէրն Փրկչին ,

Որ ինձ համար մեռաւ .

Այն կը յայտնէ արիւնն անգին ,

Որ ինձ վրկանք եղաւ :

Ո՛հ, կը սիրեմ Յիսուս . . . .

3. Այն կ'ըսէ ինձ, շնորհն երկնաւոր ,

Ունի գանձ անըստառ .

Կը կերակրէ զիս օրէ օր ,

Ապրիլ Իրեն համար :

Ո՛հ, կը սիրեմ Յիսուս . . . .

4. Կ'ըսեմ թէ սիրտ մը վեհօրէն ,

Կ'ըզգայ իմ խոր վիշտերս .

Անկէ բաժին կ'առնէ Իրեն ,

Կը սրբէ արցունքներս :

Ո՛հ, կը սիրեմ Յիսուս . . . .

97

422 (97) ՇԱՏ ՍԻՐԵՄ ՔԵԶ. Յօվն. 21. 15.

More love to Thee O Christ. S. S. S. 632

1. Շատ սիրեմ Քեզ Յիսուս, շատ աւելի ,

Այս է սրտիս փափաք Տէր պաշտելի :

Լըսէ արդ պաղատանքս Տէր շատ սիրեմ ըզՔեզ

Տէր սիրեմ Քեզ, շատ աւելի :

2. Շատ զօրութիւնս առաւ հաճոյք ունայն ,

Բողոք վշտիս ցաւոյս Դու ես զարման .

- Այս է սըրտիս փափաք, թէ շատ սիրեմ ըզՔեզ,  
Տէր սիրեմ Քեզ, շատ աւելի:
3. Թող յարձակի փորձանք, վիշտ, տառապանք,  
Դու կուտաս ինձ Յիսուս միշտ սփոփանք:  
Ուստի սիրեմ Փրկիչս, պիտ' շատ սիրեմ ըզՔեզ,  
Շատ սիրեմ Քեզ, շատ աւելի:
4. Յայնժամ վերջին շունչիս, երբ վեր թռչիմ,  
Ասողէն ու արեւն, երլոր անցնիմ:  
Ո՛հ ինչ բերկրանք է ինձ, Տէր հոն սիրել ըզՔեզ  
Հոն սիրեմ Քեզ, շատ աւելի:

## 423 ՔԱՂՅՐ Է ԻՆՏԻ Սաղմ. 34:

So precious is Jesus my saviour my King. E. P. 38

1. Ո՛հ, ի՛նչ քաղցր է Յիսուս Փրկիչըս և Տէրս,  
Իր սէրն երգելով կ'անցնին բոլոր օրերս:  
Տկար վարյկեանիս իրեն կր փարբիմ ես,  
Զի նա խիստ քաղցր է ինձի:  
Զի նա խիստ քաղցր է ինձի,  
Զի նա խիստ քաղցր է ինձի:  
Երկինք է հոգւոյս, վայել Փրկիչս Յիսուս,  
Զի նա խիստ քաղցր է ինձի:
2. Սրտիս զուռն կը բաղխէր նա երկար ատեն,  
Ներս մանկ կ'աղերսէր, ինձ Ան մեղմօրէն:  
Եղուկ ինձ որ սիրտըս աւշ բացի իրեն,  
Զի նա խիստ քաղցր է ինձի:  
Զի նա խիստ քաղցր է ինձի...
3. Վերջապէս կը կանգնիմ օրհնութեան վրայ,  
Անամպ են երկինք, և ալ նղովք չըկայ:

Փրկչիս զէմքին լոյսն հոգւոյս վրայ կը ցոլայ,  
Զի նա խիստ քաղցր է ինձի:

Զի նա խիստ քաղցր է ինձի . . . .

4. Իմ Տէրս ինձ մի վայր խոստացաւ Իրեն քով,  
Այո՛ զԻնք պիտո՛ւ տեսնեմ հոն Իր մեծ փառքով,  
Եւ սիրուն զէմքին նայիմ հիացումով,

Զի նա խիստ քաղցր է ինձի:

Զի նա խիստ քաղցր է ինձի . . . .

## 424 (85) ՅԻՍՈՒՍԻ ԲՍՐԵԿՂՄՈՒԹԻԻՆԸ

Հոգ. Երգ. 212

1. Դու ես սիրեցեալս, պաշտելիս, ո՛վ Յիսուս,  
Քեզ կը պաշտեմ յար խորերէն իմ հոգւոյս,  
Եթէ այս ճամբուս հետեւանքն մահ ըլլայ,  
Նորէն չեմ թողուր, շնորհքովդ Քեզ Յիսուս:
2. Գիտեմ, այս աշխարհ խաղաղութիւն չիտար,  
Արդ ուսկի՞ց է, այս ցնձումը անդադար.  
Որ կը լեցընէ սիրտս, հոգիս շարունակ,  
Եւ կը յարէ «Տէրն է ինչպէս թիւն միակ»:
3. Քու մէկ նայուած քրդ, կը հալեցնէ հոգիս,  
Եւ մէկ ժրպիտըդ կ'այլտեղեցէ մարմինս.  
Յայնժամ երկնային փառքով կը լեցուիմ ես,  
Կրկնելով— «Դու ես իմ բաժինս իսկապէս»:
4. Ո՛հ, ի՛նչ սքանչելի ե. սուրբ տեսարան,  
Հոգիս կը նուազի այս զիւրիչ հրապոյրքէն.  
Իրաւ աշխարհ հմ, բայց այս ի՛նչ է սակայն,  
Հրեշտակներ կ'ելի էջեն, ո՛հ. երկինքէն:

## 425 ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒՍ Կող. Յ. 11.

I traveled, o Lord, my God. S. H. W. 584

1. Երջեցայ. Տէր իմ Աստուած ծով ու ցամաք,  
Փորձեցի լեռ, ձոր ու դաշտ, ա՛հ՛ շարունակ.  
Գիտեցի լուսին, արև, աստուղերն ի սփիւռ,  
Սարսեցայ կոճակներու կոծումէն բիւր:  
    Չգըտայ, ո՞վ Տէր Յիսուս,  
    Քեզմէ ի դատ խօսող հոգւոյս.  
    Քեզմէ ի դատ, Քեզմէ ի դատ,  
    Չգըտայ խօսող հոգւոյս:
2. Ինչպիսիք բուրումնալից հովիտներ գեղ,  
Պարզեցին եղեմային տեսիլք շքեղ.  
Հալեցան մեզմ մեղեդիք թռչնոց երգին,  
Սեղմեցին շատեր իմ ձեռք եռանդագին:  
    Չգըտայ, ո՞վ Տէր Յիսուս,  
    Քեզմէ ի դատ դպչող հոգւոյս.  
    Քեզմէ ի դատ, Քեզմէ ի դատ,  
    Չգըտայ դպչող հոգւոյս:
3. Երգեցին բանաստեղծներ դարերու մէջ,  
Շարեցին ըզմայլումի կամ սոսկման վէճ.  
Ճառեցին Տէր զիտուններ լակ երևոյթ,  
Կըրեցին կարգ ու օրէնք առանց սիրոյդ:  
    Չգըտայ, ո՞վ Տէր Յիսուս,  
    Քեզմէ ի դատ, յուզիչ հոգւոյս.  
    Քեզմէ ի դատ, Քեզմէ ի դատ,  
    Չգըտայ յուզիչ հոգւոյս:
4. Հայր և մայր, որդի, եղբայր, քոյր թանկագին,  
Սզգահան, մարդ մըտերիմ կամ այր ու կին.  
Ոչ երբէք մօտ են ինձի. Տէր Քեզ նըման,  
Ոչ երբեք հոգի, հոգւով սիրել կրնան:

Չգըտայ, ո՛վ Տէր Յիսուս,  
 Քեզմէ ի զատ սիրող հոգւոյս.  
 Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,  
 Չգըտայ սիրող հոգւոյս:

5. Երբ կ'զգամ թերութիւններս բաղմատեսակ,  
 Երբ յիշեմ մեղքերս ահեղ ու անառակ.  
 Խղճահար ու բեռնաւոր կը թափառիմ,  
 Կը գոչեմ սրտանձմիկ որո՞ւ փառիմ:  
 Չգըտայ, ո՛վ Տէր Յիսուս,  
 Քեզմէ ի զատ Փրկիչ հոգւոյս.  
 Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ,  
 Չգըտայ Փրկիչ հոգւոյս:

426 Կ՝ՈՒՉԵՄ ՅԻՍՈՒՍ ՄԻԱՅՆ Ղուկ. 5. 1

I am here a pilgrim stranger. S. H. W. 470, Ա.քր 43

1. Գանգուխտ եմ հոս օտարական,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն.  
 Վըտանգէ զերծ կը պահէ Ան,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն.  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն.  
 Վշտիս, ցաւոյս կ'ըլլայ զարման,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն:
2. Չարին ոյժերն երբ զիս պատեն,  
 Կ'ուզեմ Յիսուս՝ միայն.  
 Բարեկամներս երբ զիս ատեն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն:  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն.  
 Ամէն տեղ և ամէն վայրկեան,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն:

3. Թէ խոստանայ փառք ինձ աշխարհ,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Իր նախատինքն կ'ընտրեմ յօժար,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն, կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Փառք, պարծանք է խաչն ինձ համար,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն:
4. Իրք հոգիս երգ ունի ցնձուն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Կամ դառն վշտէ կ'ըլլամ նըկուն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն, կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Բաժինս ժպիտ և կամ արցունք,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն:
5. Կ'անցնի՞մ կեանքի գողտրիկ շաւղէն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Եւ կամ մահուան տխուր շուքէն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն, կ'ուզեմ Յիսուս միայն,  
 Մինչև այս կեանքս գտնէ վախճան,  
 Կ'ուզեմ Յիսուս միայն:

## 427 Փրկչին ՀԵՏԵԻԻԼ Մատթ. 16. 24.

I can hear my Saviour calling. S. H. 132

1. Կարող եմ լըսել ձայնն Փրկչիս,  
 Շատ անոյշ կուգայ ահանջիս,  
 Իր շնչաեքն մեզմ կը յուզեն զիս,  
 Առ քու խաչըդ, եկուր կտեէս:  
 Ո՛հ, անշուշտ առնեմ պիտ' խաչն իմ,  
 Ու սիրուն Փրկչիս հեռելիմ,  
 Ուր որ նա գրկիկ ուզէ զիս,  
 Պիտի երթամ առած խաչն ուսիս:

2. Ճամբաներս թէև մութ ըլլան,  
Ոտքերըս յոգնին դողդոջան.  
Որտոս զուարթ է, թող աչքերս լան,  
Միշտ ետևէդ, ընդ միշտ, պիտ' քալեմ:  
Ո՛հ, անուես առնեմ...

3. Ո՛հ, Փըրկիչ միշտ առաջնորդէ,  
Իրկնից լոյսն աչքիս թող այդէ.  
Զօրացուր սիրտս երբ տրկար է,  
Մինչ ետևէդ, ընդ միշտ պիտ' քալեմ:  
Ո՛հ, անուես առնեմ...

4. Ապահով անցուր մութ ձորէն:  
Երկնի հաց տուր թէ չիք ցորէն.  
Քեզ կարօտ եմ ճիշդ այս օրէն,  
Մինչ ետևէդ, ընդ միշտ, պիտ' քալեմ:  
Ո՛հ, անուես առնեմ...

5. Ո՛հ, քըրտիկ քիրովն ըլլունէ պիս,  
Քու սուրբ սէրդ ցուցուր տրկարիս,  
Շնորհքիդ մէջ Տէր թաղէ զիս,  
Մինչ ետևէդ, ընդ միշտ պիտ' քալեմ:  
Ո՛հ, անուես առնեմ...

6. Բնաւ Քեզմէ պիտի չը դատուիմ,  
Միայն Քեզ մընամ հաւ'տարիմ.  
Օգնէ ինձ որ չը խոտորիմ,  
Միայն Քեզի, Քեզի հետևիմ:  
Ո՛հ, անուես առնեմ...

7. Մահուան մութ սխուր փոսին մէջ,  
Թողելով մարմինս սընս մէջ.  
Դէպ' երկնի փայլուն լոյսն անշէջ,  
Միայն Քեզի, պիտի հետևիմ:  
Ո՛հ, անուես առնեմ...

## 428 ԵՐԴ ՄԸ ԱՆՈՅՇ Սաղմ. 104. 33.

Այն. 181

1. Երգ մ'ունիմ, երգ անոյ՛ իւ քաղցրունակ,  
 Այր մեղեդին ինչ ներդաշնակ.  
 Հոգւոյս խորերն միշտ կը թրթռայ,  
 Ո՛հ երգ անոյ՛ սիրահըմայ՛,  
 Դու, ո՛վ Փրկիչ իմ Յիսուս,  
 Աէրդ է իմ կեանքիս յանկերգը.  
 Դու ինձ համար շատ չարչարուեցար,  
 Դու ես հոգւոյս միակ երգը՛
2. Ո՛հ, այս երգ ըզմայլմամբ իւ բերկրութեամբ,  
 Ինչպէս իմ սիրտս կը լեցընէ.  
 Քաղցրազանակ իր գեղգեղմամբ,  
 Անոյ՛ց կը հնչէ ականջիս՛,  
 Դու, ո՛վ Փրկիչ իմ Յիսուս . . .
3. Տէր Յիսուս ինչ որ ըլլայ իմ վիճակ,  
 Այլոց պիտ' պատմեմ ես քու օէր.  
 Թանօթ, անձանօթ, միայնակ  
 Յըմահ պիտ' երգեմ քու երգը՛,  
 Դու, ո՛վ Փրկիչ իմ Յիսուս . . .
4. Երբ հասնիմ, ո՛հ իմ կեանքի վախճանին,  
 Խնդութեամբ ցնծութեամբ առ քեզ դամ,  
 Հոն ալ սրբոց հետ միասին,  
 Երգեմ յաւիտեան այս երգը՛,  
 Դու, ո՛վ Փրկիչ իմ Յիսուս . . .

## 429 ՅԻՍՈՒՍԻ ՀԵՏԵԻՒՂ Զուգ. 9. 61.

I would ever follow Thee N. H. 91

1. Միշտ պիտի հետեւիմ քեզ,  
 Պաշտելիկ իմ Յիսուս.

Աւելին կ'արժես կեանքիս,

Պաշտելիդ իմ Յիսուս:

Հաւատամ Տէր մանկան պէս,

Որ չունի դեռ կասկածներ.

Թող վայլեմ հոս միշտ Գու սէր,

Պաշտելիդ իմ Յիսուս:

2. Քու խօսքով կ'ուրախանամ,

Պաշտելիդ իմ Յիսուս.

Ամէն օր և ամէն ժամ,

Պաշտելիդ իմ Յիսուս:

Ուր զրկես պիտի երթամ,

Ու՛ր երթաս Գեղի պիտի՝ դամ.

Ըլլայ մութ կամ ապստամ,

Պաշտելիդ իմ Յիսուս:

3. Ինձ տուիր կեանքդ աննըման,

Պաշտելիդ իմ Յիսուս.

Այ քուկդ եմ Տէր յաւիտեան,

Պաշտելիդ իմ Յիսուս:

Թող կարի կեանքիս նուրբ թել,

Պատրաստ եմ միշտ անարգել.

Աշխատիլ և փառքդ երգել,

Պաշտելիդ իմ Յիսուս:

430 (91) ՍԻՐԵՄ ՔԵԶ ՅԻՍՈՒՍ Ա. Պետ. 1. 8.

My Jesus I love Thee. S. S. S. 659

1. Սիրեմ քեզ Յիսուս, զի գիտեմ Դու իմս ևս,

Աշխարհ եմ ձգած կը դիմեմ միայն քեզ.

Փրկիչ իմ հողւոյս, ո՛հ, Յիսուս Դու իմս ևս,

Եթէ քեզ սիրեմ ճիշդ հիմա պիտի՝ սիրեմ:

2. Սիրեմ քեզ Յիսուս, զի նախ Դուռն սիրեցիր,  
Որբոյդ խաչին վրայ իմ մեղքերս քաւեցիր.  
Սիրեմ գըլուխդ որ փուչերով պատեցիր,  
Եթէ քեզ սիրեմ, ա՛ն, հիմա պիտ' սիրեմ.
3. Սիրեմ քեզ Յիսուս, թէ ապրիմ, թէ՛ մեռնիմ,  
Քանի որ հետս ես, քեզ գովել կը պարտիմ.  
Մինչև ցուրտ մահուամբ այս կեանքէս ազատիմ  
Եթէ քեզ սիրեմ, այժմ և միշտ պիտ' սիրեմ:
4. Անվերջ ցնծումով երկնային սրբոց քով,  
Պիտի պաշտեմ քեզ, ո՛վ Յիսուս, մեծ փառքով.  
Կըլուխ թագ գըրած պիտ' հրճուիմ քոյգ սիրով  
Եթէ քեզ սիրեմ, պիտ' սիրեմ յաւիտեան:

### 431 ՅԻՍՈՒՍ ԱՄԷՆ ԲԱՆՍ Է Ա ԿՈՐԻՆ. 1. 30:

Jesus is all the world to me. G. M. 136

1. Յիսուս իմ յոյս և ամէն բան,  
Իմ կեանքս, ցնծումս է Ան.  
Զօրութիւնս է նա ամէն ժամ,  
Առանց շնորհքին կ'իյնամ.  
Իրբ տխուր եմ իբն կ'երթամ,  
Զունիմ իրմէ յաւ բարեկամ.  
Յիսուս, աղբիւրն ուրախութեան,  
Իմս է Ան:
2. Յիսուս իմ կեանք, և ամէն բան,  
Փորձանքի մէջ պաշտպան,  
Յրհնութիւններ ամէն վայրկեան,  
Իրմէ վրաս կը տեղան.  
Արև, անձրև ինք կը զրկէ,  
Դաշտերն հունձքով կը լեցընէ.

Յիսուս ազրիւր է բարութեան,  
Իմս է Ան:

3. Յիսուս իմ լոյս և փրկանք իմ,  
Սուրբ կեանքս իրեն պարտիմ:  
Ինչպէ՛ս մոռնամ այն բարեկամ,  
Միշտ ինձ հաւատարիմ:  
Իր խոստումն չի՛ դրժեր երբեք:  
Կը հսկէ վրաս գիշեր ցորեկ,  
Նա բարեկամ է անըման,  
Իմս է Ան:

432 ՊԱՅԾԱՌ ԴՈՒ ԱՍՏՂ Յայտ. 22. 16:

Յաւելուած Երզ. 417

1. Պայծառ Դու աստղ առաւօտեան,  
Փայլ տաս, չողաս ի՛նչ անըման,  
    Լուսովդ խաւարն կ'անհետի:  
Լեցուն շնորհքով, ճշմարտութեամբ,  
Լեցուն գթով ու քաղցրութեամբ:  
    Սիրովդ կեանք տաս աշխարհի,  
    Որդի Դաւթի՝  
Ովսաննա, երկնի մանանա, օրհնեալ Աստուած  
Ամէնուն վրայ խիստ բարձրացած:
2. Լոյս երկնային՝ սուրբ, անապակ,  
Սիրոյդ կրթակ սըրտիս յատակ՝  
    Թող յար վառի, բորբոքի:  
Զորացուր զիս որ ևս մընամ,  
Քու մարմնոյդ վրայ իրբև անդամ,  
    Քեզի համար կենդանի,  
    Յիսուս, իմ յոյս:

Քու խօսքդ, շոքիդ ու սուրբ արիւնդ մաքրեն  
Որ ես միայն քե՛զ հետեիմ: [սիրտն լմ.]

3. Դո՛ւ ես Ալֆան ու Օմեղան,

Դո՛ւ ես սկիզբն, Դո՛ւ ես վախճան.

Մեր փեսան ու Թագաւորը,

Ինչպէս ամսոյ վերն համբարձած.

Նոյնպէս պիտ' գաս փառքով պսակուած,

Հրեշտակներով բիւրաւոր.

Ամէն, ամէն,

Եկո՛ւր Յիսուս, զարերու յոյս, շուտով եկուր,

Եկեղեցւոյդ փառք հագուեցուր:

## 433 ԱՍՏՂԵ ՈՐՈՒՆ ՅԱՐԻՄ ԵՍ Մատթ. 2. 21

1. Աստղն որուն յարիմ ես,

ժայռն ուր կանգնած եմ.

Տէրն որուն կառչիմ ես,

Յուպն որով քալեմ.

Հացն որով կ'ապրիմ ես,

Ակն ուր խըմեմ ես.

Կեանքն որուն ձըգտիմ ես

Դո՛ւ Յիսուս, Դո՛ւ ես:

2. Ոյժն ուրկէ՛ պիտի գար՝

Ինձ՝ հաւատք, սէր, յոյս.

Չար աշխարհն պարտել յար,

Է ֆեզմով Յիսուս.

Դուն առիւր մեղաց ընու,

Բուժեցիր մեղքերս.

Ա՛հ, իմ յոյս, հաւատք, սէրս

Դու ես ո՛վ իմ Տէրս:

3. Ուստի ելլեմ միշտ վեր,  
 վեր աշխարհէն այս.  
 Մինչ հընչին դանգակներ,  
 Ուրբ հրեշտակաց դաս,  
 Տէ՛ր առաջնորդս Դու ես,  
 Ալ չունիմ վախ ես.  
 Կեանքն որունն ձըկտիմ ես,  
 Դո՛ւ Փրկիչ, Դո՛ւ ես:

**434** ԼԵՏԵԻԻՄ ՅԻՍՈՒՍԻ Յովհ. 12. 26:

Down in the valley with my Saviour. S. S. S. 529

1. Խոր ձորերու մէջ, Փրկիչս՝ վրս ես կ'երթամ,  
 Ուր ծաղկունք բացուեր են և անոյշ ջուրեր կան  
 Ուր որ առաջնորդէ ես պիտ' հետեւիմ Անոր,  
 Հետքիդ հետեւիմ առնեմ պսակ վառաւոր:  
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի,  
 Ուր որ ալ զիս զրկէ, ես պիտ' հետեւիմ,  
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի,  
 Ուր որ ալ զիս զրկէ ես պիտ' հետեւիմ:

2. Խոր ձորերու մէջ Փրկիչի՛ վրս ես կերթամ,  
 Ուր մրրիկ և արագահոս սև ջուրեր կան.  
 Երբ Ան զիս առաջնորդէ ես երբէք չեմ վախնար  
 Եթէ Տէրս հետս բլլայ վտանդէ չեմ սոսկար:  
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի...:

3. Խոր ձորերու մէջ կամ գահավէժներու վրայ,  
 Հոգիս յաւիտեան Փրկչիս խիստ մօտ պիտ' մնայ  
 Նա զիս պիտ' առաջնորդէ իր քալած ճամբով,  
 Հոն ուր սուրբերն են Տէրոջ քով ապահով:  
 Հետեւիմ ես, հետեւիմ Յիսուսի...:

## 435 Տ Է Ր Ո Ջ Ս Հ Ե Տ Ս աղմ. 73. 24:

I walk and I talk with the King. R. G. S. 87

In sorrow I wandered my spirit. T. H. 141

1. Տրտում թափառէի մեղքով ճնշուած,  
 Բայց հիմա եմ ուրախ, լիովին հանգչած.  
 Ո՛հ օրն ի բուն եւ միշտ ցնծութեամբ կ'երգեմ,  
 Եւ այս է պատճառը, Տէրոջս հետ կ'քալեմ.  
 Տէրոջս հետ կ'քալեմ, ալէլուիա,  
 Տէրոջս հետ կ'քալեմ, փառք անուան.  
 Ալ ոչ թափառիմ, միշտ վեր կը նայիմ,  
 Տէրոջս հետ կ'քալեմ եւ կ'խօսիմ:
2. Տարիներ կապուած էի, մեղաց կապերով,  
 Աշխարհս ոչ կ'օգնէր ինձ իր հաճոյքներով.  
 Հիմա թռչնիկի ու ճառագայթի պէս,  
 Ազատ եմ եւ ուրախ Տէրոջս հետ կ'քալեմ.  
 Տէրոջս հետ կ'քալեմ, ալէլուիա,  
 Տէրոջս հետ կ'քալեմ, փառք անուան.  
 Ալ ոչ թափառիմ միշտ վեր կը նայիմ.  
 Տէրոջս հետ կ'քալեմ եւ կ'խօսիմ:
3. Ո՛վ հոգի որ կ'ապրիս մեղաց տիղմին մէջ,  
 Ի՛նչ նայէ եւ Յիսուս թող գայ սրտիդ մէջ.  
 Փրկութեան ցնծութիւնն նա քեզ կը բերէ,  
 Եւ որք դու այն լոյսին Տէրոջդ հետ քալէ,  
 Տէրոջս հետ կ'քալեմ, ալէլուիա.  
 Տէրոջս հետ կ'քալեմ, փառք անուան.  
 Ալ ոչ թափառիմ միշտ վեր կը նայիմ,  
 Տէրոջս հետ կ'քալեմ եւ կ'խօսիմ:

436 ՀՈԳԻՍ ԿՐԾԱԵԿԷ ԵՍԱ. 4. 6.

A wonderful Saviour is Jesus. S. S. S. 540

1. Հիանալի Փրկիչ մ'է Յիսուս իմ Տէրս,  
 Հիանալի Փրկիչ մ'իսծի.  
 Հոգիս կը ծածկէ վէճին հովանոյն տակ,  
 Ո՛ր հրճուանք իբր գետ կը բլլիսի  
 Հոգիս կը ծածկէ նա վէճին շուքին տակ,  
 Այս չոր ծարաւուա երկրին մէջ.  
 Իմ կեանքս կը պահէ իր սիրոյն խորքին մէջ,  
 Եւ թեւերովն զիս կը ծածկէ,  
 Եւ թեւերովն զիս կը ծածկէ:
2. Հիանալի Փրկիչ մ'է Յիսուս իմ Տէրս,  
 Իմ բեռքս կը թեթեցնէ.  
 Ինք զիս կը բռնէ որ հաստատ ես կայնիմ,  
 Օրուանս համար ոյժ կ'հայթայթէ:  
 Հոգիս կը ծածկէ նա վէճին ...
3. Անթիւ օրհնութեամբ նա ժամերս կը լեցնէ,  
 Իր շնորհաց ճոխութեան շարժովն.  
 Սիրաս հրճուանքով կը յորդէ երբ փառք կու-  
 Այսպէս մեծ Փրկիչ մը համար: [ս.ս.մ,  
 Հոգիս կը ծածկէ նա վէճին ...
4. Փառաւորեալ մարմնով երբ ես վեր ելլեմ,  
 Օգին մէջ Զինք սլջուռնելու.  
 Կատարեալ փրկութիւն և սէրն հիանալի,  
 Իւր սրբոց հետ պիտի երգեմ:  
 Հոգիս կը ծածկէ նա վէճին ...

437 ՍՈՒՐԲ ՀՈԳԻ ԱՄԵՆԱԿԱԼ ՍԱԳՄ. 25. 5:

Ho'y Spirit faithful guide. S. S. S. 194

- 1 Սուրբ Հոգի Ամենակալ,  
 Ռահովիրոյ մեր անսըխալ.

Առաջնորդէ քաղցրօրէն,  
 Պանդուխտներօ վշտաց հովաէն.  
 Խոնջ հողիյ, մեր թող ցնծան,  
 Երբ լրսեն քու քաղցր ձայն,  
 Վ՛ր՛ վ պանդուխտ, յոգնա՛ծ, նըկո՛ւն,  
 Հետևէ ինձ զէպ ի տունն»:

2. Միշտ ներկայ, միշտ իրական,  
 Բարեկամ մայր աննրման.  
 Մի՛ թողուր անմըխիթար,  
 Մեզ՝ ցաւոց մէջ անհամար.  
 Երբ վշտաց ալիք բաղխին,  
 Եւ սրտերն մեր նըւալին.  
 Խօսէ ձայնովդ մեզմ սիրուն:  
 «Պանդուխտներ, եկէ՛ք ի տունն»:

3. Գործն ու կռիւն այս սուրբ մարտին,  
 Տէրօջմով երբ աւարտին.  
 Եւ կաւէ նաւն այս կիանքին,  
 Խորտակուի մօտ եզերքին.  
 Մինչ հրաժեշտ տանք այս երկրին,  
 Մերկ հոգիք մեր թող բերկրին.  
 'Ի լուր ձայնիդ մեզմ սիրո՛ւն,  
 «Պանդուխտներ, ա՛լ եկէք տունն»:

438 (104) ՄԻԻԹԱՐԻՉՆ ԵԿԱԻ ՅՈՎՆ. 14. 26:

Oh, spread the tidings round wherever. S. S. S. 198

1. Հրոչակէ լուրն բարի, ուր որ մարդ գտնուի,  
 Ուր որ ցաւ վիշտ յորդէ, մարդկային ջըրտերէ.  
 Փրկեալք միաբերան, հնչիցընեն այս ձայն.  
 Մըխիթարիչն եկաւ:

Մըխիթարիչն եկաւ, Մըխիթարիչն եկաւ,  
 Սը. Հոգին երկինքէն, արուեցաւ մեր Հօրմէն.  
 Հռչակէ լուրն բարի, յամենայն աշխարհի,  
 Մըխիթարիչն եկաւ:

2. Երկար գիշերն անցաւ, առսուտ ծագեցաւ,  
 Լըռեց ողբ սոսկալի, զայրոյթ փոթորիկի.  
 Օրուա՛ յոյսն բարձրանայ, ոսկի բլրան վըրայ,  
 Մըխիթարիչն եկաւ:  
 Մխիթարիչն եկաւ . . . :

3. Թագաւորաց արքայ, դարման թեւերուն վրայ,  
 Բերաւ գերի հոգւոյն, կատարեալ փրկութիւն.  
 Փրկեալ բերաններէ, երգ յալթութեան հնչէ,  
 Մըխիթարիչն եկաւ:  
 Մխիթարիչն եկաւ . . . :

4. Ո՛վ սէր Աստուածային, ի՛նչպէս չեզու իմին,  
 Պատմէ շունոր՝քն անհուն, ամէն կարօտներուն.  
 Որ բնակիմ ես իր քով, փայլիմ գէմքին լոյսով,  
 Մըխիթարիչն եկաւ:  
 Մխիթարիչն եկաւ . . . :

5. Թե՛ղ շուտ արձագանգեն, երկնից գմբեթներէն,  
 Բոլոր սուրբեր վերէն ի վար պատասխանեն.  
 Անվերջ սիրոյ շեշտով, և անմահ երգերով,  
 Մըխիթարիչն եկաւ:  
 Մխիթարիչն եկաւ . . . :

**439** (106, Ա Լ Է Լ Ո Ի Ի Ա Սաղմ. 150):

1. Ալէլուիա, փա՛ռք, փա՛ռք ալէլուիա,  
 Ալէլուիա, փա՛ռք, փա՛ռք ալէլուիա.  
 Փառաց պատուոյ յաւէտ արժան,  
 Դու ես միայն ո՛վ կենաց Բան.

Ալէլուիա, ալէլուիա,  
 Փառք, փառք, ալէլուիա:

2. Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա,  
 Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա,  
 Մեզ ցուցուցիր շնորհք անհուն,  
 Փառք ի բարձունս երգէ շնորհուն.  
 Ալէլուիա, ալէլուիա,  
 Փառք, փառք, ալէլուիա:

3. Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա,  
 Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա.  
 Անհուն դարեր մ. ջ երկինքի,  
 Փառք պիտ' ըլլայ մեր նիւթն երգի,  
 Ալէլուիա, ալէլուիա,  
 Փառք, փառք, ալէլուիա:

4. Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա:  
 Ալէլուիա, փառք, փառք, ալէլուիա.  
 Բոլոր աշխարհ փառքով յաւէտ,  
 Փառաբանենք, օ՛ն, սիրաւէտ,  
 Ալէլուիա, ալէլուիա,  
 Փառք, փառք, ալէլուիա:

440 (111) Օ՛ն Յ Ա Ռ Ա Ձ Ի Օրին. 31. 6:

Onward, christian soldiers. S. S. S. 706

1. Օ՛ն Փրկչին զինուորներ, օն յառաջ ի մարտ,  
 Խաչանիչ զբոցը ձեր, թող ծածանի յաղթ.  
 Քրիստոս մեր Տէր Արքան. առաջնորդ է մեզ,  
 Օ՛ն կռուինք յաղթական, բռնենք զբոցն ի վեր,  
 Օ՛ն Փրկչին զինուորներ, օն յառաջ ի մարտ,  
 Խաչանիչ զբոցը ձեր թող ծածանի յաղթ:

2. Տէրոջ եկեղեցին շարժի զերթ բանակ,  
Մեզ ալ պահուած է հին արքայ յազթանակ,  
Մընանք միշտ անբաժան մէկ սիրտ մէկ հողի,  
Սիրտին եղբայրութեան, յոյսովն հաւատքի,  
Օյ փրկչին զինուորներ . . . :
3. Դահեր կը կործանին ու պետութիւններ,  
Տէրոջ եկեղեցին կը մնայ աներեր.  
Դըժոխքին սեւ դըռներ յազթել չեն կարող,  
Զայն խոստացած է Տէրն անսուտ խոստումով,  
Օն փրկչին զինուորներ . . . :
4. Օն դուք ժողովուրդներ միացէք մեր խումբին,  
Խառնեցէք ձայն ալ ձեր յազթուծեան երգին.  
Փառք պատիւ մեր փրկչին, Թագաւորին մեր,  
Թող միշտ մեզ ձայնակցին մարդիկ հրեշտակներ,  
Օն փրկչին զինուորներ . . . :

#### 441 ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ Բ ՖԻՄ. 3. 16.

1. Ո՛հ, որչափ քաղցր է իմ հոգւոյս,  
Աստուածաշունչ մաստեան.  
Որ ներշնչեց ինձ կեանք և յոյս,  
Յուցուց կենաց ճամբան :
2. Իր սուրբ շուկերն կ'արծակէ,  
Իբրև ճըրագ պայծառ.  
Լուսոյ աշխարհն ինձ կը յայտնէ,  
Կ'ուզուէ քայլերս մոլար :
3. Տառապանաց այս ձորին մէջ,  
Հոգւոյս է մխլիթար.  
Կ'առաջնորդէ լոյսովն անշէջ,  
Կուտայ բերկրանք անճառ :

4. Պիտ՝ փայլի ան մինչև. մըթին,  
Գիշերն անցնի խաղառ.  
Մինչև ծագի փառաց կրկրին,  
Արևը մշտալառ:

## 442 (115) ՕՐՀԵՆԱԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅՈՒՆ.20 19՝

Far away in the depths of my spirit. S. S. S. 658

1. Աստուծոյ Սուրբ խօսքէն իմ սրտիս ձայն կու-  
Որպէս երգ հոգեչունչ ոգեզմայլ. [գայ,  
Կը բուժէ իմ ցաւեր իմ և ինձի ոյժ կուտայ,  
Զիս կ'ընէ միշտ խաղաղ անայլայլ՝  
Օրհնեալ խաղաղութիւն,  
Երկնաւոր Աբբայէս մեծ շնորհ.  
Քան ըզձով է խորունկ մընայուն աննըման  
Աստուծմէ իմ հոգւոյս միշտ դարման:
2. Աստուծոյ Որ. խօսքին մէջ գտայ այս մեծ գանձ  
Ոէր անճառ թանկագին պատուական.  
Հաւատքով ներս առի, սրտիս մէջ ուր պահ-  
Անաւեր կը մնայ յաւիտեան: ուած,  
Օրհնեալ խաղաղութիւն . . .
3. Յիսուսէն ըստացայ ես այս խաղաղութիւն,  
Զի փրկեց Ան զիս իմ մեղքերէս.  
Թող Անոր վստահիմ հաւատքով ալ լեցուն,  
Զի Ան միշտ կ'ազատէ փորձանքէն,  
Օրհնեալ խաղաղութիւն . . .
4. Ո՛հ ի՛նչ քաղցր է հիմա և ի՛նչ մեծ բերկրութիւն,  
Փրկչիս սէրը քեզի հաղորդել.

Որ դուն ալ ունենաս առ Աստուած հաշտուե-  
 եւ Անոր մօտենաս անարգել, [Թիւն  
 Օրհնեալ խաղաղութիւն...]

5. Երբ հասնինք ո՛վ բնկեր քեզի հետ ամպերը,  
 եւ տեսնենք մեր Փրկիչն դէմ առ դէմ.  
 Միասին հոն երգենք սրբոց հետ իւր սէրը,  
 Այս անոյշ և անվերջ երգ վըսեմ:  
 Օրհնեալ խաղաղութիւն ...

### 443 ՄԵՐ ՀԱՐՅ ՀՈՒԱՏՔԸ ՅՈՒ 19. 25:

Faith of our fathers! living still. S. S. B. 115

1. Մեր հարց հաւատքը կ'ապրի դուռ,  
 Բանտի, սուրի, հուրի հանդէպ.  
 Ո՛րքան կը բերկրին մօր սրտեր,  
 Երբ կը յիշենք զայս անվրէպ:  
 Մեր հարց հաւատք, դու սրբազան,  
 Պիտ' չը թողունք, քեզ յաւիտեան:
2. Մեր հարք բանտին մէջ շղթայուած,  
 Սրտով արի, խղճով աղատ.  
 Երբ հետեւինք մենք նոյն շաւղաց,  
 Կ'ըլլանք որդիքն մենք հարազատ:  
 Մեր հարց հաւատք, դու կենաց ջահ,  
 Պիտ' չը թողունք քեզ մինչ 'ի մահ:
3. Մեր հարց հաւատք, ոյժ երկնային,  
 Ազգերն պիտ' դան, քեզ խոնարհին.  
 Երբ մարդկութիւն կ'ընդունի քեզ,  
 Ե՛կ'ըլլոյ՛ աղատ ճշմարտապէս:

Մեր հարց հաւատք, ի Տէր վստահ,  
Պիտի պահենք քեզ մինչ ի մահ:

4. Աս պայքարին մէջ պիտ' սիրենք,  
Մեր բարեկամն ու թշնամին.  
Եւ վեհութիւնդ պիտ' հռչակենք,  
Բանիւ, կեանքով, սուրբ երկնային:  
Մեր հարց հաւատք, անվերապահ,  
Պիտ' քարոզենք քեզ, մինչ ի մահ:

**444** (123) ԱԻԵԼԻ ՄՕՏ ՔԱՇԻ 3 ովհ. 12. 23.

I am Thine o Lord. S. S. S. 607

1. Լքեսցի հրաւէրդ և եկայ Քեզի,  
Գիտեմ արդ Քուկդ եմ ով Տէր.  
Բայց կ'զգամ թռչիլ թե ովս հաւատքի,  
Ալ աւելի մօտ Քեզի:  
Զիս քաշէ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ,  
Այն խաչին ուր որ մեռար.  
Զիս քաշէ մօտ, ալ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ,  
Կողիդ արեան սրբարար:
2. Սրբագործէ զիս Քոյդ ծառայութեան,  
Հոգւոյդ շնորհքովն անդին.  
Թող Քեզի նայիմ յոյսով մ'անվաքան.  
Կամքս հըլու միշտ քու կամքին:  
Ձիս քաշէ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ . . .
3. Ո՛հ, ինչ քաղբ հրճուանք կուտայ ինձ այն ժամն  
Շընորհաց գահին առջև.  
Ծնրաղիւր Քեզ հետ մինչ հաղորդակցիմ,  
Իբր օրգւոյ և հօր միջև:  
Ձիս քաշէ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ . . .

4. Ձեռն կարող զխանալ սիրոյդ խորութիւն,  
 Մինչ անցնիմ ցուրտ Յորդանան,  
 Յեծմանց վեհ բարձունք կը մընան հեռուն,  
 Մինչև հասնիմ սուրբ Գանան:  
 Այս քաւտ մօտ, մօտ օրհնեալ Փրկիչ...:

## 445

Դ. Գ Ի Ք Ե Զ

Երբ. 12. 1.

1. Մթամած ամպեր երբ դան զիս պատեն,  
 Բարեկամք հանուր խոյս տալու ասեն,  
 Թող նայուածքդ Յիսուս չը դատուի աչքէս,  
 Որ յաւէտ խիղախ թըռչիմ դէպի Քեզ:  
 Յիսուս իմ շեշան ի քեզ,  
 Ձերթ տատրակ նետի պէս,  
 Աչանամ այս կեանքէս,  
 Դէպ ի վեր, դէպի ի Քեզ:
- 2 Թէ սև ապաղայ ու թոյնախառն հաց,  
 Իւ կեանքըս ըլլայ անվերջ ողբ ու լաց,  
 Թող Քու սէրդ անոյ՛ ըզգամ սաստկապէս,  
 Որ դիս յաւիտեան քաշէ դէպի Քեզ:  
 Յիսուս իմ շեշան ի Քեզ...:
3. Երբ ալեկոծի նաւակը կեանքիս,  
 Ու մահուան դէմքէն տխրի թոյլ հոգիս,  
 Թող քու աջդ Յիսուս ըըռնէ ձեռքերէս,  
 Որ ազատ անվախ սուրամ դէպի Քեզ:  
 Յիսուս իմ շեշան ի Քեզ...:
4. Ու երբ յեղակարծ հրեշտակը մահու,  
 Խըլէ կեանքն հէքիս ո՛հ, քու ձայնդ աղու.  
 Հնչէ ահանջիս քաղցրիկ սիրակէզ,  
 Որ շիրմէն ալ վեր նետուիմ դէպի Քեզ:  
 Յիսուս իմ շեշան ի Քեզ...:

## 446 ՀԱՅՐ ՄԵՐ ԳԹԱԾ Մատթ. 6. 9.

1. Հայր մեր գթած, բարեխնամ,  
 Հոգւոց ես բարեկամ.  
 Երկնից Տէրն ես եւ սրտից հիւր,  
 Ընկալ աղօթք մեր ըլւր:  
 Ձեռ սպասեր մարդ ծնրադրէ,  
 Քեզմէ միշտ շնորհք խնդրէ.  
 Թող մեր կեանք, գործ, երազ ու խօսք,  
 Ըլլան յար իբր աղօթք:
2. Սրտից խորը իղձեր տենչեր,  
 Թաղուած կան հոն ինչեր.  
 Բարի կամ չար, բաց կամ գաղտնի,  
 Ամէն ինչ քեզ յայտնի:  
 Մաքրէ աղօթք ու կեանք մեր սին,  
 Հաւատարէ Քուկին,  
 Մինչի մեզ տաս այս շնորհք ու փառք,  
 Ի ձուներ պիտի մնանք.
3. Մեզի համար լաւագոյն բան,  
 Դուն եւ թու կամքդ է ան.  
 Ո՛հ, տուր մեզ սէր, լոնլ միայն,  
 Արպէս լսենք թու ձայն:  
 Կամք թո մեր կամքին չի հակի,  
 Այլ ձուլուի, ըլլայ մի,  
 Երկնից դուռը ողբ, լաց ի դուր,  
 Մեր մէջ բռնկի թո հուր:
4. Դու մեզ փնտռես ի սէր դարով,  
 Բայց մենք լոկ մեր մտքով.  
 Բաց դռներէն ներս ուժդ ահեղ,  
 Թող խո. մէ իբր հեղեղ.  
 Ալ հեռուէն քեզ չենք փնտռեր,  
 Հրաշք, նշան չենք խնդրեր.  
 Ո՛հ, ջանք, աղօթք բաւ է, ի՛նչ փոյլի  
 Մինչ բոլորն ըլլայ թոյդ:

# ՀԱՒԱՏԱՑԵԱԼԻՆ ՊԱՅՔԱՐԸ

447 (127) ԽԱՉԻ ՃԱՄԲԱՆ, Մասթ. 16. 24.

1. Ճամբորդները ենք մենք երկինքի,  
Կ'առաջնորդե՛ մեզ Սուրբ Հոգի,  
Պէտք է՛ մեզի արձաթ, ոսկի,  
Գանձը ձըգողն թող գայ մեզի:
2. Տէր Յիսուսի հեռուող ենք,  
Իւր շաւղին մէջ կը քաղենք մենք,  
Պանդուխտներ ենք, օտարական,  
Պանդուխտ եղողներն շուտ թող գան:
3. Խաչակիրներ ենք շարունակ,  
Մեր պարձանքն է խաչը անարգ,  
Կը կենանք միշտ սուրբ խաչին տակ,  
Խաչ կըրողներն թող գան համակ:
4. Փըրկուած ենք սուրբ արիւնով,  
Շընորհք գտած ենք Անոր քով,  
Վըրկաներ ենք քաւիչ արեան,  
Փրկուածներն թող մեզ միանան:
5. Ձի հրապուրեր մեզ սուտ աշխարհ,  
Իւր վառքն ալ մեզ հրճուանք չի տար,  
Աշխարհէն մենք զատուած ենք յար,  
Փառք ձըգելու ո՞վ է յօժար:

448 ԽԱՉԻՆ ՁԻՆ ՈՒՈՐԸ ԲՏԻՄ. 2. 3.

Am I, a soldier of the cross? S. S. S. 672

1. Եթէ զինուոր եմ ես խաչին,  
Խաչէն ալ ամբընա՞մ:

Թէ հետեւող եմ Գառնուկին,  
 Զինք դաւանիլ վախնամ:  
 Անուամբ Քրիստոս Արքային,  
 Որ կեանք զընեց ինձ համար.  
 Շնորհքովն պիտ' հասնիմ պըսակին,  
 Կռուելով անդադար:

2. Ես ծաղկադարդ մահճի մը յիրայ,  
 Երկինք կրնամ տարուիլ.  
 Արդեօք ինձ թշնամի չիկա՞յ,  
 Ինձ հարկ չըկա՞յ կռուիլ:  
 Անուամբ Քրիստոս Արքային ...»

3. Արեան չափ կռուելով առին,  
 Շատերը մրցանակ.  
 Ծառայելով ես մարմինին,  
 Կ'առնե՞մ փառաց պըսակ:  
 Անուամբ Քրիստոս Արքային ...»

4. Եթէ երբեք կ'ուզեմ յաղթել,  
 Պէտք է պատերազմիմ.  
 Հաճէ, Տէ՛ր. զիս շնորհքովդ ընեւ,  
 Քաջ եւ հաւատարիմ:  
 Անուամբ Քրիստոս Արքային ...»

5 Այս փառաւոր մարտին մէջ, Տէ՛ր,  
 Սուրբերդ պիտի յաղթեն.  
 Եռուանց ալ հաւատոյ աչքեր,  
 Պըսակը կը սեռեն:  
 Անուամբ Քրիստոս Արքային ...»

449 (131) Փրկչին ԱԳԱԻՆՆԻՆ ՓԻՒ. 4. 6.

I must tell Jesus. O. H. 4

1. Փրկչիս պիտ' պատմեմ փորձութիւնս ամէն  
 Ալ չիմ կրնար այս բեռերս տանիլ.

Անկուսիներուս մէջ հըրդօր ապաւէն,

Փրկիչս կարող է հոգերս վանել:

Փրկչիս պիտ' պատմեմ, Փրկչիս պիտ' պատ-  
 ւել շեմ կրնար ես բեռներս տանիլ. [մեմ,  
 Պիտ' պատմեմ Փրկչիս, պիտ' պատմեմ Փրկչ-  
 Փրկիչս կարող է հոգերս տանիլ: [չիս:

2. Փրկչիս պիտ' պատմեմ տագնապններս ամէն,  
 Բարեկամս ու բարերարս է Այն.

Ձի Ան կ'ազատէ մեղքերուս ցաւէն,

Տաղնապններուս ալ կ'ատայ վախճան:

Փրկչիս պիտ' պատմեմ . . . .

3. Փորձութեան մէջ իմ Փրկչիս պէտք բունիմ,  
 Օգնական է Այն, բեռներ տանող.

Փրկչիս պիտ' երթամ բեռներըս տանիմ.

Այն վշտակիրս է սուրբ ու կարող:

Փրկչիս պիտ' պատմեմ . . . .

4. Ո՛հ, որչափ դառն է կեանքն այս աշխարհիս,

Ո՛հ, որչափ խորին մեղաց վէրքեր.

Փրկչիս պիտ' պատմեմ ցաւերս նոր ու հին,

Անով պիտ' յաղթեմ ամէն մեղքի:

Փրկչիս պիտ' պատմեմ . . . .

**450** Ձ Գ Ո Ւ Շ Ո Ւ Թ Ի Ի Ն Դուկ. 21. 36:

1. Հո՛գիս. դգոյշ կեցիր,

Թշնամիներդ շատ են.

Մեղաց զօրքն ալ դժոխք, երկիր,

Քեզ կործանել կ'ուզեն:

2. Ազօթքը մի՛ ձգեր,

Արթուն կեցիր միշտ դուն.

Պատերազմէն ետ մի՛ քաշուիր,

Ինդրէ Տեառն օգնութիւն:

3. Գաղթող քեզ չրկարծես,  
 Զէնքերըդ մի՛ ձըցեր.  
 Զի գործդ պիտի չ'հատցուենես,  
 Մինչև հասնիս դուն վեր:

## 451 ՏԷՐՆ ՔԵԶ ՊԻՏԻ ՀՈԳԱՅ Ա. ՊԵՄ. 5. 7.

Do not dismay whatever betide. S. H. 32

1. Մի՛ վախնար ինչ որ պատահի,  
 Տէրն պիտի քեզ հոգայ.  
 Իւր թեւոց սակ առ հովանի,  
 Տէրն պիտի քեզ հոգայ:  
 Տէրն պիտի քեզ հոգայ,  
 Ուր որ ըլլաս ինք հանապաղ,  
 Այո՞ պիտի հոգայ.  
 Տէրն պիտի քեզ հոգայ:
2. Յոգնած մարմինդ երբ նուաղի,  
 Տէրն պիտի քեզ հոգայ.  
 Եւ կամ փորձանք գայ կատաղի,  
 Տէրն պիտի քեզ հոգայ:  
 Տէրն պիտի քեզ հոգայ...:
3. Կը լիցընէ պէտքերդ բոլոր,  
 Տէրն պիտի քեզ հոգայ.  
 Եւ շրնորէք տայ քեզ օրէ օր,  
 Տէրն պիտի քեզ հոգայ:  
 Տէրն պիտի քեզ հոգայ...:
4. Թող թշնամիք շանթեր տեղան,  
 Տէրն պիտի քեզ հոգայ.  
 Իւր կուրծքն ըրէ՞ քեզ ասպատան,  
 Տէրն պիտի քեզ հոգայ:  
 Տէրն պիտի քեզ հոգայ...:

## 452 ԿԸ ՀՈԳԱՅ ԱՆ ԵՍԱ. 46. 4:

- Արթուն աչքեր, շօրս երկնային,  
Վերէն վրաս կը նային.  
Գիշեր ցորեկ ու հանսպազ,  
Ան կը հսկէ իմ վրաս.  
Սիրով մ'անխառն, սիրով մ'անհուն,  
Կը հսկէ Հայրըս օրն ի բուն:  
Այո՛, այո՛, կը հսկէ Ան,  
Կը հսկէ Հայրս Աստուած.  
Այո՛, Իր խոստումն անըման,  
Ու իմ վայելքս է Ան:
2. Արթուն աչքեր, շօրս երկնային,  
Վերէն վրաս կը նային.  
Մուտ է ճամբաս, վրտանգներ կան,  
Ան՝ ընկերս պատուական.  
Կասկած չունիմ ու ոչ վախեր,  
Ան առաջնորդս է անվիհեր:  
Այո. այո կը հսկէ . . . :
3. Արթուն աչքեր, շօրս երկնային,  
Վերէն վրաս կը նային.  
Անտուն անաէր թափառական,  
Սիրոյն եմ առարկան.  
Աշխարհ կ'անցնի, կ'անցնին ցաւեր.  
Շօրս բազկաց մէջ հանդիմ հս վեր:  
Այո, այո կը հսկէ . . . :

## 453 (145) ԼԻՈՎԻՆ ՎՍՏԱՀԻՎ Սաղմ. 55. 22:

All my doubts I give to Jesus. S. S. S. 868

1. Կը բերեմ հս Տէր Յիսուսի,  
Ամէն հոգս, կասկածներըս.

Լըսած եմ խօսքը սիրելի,  
 Երբ որքեր զիս բնաւ իմ Տէրս,  
 Վստահած եմ ես լիովին,  
 Իր խոստումն է անսասան.  
 Վստահած եմ ես լիովին.  
 Ան ինձ հետ է յաւիտեան:

2. Կը բերեմ ես իմին Փրկչիս,  
 Իմ ամէն մեղքս, վերքերս բիւր,  
 Իր արեամբ սուրբ կը լուս զիս,  
 Կ'ընէ սիրտս ամբիժ մաքսւր:  
 Վստահած եմ ես լիովին . . .

3. Կը բերեմ ես Տէր Յիսուսի,  
 Իմ ամէն վիշտս, ամէն վախ.  
 Իր սիրովը վախս կ'անհետի,  
 Սիրտս կ'ըլլայ խաղաղ, ուրախ:  
 Վստահած եմ ես լիովին . . .

#### 454 (148) Յ Ե Ն Ո Ի Մ Բ Օրին. 33. 27.

What a fellowship, what a joy divine. Alex. 48  
 S. S. S. 6-17

1. Ո՛հ, ի՛նչ բերկրութիւն վայելք երկնային,  
 Յենում յաւիտենական բազկաց.  
 Ի՛նչ մեծ օրհնութիւն ե. խաղաղութիւն,  
 Յենում յաւիտենական բազկաց:  
 Յենում, յինում,  
 Ապահով, անվախ, անկասկած,  
 Յենում, յինում,  
 Յենում յաւիտենական բազկաց:
2. Ո՛հ, ի՛նչ քաղցր է այս երկնային ճամբան,  
 Յենում յաւիտենական բազկաց.

Լոյս պայծառ ծագի միշտ ճամբուս վրայ,  
Յենուժ յաւիտենական բազկաց՝  
Յենում, յենում...:

3. Բընաւ վախ չունիմ, ոչ այ հոգ ճնշող,  
Յենուժ յաւիտենական բազկաց.  
Իմ Տէրս միշտ է մօտ և ինք է կարող,  
Յենուժ յաւիտենական բազկաց՝  
Յենում, յենում...:
4. Թող դեք յարձակին, չարին զօրքն անթիւ,  
Յենուժ յաւիտենական բազկաց.  
Սատանան ոտքիս սակ պիտ՝ խորտակուի,  
Յենուժ յաւիտենական բազկաց՝  
Յենում, յենում...:

## 455 ԴՈՒՆ ԵՍ ԻՄ ՎԷՄՍ Սաղ Բ. 31. 2:

Thou art my rock o blessed Redeemer. S. S. S. 525

1. Դուն ես իմ վէմըս, Օրհնեալ Փրկիչ իմ,  
Ապաստանարանս պաշտպանուելիք.  
Դուն ես իմ վէմըս, ուր պատվօպարուիմ,  
Յան ու վիշտերէն ինձի գալիք:  
Դուն ես իմ վէմըս, ո՛վ օրհնեալ Փրկիչ իմ,  
Բարեկամըս, և առաջնորդըս.  
Դուն ես յոյսըս, և Դուն ես Փրկիչըս,  
Վըստահուժիւնս ես, մէջդ պահպանու մ:
2. Դուն ես իմ վէմըս երբ մեղքն հրապուրէ,  
Դուն ես իմ վէմըս երբ փորձանք գայ.  
Դուն ես իմ վէմըս երբ վիշտը սուր է,  
Դուն ես իմ վէմըս ալ վախ չի կայ.  
Դուն ես իմ վէմս...:

3. Դուն ես իմ վէճըս երբ՝ փորձանք գրղռէ,  
Բարեկամըս մօտ և հարազատ.  
Հոգիս քու վըրայ յոյսը կը դընէ,  
Պահելու համար դիս անարատ:  
Գուն ես իմ վէճըս . . . .
4. Դուն ես իմ վէճըս երբ իշխանութեանց,  
Եւ ազգերու զօրութիւնք իյնան.  
Դուն պիտի մընաս վէճը փրկութեանս,  
Ի՛վ անշարժ վէճ, մէջդ մընամ յաւիտեանս:  
Գուն ես իմ վէճըս . . . .

### 456 (150) ՄԻԱՅՆ ՔԵԶՄՈՎ. Մատթ. 17. 9.

Only in Thee, O savior mine. S. H. W. 153

1. Միայն Քեզմով, ո՛վ իմ Փրկիչս,  
Խաղաղութիւն ունի հոգիս.  
Զոր ոչ մի ոյժ այս աշխարհիս,  
Կարէ խրլել ինձմէ:  
Հաճոյք երկրիս՝ ըլլան որքան քաղցր,  
Իմ փառաքններս բընաւ չեն լիցուած.  
Քեզմով միայն եմ ես յագեցած,  
Տէր իմ միայն Քեզմով:
2. Միայն Քեզմով ով յոյս փայլուն,  
Յրուին ամպեր և մըթութիւն.  
Իրբ մի փարոս կենաց ծովուն,  
Ի՛էջ Դուն կ'առաջնորդես:  
Եւ երբ յարձակի խիտ փորձութիւն,  
Քեզմով ունիմ ես միշտ յազմութիւն,  
Եւ երկնային, սուրբ խաղաղութիւն,  
Տէր իմ միայն Քեզմով:

3. Միայն Քեզմով երբ օրն մըթին,  
Արեւն աստղերն ալ խաւարին,  
Վախ չէ կարող կասել իմին,  
Երգը վստահութեան,  
Ինչ որ ըլլայ միշտ Քեզմով միայն,  
Լեցուին իմ կենացս պէտքերն համայն,  
Դու ես միայն ինձի միշտ պաշտպան,  
Տէր իմ միայն Քեզմով:
4. Միայն Քեզմով որ տեղս մեռար,  
Քու սուրբ արեամբըդ քաւչարար,  
Մեղքէս մաքրուած եմ ես արդար,  
Քեզմով, միայն Քեզմով,  
Դու ես միայն իմ ուրախութիւնս,  
Մինչև հասնիմ ես երկիրն փայլուն,  
Ուր ի՞մ հաւատքս ըլլայ տեսութիւն,  
Տէր իմ միայն Քեզմով:

### 457 Ա Պ Ա Ղ Ո Վ, Ե Մ Սաղմ. 27. 5.

As a tree beside the water. S. H. W. 154

1. Զուրերու քով ծառի նըման,  
Տէրը զիս կ'աճեցընէ.  
Որ արտադրեմ պտուղ լըման,  
Եւ ապրիմ վեր յաւիտեան:  
Ես եմ ապահով,  
Ես եմ ապահով.  
Անչարժ վէմին վըրայ հաստատ,  
Ես եմ ապահով:
2. Կատաղի այս ալեաց մէջէն,  
Դէպ ի վեր Քեզ կը նայիմ.

Չի շունիմ ես այլ ապաւէն,  
Թոյլ սուր, քեզ զիմեմ Տէր իմ,  
Ես եմ ապահով . . . :

3. Թէ տառ'պանք շուրջըս պատեն,  
Ըլլան բաժինս դառն ցաւեր.  
Երբ իր շնորհքը փայլի վերէն,  
Լոյս ծագի մերձի գիշեր:  
Ես եմ ապահով . . . :

4. Ո՛հ, հոն կայ ցնծութիւն անհուն,  
Երբ միանամ սուրբ Գառնին.  
Եւ ժառանգեմ պըսակ փայլուն,  
Արեամբ փրկուած հետ խումբին:  
Ես եմ ապահով . . . :

## 458 ԽԱՉԻՆ ԴՐՅԸ ԵՍԱ. 59. 19.

1. Պարզենք մեր զբօն մեր սիրած խաչին,  
Երգելով ժողովունք շուրջն Անոր.  
Փառք գովեստ սալով Աստուծոյ Գառնին,  
Որ Տէրն է մեր Թագաւոր:  
Ողջոյն քեզ զբօն սիրած խաչին,  
Պիտ' երգենք մինք ձրի փրկութիւն.  
Քանի որ հնք հոս մէջ վշտաց ձորին,  
Տէրն ըլլայ երգ մեր հոգւոյն:
2. Վեր բռնենք զբօն մեր սիրած խաչին,  
Հոգակենք միշտ Անոր յայլութիւն.  
Ո՛հնչե որ լսին աղչեր աշխարհի,  
Վրայով Տեսան խաչելոյն:  
Ողջոյն լեզ զրօսն սիրած խաչին . . . :
3. Թագեր և գահեր երբոր դառնան հող,  
Զբքանայ անոնց փսոքն ու պերճանք.

Արիւնաներկ զրօշն Փրկչին խաչեալ,  
 Պիտ' ըլլայ միշտ մեր պարծանք:  
 Ողջոյնի քեզ դրօշն սիրած խաչին . . .

**459** ՅԱՂԹՈՒԹԻԻՆՆԻՆՔ ՄԵՐՆ Է Ա ԿՈՐԻՆ. 15. 57.

The victory is mine. Sl. H. 126

1. Մերն է յազթանակ, մերն է յազթանակ,  
 Մինչ մեր զօրապետ Յիսուս է միակ,  
 Յազթենք թշնամեաց, Իւր բազկին յենած,  
 Սիրով զեղուն մենք քալենք ներդաշնակ,  
 Միշտ վստահ ի Տէր. միշտ վստահ ի Տէր,  
 Միշտ վստահ ի Տէր, Կամանուէլն, Վե՛հ  
 Արքայն մեր:

2. Մերն է յազթանակ, մերն է յազթանակ,  
 Խոստմանց բովանդակ, առնենք մեր ճաշակ.  
 Յարուցեալք 'ի Տէր, քալենք անվեհեր,  
 Չենք ըզգար մինակ, կայ յերկնից բանակ,  
 Միքս վստահ ի Տէր . . .

3. Մերն է յազթանակ, մերն է յազթանակ,  
 Իւր խօսքերն շիտակ մեր ոտից ճրագ.  
 Քայլերնուս գիտակ, քալենք անսայթաք,  
 Յառա՛ջ շարունակ, կա՛յ փառաց պսակ,  
 Միքս վստահ 'ի Տէր . . .

**460** ՔՐԻՍՏՈՍԻ ՉԻՆՈՒՈՐԸ ԵՎԵԱ. 6. 10—18.

Երգ սղոց 226

1. Այս կեանքս պստերազմ է և մենք զինուորն եւ,  
 Սեղսցու գեւին գէմ պիտի մարտըն չինք.

- Իրաւ խորամանկ են մեր թշնամիներ,  
 Բայց մենք ըզբրիտառս Զօրապետ մերն ունինք,  
 Կանգնէ Յիսուսի համար ո՛վ քրիստոնեայ,  
 Քեզի համար ինք կախուհցաւ խաչին վրայ  
 Դուն ալ մի՛ վախնար՝ Տէրօ՞ջըդ համար,  
 Կանգնէ և եղիբ քաջ վրկայ՝
2. Աստուած կը բանայ քեզ իրեն զինարան,  
 Կը հագուեցնէ ըզքեզ արդարութեամբ.  
 Քըլխուդ սաղաւարտ կուտայ յոյս փրկութեան  
 Եւ մէջքըդ կ'ընէ ամուր ճշմարտութեամբ:  
 Կանգնէ Յիսուսի համար...:
3. Իր խօսքը մեր ձեռքն ունինք սուր երկսայրի,  
 Վահան հաւատոյ մեզ կ'ընէ անվրտանգ.  
 Մեր շաւիղներուն վրայ սուրբ լոյս կը փայլի,  
 Ուստի Տէրոջմով զօրաւոր միշտ կ'ըլլանք՝  
 Կանգնէ Յիսուսի համար...:
4. Արթուն կենալով և աղօթք ընելով,  
 Բոլոր մեր դէնքերն կը մընան միշտ փայլուն,  
 Եւ մենք Յիսուսի օգնութեամբ ապահով,  
 Կ'ըլլանք և Անոր շնորհքովը հաստատուն:  
 Կանգնէ Յիսուսի համար...:
5. Անթիւ փորձութեանց պիտի հոս հանդիպինք,  
 Սակայն Քրիստոսով ամէնուն կը յաղթենք.  
 Եւ Յորդանանու ջուրերէն երբ անցնինք,  
 Մեզի համար զինք հոն կանգնած կը տեսնենք՝  
 Կանգնէ Յիսուսի համար...:

**461** Յ Ա Ղ Թ Ո Ի Թ Ի Ի Ն, Յովհ. 16. 33:

Hallelujah, what a thought. S. H. C. 108

1. Փա՛ռք Գառին, ի՛նչ խորհուրդ վի՛հ,  
 Փրկութիւն մեզ բերած է.

Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն,  
 Մեղքն ոյժով թող յարձակի,  
 Երկնից սէր պիտ' չըմարի:

Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն,  
 Յաղթուծի՛ւն, այո՛, յաղթուծի՛ւն,  
 Ալէլուիա՛, աղասուած,  
 Յիսուսով յաղթող եղած,  
 Ալէլուիա՛, փառք Իր անուան,  
 Տէրն է ինձի ամէն բան:

2. Վստահած եմ իմ Տէրոջ,  
 Ամբապնդուած խօսքին մէջ.  
 Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն,  
 Մեղքերս ներուելէն հետէ,  
 Յնձուժ խինդ միշտ իմ հետ է:  
 Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն ...

3. Հռչակէ աղատուծիւնդ,  
 Մնայուն խաղաղուծիւնդ,  
 Եւ դոչէ յաղթուծի՛ւն,  
 Երդէ, ո՛հ, միշտ յաղթուծի՛ւն,  
 Դիմադրելով թշնամւոյն:  
 Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն ...

4. Երբ այս կիանքը վերջանայ,  
 Այս վե՛հ երգն զևու պիտ' մընայ.  
 Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն,  
 Փրկեալ խումբ հոս երգեցէք.  
 Երկնից երգն սկսեցէք:  
 Յաղթուծի՛ւն, յաղթուծի՛ւն,  
 Յաղթուծի՛ւն, այո՛, յաղթուծի՛ւն.  
 Ալէլուիա՛, աղասուած,  
 Յիսուսով յաղթող եղած,  
 Ալէլուիա՛, փառք Իր անուան,  
 Տէրն է ինձի ամէն բան:

## 462 Կ Ա Յ Մ Օ Տ Խ Ա Ձ Ի Ն Ա Կ ո Ր Ն . 1 . 18 :

Stand by the cross soldier. Sl. H. 38

1. Կա՛ց մօտ խաչին դու զինուոր արի,  
Մինչ վառլի արեղակ.  
Կա՛ց մօտ խաչին, երբ շուքն երկարի,  
Շուտ պիտ՝ հասնի մեզ յերկնից բանակ՝  
Կաց մօտ խաչին զինուոր կաց,  
Յաղթանակը չէ հեռուն.  
Կա՛ց մօտ խաչին զինուոր կաց,  
Մահուան մէջ կայ յաղթութիւն:
2. Կա՛ց մօտ խաչին մինչ օրն վախճանի,  
Կա՛ց անյողողդ մինչ վերջ.  
Կա՛ց պատերազմը երբ մոչեզնի,  
Ձի կ'ըսպասէ քեզ պսակ մը պերճ:  
Կա՛ց մօտ խաչին զինուոր կաց . . . :
3. Կա՛ց մօտ խաչին երբ անյողթ և քաջ,  
Պահէ զիրքդ անսասան.  
Ոյժն խաւարին շուտ կ'ընէ նահանջ,  
Յաղթահարուած և ոտից կոխան:  
Կա՛ց մօտ խաչին զինուոր կաց . . . :
4. Կա՛ց մօտ խաչին, միչ գայ Տէր Արքայն,  
Կա՛ց կեանքով մանրասիր.  
Յորժամ պիտ՝ լըսես իւր քաղցրը ձայն,  
Վա՛ր դիր զէնքերդ և հանգիստդ մտիր՝  
Կա՛ց մօտ խաչին զինուոր կաց,  
Յաղթանակը չէ հեռուն.  
Կա՛ց մօտ խաչին զինուոր կաց,  
Մահուան մէջ կայ յաղթութիւն:

463 (160) ԲԵՐԴՐ ՊԱՀԵՅԷՔ ՆԱՌՈՒՄ 2. 1:

Ho, my comrades! see the signal. S. S. S. 669

1. Քաջ եղէք ո՛վ եղբայրներս,  
 Մօտ է օգնութիւն,  
 վերը կ'երևենայ նշանը,  
 Ստոյգ է յազմութիւն,  
 «Շուտ կու գամ» կ'ըսէ մեր Տէրը,  
 «Բերդը պահեցէք».  
 Կը պահենք Տէր Բու շնորհքովըդ,  
 Պատասխան տուէք:
  
2. Մեր յանդուգն թշնամիները,  
 Բազմութեամբ կուգան.  
 Եւ անոնց չար զօրապետը,  
 Ինքն է Սատանան,  
 «Շուտ կուգամ» կ'ըսէ մեր Տէրը...
  
3. Պանծաբի է մեր դրօշակը,  
 Փողը կը լըսենք.  
 Մեր զօրապետին անուամբը,  
 Պիտ' անշուշտ յազմենք,  
 «Շուտ կուգամ» կ'ըսէ մեր Տէրը...
  
4. Դառն երկար է պատերազմը,  
 Սակայն դիմացէք.  
 Մեր անյազմ զօրագլուխը,  
 Մօտ է քաջ եղէք.  
 «Շուտ կուգամ», կ'ըսէ մեր տէրը,  
 «Բերդը պահեցէք».  
 Կը պահենք Տէր Բու շնորհքովըդ,  
 Պատասխան տուէք:

## 464 (176) ԳԵԶ ԶԵՄ ՔՈՂՈՒՐ ԵՐԲ. 13. 5:

Sweet is the promise. 2 Alex. 118, F. II. 5

1. Քաղցր է այս խոստում «Քեզ պիտի չըմոռնամ»  
 Իմ հոգիս շարշարել ալ ի՛նչ բան կընայ,  
 Մահուան ձորին մէջ իսկ պիտի չըվախնամ,  
 Զի լոյս փայլի հոն, ոսկեղէն եզրին վրայ:  
 «Ես քեզ չեմ մոռնար, քեզ չեմ թողուր,  
 Ես ձեռքէդ կը բռնեմ բազկացքս մէջ կ'առնեմ  
 Ես քեզ չեմ մոռնար, քեզ չեմ թողուր,  
 Ես քու Փրկիչըդ եմ, քեզ կը խընամեմ:
2. «Քեզ չեմ թողուր» խոսքիդ վստահելով միշտ,  
 Տէ՛ր. յառաջ կ'երթամ երգով ու ցնծումսով:  
 Աշխարհ և բարեկամք թէպէտ սառն ինձ վիշտ,  
 Հոգիս կ'ըստփոփի քու անոյշ խոստումով:  
 «Ես քեզ չեմ մոռնար...»
3. Ա՛հ, երբ ոսկեղէն դրան առջև ես կ'այնիմ,  
 Պիտի չքանան բոլոր վիշտ ու ցաւերս.  
 Հոն հրճուանօք լսեմ ձայն վեհ Տէրօջն իմ,  
 «Ապրի՛ս, բարի ծառայ ներս մտիր առ իս»:  
 «Ես քեզ չեմ մոռնար...»

## Ա Ի Ե Լ Ի Կ Ե Ա Ն Ք

465 (182) ՄԱՔՐՈՒԱՊ ԵՍ Սաղմ. 51. 2—7.

Have you been to Jesus for...? S. S. S. 379

1. *Յիսուսի գացա՞ծ ես որ սրբէ քեզ նա,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ,  
Վատա՞ն ես իւր շնորհաց լիովին հիմա,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ,  
Լուացուա՞ծ ես սուրբ, մաքուր  
Գառնուկին զուտ արեամբ պատուական.  
Լաթերդ չե՞ն ալտ ու մուր, ճերմակ աննրման  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ:*
  
2. *Փրկչին հետ կը քալե՞ս ամէն օր արդեօք,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ,  
Կը հանդչի՞ս Խաչուսի մէջ զու միշտ անհող,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ:  
Լուացուա՞ծ ես ...:*
  
3. *Երբ փեսան դայ պիտ' գտնէ՞ հանդերձ յարմար  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ.  
Հողիդ պատրաստուա՞ծ ե պայծառ, դուն յարմար,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ:  
Լուացուա՞ծ ես ...:*
  
4. *Դիր մէկդի մեղքերէդ աղտոտած լաթերդ,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ.  
Մշտահոս աղբիւր մը կը հոսի մօտէդ,  
Լուացուա՞ծ ես Գառնուկին սուրբ արեամբ:  
Լուացուա՞ծ ես ...:*

## 466 Խ Ո Ն Ա Ր Լ Ե Յ Ո Ի Ր Ս ա գ մ . 50 . 17 .

(How can a weary heart find rest.) S. V. 406

1. Խոնարհեցուր Դու զիս ո՛վ Տէր,  
Առաւտառն ինչպէս շունչովդ,  
Խոնարհեցնես ցորնի հասկեր,  
Ոյնպէս զիս ալ ծըռէ Հոգւովդ :
2. Եւ երբ չար սիրտս է հակառակ,  
Հոգւոյդ գործին իմ ներսիդին,  
Տէր զօրութեանց իբրեւ կրբակ,  
Եկ ըսպառէ թաքուն մեղքերս :
3. Այիքն ինչպէս փոթորիկին,  
Տեղի կուտայ խոնարհաբար,  
Եւ խորտակի վրայ եղերքին .  
Այնպէս կտարէ, օրհնէ, զիս Հայր :
4. Եւ Որդին ճիւղն ինչպէս լրման,  
Կը յանձնուի այգեպանին .  
Ես ալ փնտռեմ ինձ ոչ մի բան,  
Այլ խոնարհիմ միշտ Քու առջին :
5. Տէր զիս ծըռէ զի ես կաւ եմ,  
Եւ անարժէք, ո՛հ, Քեզ համար,  
Շինէ անօթ մը այս կաւէդ,  
Որ Քեզ պատուեմ հեզ և խոնարհ :

## 467 (187) ՇՆՈՐՀՔԸ ՀԵՐԻՔ Է Բ ԿՈՐՆ . 12 . 9 .

His grace was sufficient for me. Alex. 101

1. Քու շնորհքըդ հերիք է ինձի,  
Երբ վախով մօտենամ կողիդ արիւնջըւայ,

Դու ձեզքէս կը մաքրես նոր սիրտ կը պարգևես  
 Քու շնորհքըդ հերիք է ինձի:

Ինձի, ինձի, Քու շնորհքըդ հերիք է ինձի,  
 Ինձի, ինձի, Քու շնորհքըդ հերիք է ինձի:

2. Քու շնորհքըդ հերիք է ինձի:

Ինչ որ ալ պատահի, դու զիս պահես պիտի:

Ես միշտ եմ ապահով, որչափ մընամ քու քով,

Քու շնորհքըդ հերիք է ինձի:

Ինձի, ինձի . . . .

3. Քու շնորհքըդ հերիք է ինձի:

Դուն կը հոգաս պէտքերս, յերկինս կ'ուղղես  
 քայլերս,

Երբ անցնիմ ձորն մահուան, ինձ կ'ըլլաս ա-

Քու շնորհքըդ հերիք է ինձի: [պատասան,

Ինձի, ինձի . . . .

4. Քու շնորհքըդ հերիք է ինձի:

Վերին տունս երբ հասնիմ, այս թող ըլլայ երգն իմ

եւ վառք տամ յաւիտեան իմ Տէրջո Սուրբ

Քու շնորհքըդ հերիք է ինձի: [անուան,

Ինձի, ինձի . . . .

468 ԱՆՅԱԻՈՐ ՊԱՆԴՈՒԻՏ Ա ՊԵՍ. 2. 11.

1. Ես անցաւոր պանդուխտ մըն եմ,  
 Ինչո՞ւ ձեզ պաշտուեմ ինչպէս:

Միայն Փրկիչ Տէրըս սիրեմ,

2. Ես անցաւոր պանդուխտ մըն եմ,

2. Օր մը կ'իտանքըս կը վերջանայ,

Տեսածներըս կ'ոչնչանայ:

- Մարմնոյս ուժը կը վերճանայ,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
3. Ես չեմ ուզեր վառք մեծութիւն,  
 Կամ աշխարհիս իշխանութիւն,  
 Դատըն կենաց ուրախութիւն,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
4. Ոսկի, արծաթ, հարըստութիւն,  
 Զեն տար մարդուս երջանկութիւն,  
 Կ'ուզեմ երկնից արքայութիւն,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
5. Պէտք չէ խարսիմ այս բաներուն,  
 Որ չունենար հտքը նորէն,  
 Շնորհք կ'ուզեմ երկնից շօրմէն,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
6. Անցաւոր է բոլոր աշխարհ,  
 Իւր անսուն է ունայն աշխարհ,  
 Ես եմ Փրկչիս հօտին ոչխար,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
7. Բոլոր մարդիկ կը թափառին,  
 Հաստատուն կեանք չունի ոչ մին,  
 Պէտք չէ ցանկամ այս բաներուն,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:
8. Աշխարհի մէջ չունիմ տուն տեղ,  
 Իեղճ մուացի քանիցըս հեղ,  
 Աւտարան է հոգւոյս դեղ,  
 Զի անցաւոր պանդուխտ մըն եմ:

469 (193) Հ Ի Ն Ա Ն Տ Ա Շ Խ Ա Ձ Գ աղ. 6. 14.

On a hill far way stood an old. Տl. Str. S. 51

1. Հեռուն շեռան զլրբայ, կայ մի հին անտաշ խաչ,  
 Նշան ամօթի ու չարչարանաց.  
 Կը սիրեմ այն հին խաչն, ուր իմ Տէրս սիրելի,  
 Խաչուեցաւ փրկութեան աշխարհի:  
 Ուստի սիրեմ այն հին անտաշ խաչն,  
 Խինչ կեանքի փորձութիւնք զերջանան,  
 Պիտ՝ յարիմ այն հին անտաշ խաչի,  
 Եւ մի օր փոխեմ զայն պըսակի:
  
2. Ո՛հ այն հին անտաշ խաչն, մերժուած աշխար-  
 Ունի ինձ մի քաշող զօրութիւն. [հէն,  
 Զի Գառնուկն Աստուծոյ, թող՛լով զերն իր  
 Կըրեց զայն զէպի սև Գողգոթա: [փառքը,  
 Ուստի սիրեմ այն հին անտաշ խաչն ...:
  
3. Սուրբ արեամբ ներկուած, մէջ այդ անտաշ  
 Տեսնեմ հիանալի գեղեցկութիւն. [խաչին,  
 Զի այն հին խաչին վրայ, չարչարուեցաւ Յիսուս,  
 Փրկելու զիս իմ մեծ մեղքերէս:  
 Ուստի սիրեմ այն հին անտաշ խաչն ...:
  
4. Այն հին անտաշ խաչին մընամ հաւատարիմ,  
 Իր ամօթն ուրախութեամբ կըրեմ.  
 Երբ նա օր մը կանչէ զիս հեռուն զերին տունն  
 Ուր յաւէրժ պիտի երգեմ իր սէրն:  
 Ուստի սիրեմ այն հին անտաշ խաչն ...:

## 470 (195) Մ Ի Ա Յ Ն Ա Յ Ո Ր Մ ա ս թ . Գ . 3 1 :

Lord, for to marrow... N. H. 37. S. H. W. 393

1. Վաղուայ հոգերուն համար Տէր,  
Չեմ աղաչեր.  
Պահէ զիս Տէր մեղաց թոյնէն,  
Այսօր միայն.  
Այսօր միայն, այսօր միայն,  
Պահէ զիս Տէր մեղաց թոյնէն,  
Այսօր միայն.
2. Տէր ժըրաջան ալ գործելով,  
Միշտ աղօթքով.  
Գործերուս մէջ միշտ քաղցր ըլլամ.  
Այսօր միայն.  
Այսօր միայն, այսօր միայն,  
Գործերուս մէջ միշտ քաղցր ըլլամ.  
Այսօր միայն.
3. Չընեմ պարապ. սխալ գործ մը,  
Անհոգ խօսք մը.  
Դիր կընիքդ շուրթներուս վրայ,  
Այսօր միայն.  
Այսօր միայն, այսօր միայն,  
Դիր կընիքդ շուրթներուս վրայ,  
Այսօր միայն.
4. Վաղուան հոգերուն համար Տէր,  
Չեմ աղաչեր.  
Սիրովդ Տէր հսկէ իմ վրաս,  
Այսօր միայն.  
Այսօր միայն, այսօր միայն,  
Սիրովդ Տէր հսկէ իմ վրաս,  
Այսօր միայն.

## 471 Բ Ե Ձ Ի Հ Ա Մ Ա Ր Բ Կորն. 5. 15.

My life my love, I give to Thee. N. II. 182

1. Իմ կեանք, իմ սէրս կուտամ Բնդի,  
Գառն Աստուածոյ Գողգոթայի.  
Որ մահուամբդ կեանք արւիր ինձի,  
Փրկիչս և իմ Աստուած:  
Պիտի ապրիմ Բնդի համար,  
Որ խաչին վրայ վասն իմ մեռար,  
Եւ քաւեցիր մեզքս անհամար,  
Փրկիչս և իմ Աստուած:
2. Անմեղ էիր և անարատ,  
Մեղքիս պատիճն առիր վըրադ.  
Ձոն կար Գու, և ես աղատ,  
Փրկիչս և իմ Աստուած:  
Պիտի ապրիմ Բեզի նամար . . .
3. Բիւր վառք Բնդի ո՛վ Փրկիչ իմ,  
Ձի Գու մեռար որ ես ապրիմ.  
Գու քայլերուդ պիտ' հեռեիմ.  
Փրկիչս և իմ Աստուած:  
Պիտի ապրիմ Բեզի նամար . . .

## 472 ԲՈՂՈՐ ՍՐՏՈՎ, ԿՈՒԴԱՄ ԵՐԵՄ 29. 13.

C. II. 256

1. Ինչպէս որ եմ, ըլլալ Գուկին,  
Ով բարեկամ զհաւահասին.  
Կը նստիս իմ քեզի սնձն իմ,  
Ով Տէր Յիսուս կ'աղատ:

2. Կեանքիս առտուն քեզի տալու,  
Ուխտերս լըման կատարելու,  
Առանց կասկած, առանց վախու,  
Բողոք սքսող կու գամ:
3. Կ'ուզեմ լուսոյ մէջ միշտ ապրիլ,  
Արդարութեան ալ աշխատիլ:  
Բողոք ուժովրս ծառայիլ,  
Ուստի քեզի կու գամ:
4. Ինչպէս որ եմ քաջ և զուարթ,  
Չանալ ճշմարտութեան համար-  
Ըլլալ զիւցազն քեզի համար,  
Կեանքիս Փրկիչ կու գամ:
5. Սիրոյդ համար կեանքիս յաղթել,  
Քու ձեռքերէդ պսակս առնել,  
Եւ քու ոտիցդ առջեւ ձգուիլ,  
Յիսուս Տէր իմ, կու գամ:

## 473 (204) ԱՄԷՆ ԻՆՉ ԿՈՒՏԱՄ Մարկ. 10-28.

All to Jesus I surrender. S. S. S. 661

1. Ամէն բանըս, Տէր ամէն բան,  
Կը նուիրեմ շուրսունակ.  
Սիրաբոս, սէրս և կամքս թող ըլլան,  
Սի միայն քեզ հըպատակ:  
Ամէն ինչ կու տամ,  
Ամէն ինչ կու տամ,  
Զիս յաւէտ սիրող Փրկիչըս:  
Ամէն ինչ կու տամ:

2. Ամէն բանըս, Տէ՛ր, ամէն բան,  
Փառք, պատիւ, հաճոյք բոլոր.  
Կ'ընենմ յաւէտ Քեզ պատուանդան,  
Որ ըլլամ զո՛հ օրէ օր:  
Ամէն ինչ կուտամ . . . :
3. Ամէն բանըս, Տէր, ամէն բան,  
Քուկդ ըրէ, Քեզ քաշէ մօտ.  
Դուն իմս եզիր, զիս Քեզ արժան,  
Ծառայ մ'ըրէ, աւիտեան:  
Ամէն ինչ կուտամ . . . :
4. Ամէն բանըս, Տէր, ամէն բան,  
Իրաւցընէ Քուկդ ըլլան.  
Որ կարենամ ես միշտ երգել,  
«Կը նուիրեմ ամէն բան»:  
Ամէն ինչ կուտամ . . . :
5. Ամէն բանըս, Տէր, ամէն բան,  
Ո՛վ սիրոյ մեծ ուղկէան.  
Կը նուիրեմ Քեզ յաւիտեան,  
Սէրըս, սիրտս և ամէն բան:  
Ամէն ինչ կուտամ . . . :

474 (203) Լ Ի Ո Վ Ի Ն Ք Ե Ձ Ի Հոովմ. 12. 1.

My spirit, soul and body. (S. S. S. 637,) S. V. 499

1. Հոգիս, շունչըս և մարմինս,  
Քեզի ես կ'ընծայեմ.  
Կենդանի զո՛հ հաճելի,  
Բոլոր Քեզ նուիրեմ:

Սուրբ սեղանիդ վրայ դրուած,  
 Ահա քեզ կ'ըստասեմ,  
 Որ կրակով մաքրուած,  
 Ըլլամ քուկդ յաւիտեան:

2. Ո՞վ մեծ Փրկիչ և հըզօր,  
 Քեզի եմ հընազանդ.  
 Եւ կըրակիդ անձնատուր,  
 Նայիմ քեզ անդադար:  
 Ասրբ սեղանիդ վրայ դրուած...

3. Ո՞հ, անմաքուր իմ սրտիս,  
 Հիմա կըրակ դրկէ.  
 Որ այրելով իմ ընծաս,  
 Ամբիծ մաքուր ընէ:  
 Ասրբ սեղանիդ վրայ դրուած...

4. Յիսուս գըթած քուկդ եմ ես,  
 Լուս՝ դիս արիւնովդ.  
 Քեզ հաճելի ողջակէզ,  
 Ըրէ դիս Սուրբ Հոգւովդ:  
 Ասրբ սեղանիդ վրայ դրուած...

## 475 Ի Մ Մ Ե Ծ Փ Ա Փ Ա Ք Ս Յ ու չ . 17 . 3 :

1. Յիսուս Փրկիչ, Գրիստոս Աստուած,  
 Կեանք յաւիտենական.  
 Դու ես Հօրմէն աշխարհ դրկուած,  
 Որ քեզ ամէնն ճանչնան:  
 Ո՞հ, ես վաւաք առ այս ունիմ,  
 Յիսուս որ քեզ ճանչնամ.  
 Այլոց նաև ճանչընեմ,  
 Որ շուտ կեանք ունենան:

2. Որչա՛փ կուտայ սրտիս մեծ ցաւ,  
 Յիսուս իմ պատուական,  
 Չճանչնալով քու սէրդ անրաւ,  
 Մարդիկ կորուստ կ'երթան:  
 Ո՛հ, ես փափաք առ այս ունիմ...  
 Որ շուտ սէրդ հասկընան:
3. Ճանչնամ Յիսուս. ա՛հ, թող ճանչնամ,  
 Ոյժը քու յարութեան.  
 Չարչարանացդ հալորդ ըլլամ,  
 Կերպակից քու մահուան:  
 Ո՛հ, ես փափաք առ այս ունիմ...  
 Քու զօրութիւնդ ճանչնան:
4. Այս յիրաւի, այս է ինձի,  
 Գիտութիւն գերազանց.  
 Երկրիս վրայ, և թէ յերկնի.  
 Չըկայ ուրիշ վե՛հ անձ:  
 Ո՛հ, ես փափաք առ այս ունիմ...  
 Քու վե՛հութիւնդ տեսնան:
5. Դիտեմ Յիսուս քեզ ճանչնալով,  
 Կ'ունենամ ամէն բան.  
 Առատ շնորհք, խաղաղութիւն,  
 Խոստմունքներ պատուական:  
 Ո՛հ, ես փափաք առ այս ունիմ...  
 Որ քեզ ժառանգ ըլլան:
6. Ձիս անեցուր, թող միշտ աճիմ.  
 Յիսուս քու գիտութեամբ.  
 Քեզ ճանչնալու մէջ, ո՛հ չըլլամ,  
 Պարսպ և անսրտուղ:  
 Ո՛հ, ես փափաք առ այս ունիմ...  
 Արքայութիւնդ մտնան:

## 476 Հ Ո Գ Ի Ի Ս Ի Ղ Ձ Ը Ս աղմ. 42. 1.

1. Հալածականն եղնիկն ինչպէս,  
 Զով ջուրի պապակի.  
 Ծարւած հոգիս ոյ Տէր այնպէս,  
 Միշտ ֆեղ կը փափաքի,  
 Զով ջուրերու, եղնիկն ինչպէս,  
 նոյնպէս հոգիս կը ցանկայ ֆեղ:
2. Հին օրերու վերջիչումով,  
 Հառաչեմ ֆեղ ո՛յ Տէր.  
 Բու սրբարանդ մեծ հանդէսով,  
 Մանէ սիրտս կարեւիր,  
 Զով ջուրերու եղնիկն ինչպէս...:
3. Հրդօր Աստուած իմ, ֆեղ համար,  
 Ծարւած անձս կը հալի.  
 Երբ պիտի գամ ու տեսնեմ յար,  
 Երեսրդ սըխրալի,  
 Զով ջուրերու եղնիկն ինչպէս...:
4. Անձն իմ ինչո՞ւ ես միշտ տխուր,  
 Օ՛ն, ցնձա՛ր բերկրանքով.  
 Փառարանէ կեանքի աղբիւր,  
 Յարատեւ աղօթքով,  
 Զով ջուրերու եղնիկն ինչպէս...:

## 477 (214) ԱՄԷՆ ՕՐ, ԱՄԷՆ ԺԱՄ Ս աղմ 17 8,

Saviour more than life to me. S. S. S. 570

1. Փրկիչ կեանքէս աւելի,  
 Կ'ուղեմ փարիլ, միշտ փարիլ ֆեղի.  
 Թող թափած արիւնդ անգին,  
 Պահէ զիս մօտ, միշտ մօտ ֆու կողին:

Ամէն օր, ամէն ժամ,  
 Մաքրող զօրութիւնդ ըզգամ.  
 Թող Գու քաղցրը սէրդ ինձի,  
 Պահէ զիս միշտ, պահէ մօտ Գեղի:

2. Այս վաղանցիկ աշխարհէն,  
 Մեղմիւ, զիս մեղմիւ առաջնորդէ.  
 Երբ Գեղի ես վստահիմ,  
 Ճամբէս ես բնաւ պիտ' ընաւ չը շեղիմ:  
 Ամէն օր, ամէն ժամ....

3. Թող սիրեմ Գեղ աւելի,  
 Մինչեւ այս կարճ, խիստ կարճ կեանքս անցնի,  
 Մինչեւ թաղուիմ սիրոյդ մէջ,  
 Ղերն պայծառ աշխարհն, պայծառ, անվերջ:  
 Ամէն օր, ամէն ժամ....

478 ՏԷՐ ԻՄ Կ՝ՈՒՉԵՄ ԱՊՐԻԼ ՓԻԼ. 3. 7—10.

1. Շուտ պիտ' անցնի մէյն ու խաւար այս կեանքին  
 Հող չեմ ընեք բազմին անգութ քրմայքին.  
 Զի գիտեմ թէ թըշուառ մարդոց սպագան,  
 Վայելքներով լի առ ըրցուն կեանք մը կայ:  
 Տէր իմ, կ'ուզեմ ապրիլ այն կեանք,  
 Ուր չիք վախ ցաւ զիչեր տանջանք.  
 Որուն արե Դու ես Բիստուս,  
 Հողոցս փըրկիչ, միակ իմ յոյս:

2. Թագ մը գըլխուս քընար մը իմ մասներուս,  
 Հրեշտակային կեանք մը անվերջ ու սիրուն.  
 Երազներ չեն սոսկ ոսկեհիւս օղային,  
 Իմ հաւատաքըս ու խոստումը Անմահին:  
 Տէր իմ, կ'ուզեմ ապրիլ այն կեանք....

3. Այսարհն, ոտկի, արևն ամբողջ ազամանդ,  
 Իմա բլլար և դիրք մը փայլուն անվրտանգ.  
 Այս ամէնը չէր փոխեր հոգւոյս ու  
 Այն կեանքին հետ զոր պիտ' ապրիմ յետ մահու :  
 Տէր իմ կ'ուզեմ ապրիլ այն կեանք . . . :
4. Երբոր մահուան պաղ քրօնքը ճակատես,  
 Կը կաթկըթի, երբոր ինձի ալ անտես.  
 Կ'ըլլան զէմքերն իմ սիրելեաց, ո՛հ, Հայր իմ,  
 Շնորհէ որ այդ սուրբ ապագայ կեանքն ապրիմ :  
 Տէր իմ կ'ուզեմ ապրիլ այն կեանք . . . :

## 479 Ո Ի Ղ Ղ Է Ձ Ի Ս Ս աղմ. 139. 24.

Lead me gently Home Father. S. S. S. 1138

1. Ուզէ զիս մեղմիւ, Հայր իմ,  
 Ուզէ զիս տունն իմ,  
 Երբ կենաց վիշտ հատնին.  
 Հրատնչտի օրեր գան,  
 Մեղքն զիս պիտ' չը փորձէ.  
 Չզատուիմ ալ քեզմէ,  
 Միայն թէ մեղմիւ ուզէ զիս,  
 Հայր իմ, ուզէ զիս,  
 Ուզէ զիս մեղմիւ, Հայր իմ,  
 Ուզէ զիս մեղմիւ, Հայր իմ.  
 Որ չիյնամ ոչ մէկ կողմ ճամբուն,  
 Ուզէ զիս ի տունն :
2. Ուզէ զիս ի տունն,  
 Ուզէ զիս տունն իմ.  
 Երբ անցնիմ խաւարէն,  
 Ու կենաց վիշտերէն.

Քայլերս Դուն պահէ,  
 Ձարէն ազատէ,  
 Որ՛ն ապահով երկինք հասնիմ,  
 Ուզդէ զիս Հայր իմ,  
 Ուղղէ զիս մեղմիւ Հայր իմ... :

### 480 (219) Տ Ա Ր Զ Ի Ս Ս աղմ. 32. 8 :

1. Ո՛հ, առ Դուն իմ ձեռքերըս և տար Դուն զիս,  
 Մինչև իմ կեանքիս վերջը, յաւիտեանըս.  
 Չեմ կրնար մինակ քալել քայլ մը բնաւ,  
 Ուր Դուն երթաս և կայնիս զիս հետդ տար :
2. Ենորհացըդ մէջ թաղէ Տէր, տրկար սիրտըս,  
 Ուրախ տրտում ատենըս լուռ պահէ զիս.  
 Հանգստացուր առջեւդ տրկար զաւակդ,  
 Կ'ուզէ աչքերը գոցել հաւատալ կոյր :
3. Երբ Քու մեծ շօրութիւնըդ ալ չեմ ըզգար,  
 Դուն գործդ գլուխ կը հանես ալ մութ ատեն.  
 Ո՛հ, առ Դուն իմ ձեռքերըս և տար զուն զիս,  
 Մինչև իմ կեանքիս վերջը, յաւիտեանըս :

### 481 (216) ՓՐԿՉԻՆ ԿՐ ԿԱՐՕՏԻՄ Յովհ. 10. 4 :

I must have the Saviour with me. Alex. 15, S. V. 1  
 S. S. S. 578

1. Կարօտ եմ, Փրկիչ, Քեզ կարօտ,  
 Զիս քաշէ, յաւէտ Քեզ մօտ :

Գիշերն եղիր, լոյս չարուենակ,  
 Յորեկն ալ ամպի սիւնակ,  
 Չեմ սոսկար, ո՞ն, յաւիտեան,  
 Երբ շաւղիդ մէջ կ'ընթանամ,  
 Քալ'կոյ շատ մօտ հետքերուդ,  
 Կ'ունենամ հրճուանք անշուշտ:

2. Կարօտ եմ, Փրկիչ իմ սիրուն,  
 Որ հաւատքս ըլլայ կայսուն.  
 Առաջնորդ ըլլայ Սուրբ մատեան,  
 Ազգկոյ ի կեանքիս ճամբան:  
 Չեմ սոսկար, ո՞ն, յաւիտեան...:

3. Կարօտ եմ, Փրկիչ, Քեզ՝ այսօր,  
 Փորձութեան մէջ նորանոր.  
 Կենաց պայքարին մէջ մոլար,  
 Տէ՛ր, ուղղէ ընթացքս բոլոր:  
 Չեմ սոսկար, ո՞ն, յաւիտեան...:

4. Կարօտ եմ, Փրկիչ, մի միայն,  
 Սուրբ Հոգւոյդ միշտ ուղղութեան.  
 Մինչ անցնիմ գետէն թորգանան,  
 Երկնային բընակարան:  
 Չեմ սոսկար, ո՞ն, յաւիտեան...:

482 (224) Փ Ր Կ Չ Ի Ս Հ Ե Տ Սաղմ. 78. 52:


Anywhere with Jesus I can safely go. S. S. S. 627

1. Ամէն տեղ կ'երթամ ես Տէր Յիսուսի հետ,  
 Ամէն տեղ զիս կ'ապահովէ նա յաւէտ.  
 Ոչ մէկտեղ առանց Իրեն կ'ըլլամ ուրախ,  
 Ամէն տեղ Յիսուսի հետ կ'երթամ անվախ:

Ամէն տեղ, ամէն տեղ, անվախ անվըրդով,  
 Ամէն տեղ փրկչիս հետ կ'երթամ ապահով:

2. Երբ Տէրոջ հետ եմ ես մէկու չե՛մ կարօտ,  
 Բարեկամք երբ զիս լըքեն, Յիսուս է մօտ.  
 Երբ բամինս ըլլայ վայր մը տառապանաց,  
 Յիսուսով այն տեղն իսկ կ'ըլլայ տուն վառաց:  
 Ամէն տեղ, ամէն տեղ, անվախ անվըրդով,  
 Ամէն տեղ փրկչիս հետ կ'երթամ ապահով:

3. Ամէն տեղ ես Տէրոջմով ննջել կրնամ,  
 Թէ ըլլայ որ հոս աչքերս ալ չը բանամ.  
 Բայց Տէրոջ փողին ձայնէն երբ արթննամ,  
 Յիսուսի պայծառ դէմքէն պիտ' կ'շտանամ.  
 Ամէն տեղ, ամէն տեղ, անվախ անվըրդով,  
 Ամէն տեղ փրկչիս հետ կ'երթամ ապահով:



# ԱԻԵՏԱՐԱՆԶՈՒՅԻՒՆ

483 (210) ՕՐԵՐՆ Կ'ԱՆՀԵՏԻՆ ՅՈՒՆ. 9. 4.

There are lonely hearts to cherish. S. S. S. 802

1. Սրտեր կան խընամքի կարօտ,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին.  
Յոգնածներ կորրստեան շատ մօտ,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին,  
Փըպիտ մը հեզն կը փրկէ:  
Անաարբեր մ'անցնիր անկէ.  
Ո՛հ, բարիք գործել պարտք է,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին:  
կ'անհետին, կ'անհետին,  
կ'անհետին, կ'անհետին.  
Ո՛հ. բարիք գործել պարտք է,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին:
2. Մի ուղղիւր նայուածք հեզնալի,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին,  
Յարկուռան պէս թող զէմքդ վայլի,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին:  
Զի աշխարհն է վայր ախտւր,  
Հոս արցունք, հոն թուք ու մուր.  
Դուն ինկած ընկերդ վերցո՛ւր,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին:  
կ'անհետին, կ'անհետին...
3. Սիրոյ սուրբ կապերըն աւա՛ղ,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին.  
Թիաի հոս լուծուին ուչ կամ վաղ,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին:  
Գործըւած լաւիք սակայն,  
Գազանի և կամ յայանի այն.  
Մարդուն հետ կ'ապրի երկայն,  
Մինչ օրերն շուտ կ'անհետին:  
կ'անհետին, կ'անհետին:

484 (251) Օ՛ն Ի ԳՈՐԾ՝ Մատթ. 21. 28.

To the work! to the work. S. S. S. 751

1. Օն Ի գործ, օն Ի գործ, ո՛վ եղբարք օն յառաջ,  
 Հետև ինք այն շաւղաց յորս մեր Տէրն է քալած.  
 Անդագար աշխատինք տարածենք սէր և լոյս,  
 Քաջասիրտ միշտ բլլանք Տէրն է մեզ խրատոյս:  
 Օն յառաջ օն յառաջ, օն յառաջ, օն յառաջ,  
 Ի մեծ յոյս սոցասենք. Տեսուն գալստեան  
 անդուլ գործենք:
2. Օն Ի գործ, օն Ի գործ ըզքաղցեալն յագեցնենք  
 Եւ կենաց աղբիւրին ծարաւեալն մօտ բերենք.  
 Պարծենանք Ի խաչ Տեսուն աւետենք ամէնուն,  
 Կենսական այս մեծ լուրն է ձրի փրկութիւն:  
 Օն յառաջ, օն յառաջ . . . .
3. Օն Ի գործ, օն Ի գործ յարատեամ կայ մեզ գործ  
 Կործանենք Սատանին զօրութիւն ու ամբոց.  
 Յաւիտեան բարձրա՛յ Եհովայ մեծ անուն,  
 Եւ գոչենք միաձայն է ձրի փրկութիւն:  
 Օն յառաջ, օն յառաջ . . . .
4. Օն Ի գործ, օն Ի գործ Տէրն է մեզ օգնական,  
 Թէ գործենք եռանդուն կայ մեզ վարձք պատ-  
 ուական.  
 Երբ հասնինք իյերկին փառաւոր տուն փայլուն  
 Եւ երգենք սրբոց հետ այս ձրի փրկութիւն:  
 Օն յառաջ, օն յառաջ . . . .

485 Գ Ո Ր Ծ Է Ա Ն Դ Ա Դ Ա Ր Յակ. 5. 20.

There is a place where

1. Կայ գաշտ մը լայն գործ մը անհուն ամէնուն,  
 Թափենք մեր ջանք անձնուէր և եռանդուն.

Մի՛ ծուլանար օրն ի բուն դիզէ հասկեր ոսկեգոյն  
Հուննձքն է Տէրոջ, ուստի անդուլ գործէ դուն:

Մի՛ բնաւ տնանար, այլ գործէ անդադար,

Օրն քրտնաջան սլտտի շուտ աւարտի,

Մի՛ մնար դու ծոյլ, դանդաղ, այլ աշխատէ ան-  
հասպաղ,

Ձի վարձքն անբաւ սլտտ՝ ըստանաս ուշ կամ վաղ:

2. Ո՛վ ծոյլեր, մեծ հուննձքն սլտտրաստ է ձեզ համար  
Հոն կ'աշխատին մարդիկ անթիւ անհամար.

Տէրն կը կանչէ յարաժամ հնձել ճոխ հուննձքն իր  
դաշտին,

Մեծ վարձք կայ ձեզ թէ շուտ անսաք իր ձայնին:

Մի բնաւ սննար, այլ գործէ անդադար...

3. Եւ կ'սպասէ ու կը կանչէ դու Տէր մեր,

Երթալ իւր այդին աշխատիլ յօժար լիր.

Թէ ուշ ըլլայ թէ կանուխ, դնա գործէ սրտա-  
բուղիս,

Արդար բաժինդ սլտտ՝ շահիս դու մեծ թէ փոքրը:

Մի բնաւ սննար, այլ գործէ անդադար...

## 486 Գ Ո Ր Ծ Ե Ն Ք Մ Ի Ա Ս Ի Ն Բ Կ Ո Ր Ն . 6 . 1 :

(When upon life's belows you are.) S. S. S. 745

1. Յիսուս յազթական կ'անցնի ծով ու ցամաք,  
Սուրբ կըսիւ մըղինք իր հաւտարիմ բանակ-  
Հոս հոն ո՛հ, սրչափ հոգիներ կան սլտտրաստ,  
Օն քաջ զինուորք փութանք անոնց փրկութեան:  
Եղբայր քոյրեր, գործենք միասին,  
Նոր հոգիներ բերենք Յիսուսին:

եղբայր քոյրեր, գործենք միասին,  
Միշտ նոր հոգի մ'ալ բերենք Տէր Յիսուսին :

2. Եթէ լքանի մեր ուժն պակսի քաջութիւն,  
Սուրբ Հոգին աայ մեզ կռանդ ու զօրութիւն.  
Նայինք Յիսուսի խաչին սուրբ զբաշակին,  
Իր մեծ զօրութեամբ արգելքներ կ'անհետին :  
Եղբայր քոյրեր զործենք միասին... :

3. Որդիք Աստուծոյ խմբովին միաբան,  
Սուրբ ձեռքերնից թող դէպ երկինք բարձրանան  
Բնաւ մի խնայէք խօսք, քանք, աղօթք հրաւէր,  
Շուտ Փրկչին բերենք ամէն կոյրեր կաղեր :  
Երբայր քոյրեր զործենք միասին... :

4. Ո՛հ, ինչ բերկրանք է ըլլալ ազատարար,  
Արեամբ զնուած հոգիներու անհամար.  
Ո՛հ, ինչ շքեղ է երբ հիւրերու թիւն լեցուի,  
Եւ արքային մեծ հարսանիքն ըսկսի :  
Եղբայր քոյրեր զործենք միասին... :

487 (250) ԽՈՒՐՁԵՐՆ ՆԵՐՍ ԲԵՐԵՆՔ ՍԶՄ. 126.6.

Sowing in the morning. S. S. S. 757

1. Յանենք խօսքն Աստուծոյ, առաւօտ կամ իրկուն  
Տանք անօթի հոգւոց իր ճշմարտութիւնն.  
Եւ «պասենք բերքին և հնձելու ժամուն»,  
Շուտ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք :  
Խուրձերն ներս բերենք, խուրձերն ներս բերենք,  
Շուտ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք.  
Խուրձերն ներս բերենք, խուրձերն ներս բերենք,  
Շուտ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք :

2. Յանենք պայծառ կէսօրն համ գիշերուան մութին  
Թէ երկինք մըթագ'ի, կամ հովերն ցրտին.  
Քիչ ատենէն հունձք կայ մեր ճամբուն վախճանին  
երբ պիտի ց'ծութեամբ խուրձերն ներս բերենք:  
Խուրձերն ներս բերենք...:
3. Ուտի գնա արցունքով, Տէրոջդ համար ցանէ.  
Թէ վիշտ ըլլայ բաժինդ աշխարհ քեզ մերժէ,  
Երբ վիշտերը անցնին Տէրն մեզ պիտ' ուղղունէ,  
Եւ պիտի ցնծութեամբ խուրձերն ներս բերենք:  
Խուրձերն ներս բերենք...:

## 488 (246) ԻՆՉՊԻՍ ԵՐԹԱՄ ԴԱՆ. 12. 3.

Must I go and empty handed? S. S. S. 789

1. Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով,  
Տեսնել ֆրկիչս ո՞հ, այսպէս.  
Չունիմ ո՞հ, ես իրեն տալու,  
Պըտուղ օրհնեալ՝ իմ կեանքէս:  
Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով,  
Տեսնել ֆրկիչս ո՞հ այսպէս.  
Ի՞նչպէս կրնամ ես համարձակ,  
Դիմաւորել Ձինք ի տես:
2. Մահն ինձ երկիւղ չ'ազդեր երբեք,  
Ձի ֆրկիչս է զիս լիրկած.  
Բայց, ո՞հ, ինչպէս կրնամ սիրով,  
Փարիս անոր գրկարաց:  
Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով...:
3. Ո՞հ, թէ անցեալ մեղքի ժամերս,  
Տէրս կանչել կարեւայի,  
Ձանոնք ամբողջ Տէր Յ/սուսի,  
Կ'ընէի կամքին գերի:  
Ի՞նչպէս երթամ պարապ ձեռքով...:

4. Ո՛վ դուք սուրբեր քաջուժիւնով,  
Ասոյ սրէց ելէք գործի,  
Գործեցէք քանի որ լոյս կայ,  
Զի մահն է շատ մաս մուրի:  
Ինչպէս երբամ պարտապ ձեռնով. . .

## 489 ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ Գործք. 4. 12.

The sweetest name Sel. II.

1. Էն քաղցրը Անունն զոր տրւաւ երկին,  
Հրեշտակներ ցնձմամբ մեզ աւետեցին.  
Այն քաղցրանունն է փրկանք ամենուս,  
Պատմենք բոլոր աշխարհ այն Անունը Յիսուս:  
Յիսո՛ւս, Յիսո՛ւս, երկնի, երկրի քաղցր  
անունն,  
Յիսո՛ւս, Յիսուս, յաւիտեան իր արժէք՝ նոյն:  
Յիսուս անունն՝ ինձ վահան,  
Երբ վրաս դեք նետեր տեղան.  
Յիսուս, երկնի, երկրի քաղցր անունն:
2. Էն քաղցրը անունն վերն երկինք գովեն,  
Պաշտեն զԱյն երկրիս ազինք համօրէն,  
Այն քաղցր անունն է պարծանք ամենուս,  
Պատմենք բոլոր աշխարհ այն անունը Յիսուս,  
Յիսուս, Յիսուս երկնի, երկրի. . .
3. Յիսուս անունէն օարսափի Սատան,  
Յերկնից վար կ'իյնայ կայծակի նըման,  
Իսկ այն անունն է հրճուանք ամէնուս,  
Պատմենք բոլոր աշխարհ այն անունը Յիսուս:  
Յիսուս, Յիսուս, երկնի, երկրի. . .
4. Էն այն քաղցրը անունն յարոյց Ղաղարոս,  
Տեսուժիւն գտաւ կոյր Բարդիմէոս,  
Այն քաղցր անունն է բժիշկ ամենուս,  
Պատմենք բոլոր աշխարհ այն անունը Յիսուս:  
Յիսուս, Յիսուս երկնի, երկրի:

# ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ

490 ԼՍԵՅԷՔ ԻՆՉ Կ'ՐՍԷ Զայտ. 2. 7.

(Hallelujah, what a thought.) S. H. C. 108

1. Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Տէր,  
Որ մեռաւ կենդանացաւ,  
Մեր Ալֆան, Օմեղան,  
Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Տէր,  
Զօրութեան աջ կողմ նըստած,  
Հաւ'տարիմ մեծ Վըկան:  
«Միշտ արթուն զուք հըսկեցէք,  
Զի ահա շուտով կողգամ,  
Եւ իմ վարձքս իմ հետըս է.  
Հատուցանել ամէն մէկուն,  
Համեմատ իր գործերուն»:

2. Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Ան,  
Որ ունի հօթը աստղերն,  
Իր սուրբ աջ ձեռքին մէջ.  
Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Ան,  
Որ պըտտի հօթն ոսկեղէն,  
Սշտանակներուն մէջ:  
«Յաղթողին, այո, յաղթողին,  
Պիտի տամ ահոր ուտել,  
Գըտդատու կենաց ծառէն.  
Եւ խըմել այն մաքուր գետէն,  
Աստուծոյ դըրախտին մէջ»:

3. Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Ան,  
Աստուծոյ Որդին Յիսուս,  
Իողաւառ աչքերով.

Լըսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Ան,  
 Աբտաղէտ հատուցանող,  
 Գործերու համեմատ:

«Յաղթողին, այո, յաղթողին,  
 Որտին մէջ լոյս արուսեակ,  
 Օղին մէջ ալ պայծառ աստղ,  
 Պիտի տամ և իշխանութիւն  
 Ազգերու վըրայ տիրելն»:

4. Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Ան,  
 Աստուծոյ հաւատարիմ,  
 Ճշմարիտ սուրբ վըրկան,  
 Լսեցէ՛ք, ի՛նչ կ'ըսէ Ան,  
 Առաջինը և վերջին,  
 Սկիզբը և վախճան:

«Յաղթողին, այո, յաղթողին,  
 Պատուէրներս կատարողին,  
 Իր հանգերձը լուացողին,  
 Պիտի տամ և իշխանութիւն,  
 Ի վերայ կենաց ծառին»:

5. Կը լըսենք ձայնդ, ո՛վ Յիսուս,  
 Որ սիրով մորթուեցար,  
 Մեզ արեամբ գընեցիր:  
 Կը լըսենք ձայնդ, ո՛վ Յիսուս,  
 Դու մեր լոյս, ևրջանիկ յոյս,  
 Քուկդ ենք արդ, յաւիտեան:

Դու միայն ես արժանի,  
 Առնելու իմաստութիւն,  
 Զորութիւն, կարողութիւն,  
 Փառք, պատիւ, ամէն օրհնութիւն,  
 Այժմ և միշտ և յաւիտեան:

## 491 (274) ԱՀԱ ՇՈՒՏՈՎ ԿՈՒԴՍՄ Յայ.տ.22.20:

1. Կը սպասենք մենք Նէր Յիսուսին,  
Անոր երկրորդ գալըստեան,  
Առաւօտեան սրշսլոյսին,  
Օղին մէջ սմպերուն վրան,  
Դիչերուն խաւար պահերուն,  
Լուսնի աղօտ լոյսին մէջ,  
Կ'ըսպասենք ու կը նայինք մենք,  
Յոյսով մը հաստատ, անվերջ:
2. Անհամար ամբոխին մէջէն,  
Պիտ' տեսնենք Գառնուկն մորթուած,  
Երբ սաւառնինք օղին մէջէն,  
Պատմուճանով լուսազգեաց.  
Պիտ օրհնենք Փրկիչ Յիսուսը,  
Հրեշտակաց նոր երգով,  
Եւ պիտի պըսակուինք Փառքով,  
Յաւիտեանըս Անոր քով:
3. Զօրաւոր փողին հնչումը,  
Ահ ու սարսափ պիտ' ազդէ,  
Կեանքի պայքարն վերջացնելով.  
Մեռելներն յարուցանէ,  
Եւ մէկ անգամ ևս զօրաւոր,  
պիտ' հնչէ փողն ահաւոր,  
«Մըտէ՛ք փառքը սուրբեր այսօր,  
Ի կորուստ, ո՛վ մեղաւորք»:
4. Տեսէ՛ք Ան կուգայ յիրաւի,  
Իր խոստմունքին համեմատ,  
Սարսափեցէք ծաղր ընողներ,  
Ահա Ան կուգայ հաստատ,  
Տէրը կուգայ, Տէրը կուգայ,  
Դիմաւորելու ևլլենք,  
Շատոնց Անոր սպասած ենք,  
Հիմա զինք կը տեսնենք մենք:

492 (275) ԱՍՏՈՒԾՈՅ ՓՈՂԸ Ա թ և ս . 1 . 15 .

When the trumpet of the Lord. S. S. S. 983

1. Երբ հնչէ փողն հրեշտակին արձագանդեն երկիր ,  
 Երբ հատնին բողբջ ժամերն ժամանակին . [երկին  
 Երբ ձագի մր արշալոյս . սուրբեր համայն համա-  
 Ռ՛հ , թէ ես ալ ըլլայի մէջն այն խումբին : |խմբին  
 Ռ՛հ , թէ ես ալ հոն ըլլայի ,  
 Ռ՛հ , թէ ես ալ ըլլայի մէջն այն խումբին :

2. Լուսափայլ առաւօտուն երբ մեռեալներն ամէն  
 յարնեն ,  
 Արդարք համօրէն մեծ վարձք պիտի առնեն .  
 Երբ ընտրեալ անմահ հոգիք շրջապատեն գահն  
 Արքային ,  
 Ռ՛հ , թէ ես ալ ըլլայի մէջն այն խումբին :  
 Ռ՛հ քէ ես ալ հոն ըլլայի . . . :

3. Քեզ կուտամ իմ կեանքս բոլոր առ զայն Փրկիչ  
 [ըսքանչեղի  
 Թող լեզուս պատմէ քու սէրդ անպատմելի .  
 Քեզ համար ապրիմ , խորհիմ , գործեմ , խօսիմ ես  
 յարածամ ,  
 Եւ ապա սրբոց խումբին գամ միանամ :  
 Եւ ապա սրբոց խումբին գամ ,  
 Եւ ապա սրբոց խումբին գամ միանամ :

4. Տէր գու իմս ես յարածամ և ես ալ Քուկղ եմ  
 անարժան ,  
 Ալ ընդ Քեզ կ'ուզեմ մընալ յար անրածան ,  
 Յաւ , հաճոյք , հառաչ , ժրպիտ ինչ որ ըլլայ հոս իմ  
 Գալ կ'ուզեմ ու միանալ ես այն խումբին : [ըստին  
 Գալ կ'ուզեմ ու միանալ ես ,  
 Գալ կ'ուզեմ ու միանալ ես այն խումբին :

### 493 ԳԱՌՆՈՒԿԻՆ ԼԱՐՍՆԻՔԸ Յայտ. 19. 7:

1. Պիտի երթանք քիչ մը վերջ փառաց երկիրը,  
Եւ հոն պիտի տեսնենք Տէր Յիսուս Քրիստոսը,  
Հոս կը տեսնենք հայելիին մէջէն Ձինքը,  
Հոն դէմ առ դէմ պիտի տեսնենք զօրաց Տէրը:
2. Ուրախացէ՛ք ու ցնծացէ՛ք ո՛վ արդարներ,  
Ձի մօտեցաւ օրը որ փող պիտի հընչէր.  
Այն ժամանակ պիտի հատնի ցաւ ու վիշտեր,  
Դէպ ի ամպը պիտի քաշուինք բոլոր սուրբեր:
3. Պատրաստ եղէք ըստասեցէք դուք ով սուրբեր  
Եւ իւզ առէք ու շրտկեցէք ձեր լապտերներ.  
Երբ փետան գայ յանկարծ կանչէ չըլլաք յիմար  
Եւ դուրս մընաք փառաց հարսանիքէն կոյսեր:
4. Ո՛վ Տէր Աստուած, յիշէ տրկար ծառաներդ,  
Ըլլանք յաղթող Սատանայի ու աշխարհին.  
Շուտ պայծառ դէմքով կանք Քեզ զիմաւորելու  
Եւ յաւիտեան հարսանիքիդ մէջ ցընծալու:

### 494 (277) ԴԷՄ ԱՌ ԴԷՄ Ա ԿՈՐՆ. 13. 12:

Face to face with Christ my Saviour. Alex. 30

1. Դէմ առ դէմ Փրկիչ Տէրջոս հետ,  
Դէմ առ դէմ ի՛նչ փառք անբաւ.  
Երբ հիացումով տեսնեմ զԱյն,  
Որ սիրով իմ սեղս մեռաւ:

Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն,  
Ամպերին հեռու շատ վեր.

Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն,  
Իր փառաց մէջ գեր ի վեր:

Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զայն....

2. Այժմ ընդ ազօտ կը տեսնեմ զԱյն,  
Մութ քօղ մը մեզ կը բաժնէ.  
Բայց կուգայ շուտ այն օրհնեալ օր,  
Երբ պիտի իր փառքն յայտնէ:  
Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զայն....

3. Ո՛հ, ի՛նչ ցնծում Անոր առջին,  
Երբ ցաւ ու վիշտ չքանան.  
Ծուռ ճամբաներն ալ շտկուին.  
Մութ բաներն պարզ յոյս բլլան.  
Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն....

4. Դէմ առ դէմ պիտի ճանչնամ զԱյն,  
Դէմ առ դէմ օրհնեալ վայրկեան.  
Դէմ առ դէմ բնակիմ Անոր հետ,  
Որ սիրեց զիս յաւիտեան:  
Դէմ առ դէմ պիտի տեսնեմ զԱյն....

495 ՊԻՏԻ ԶՐԼԱՅ ՄՈՒԹ ԶՈՐ Սաղմ. 23. 4.

There'll be no dark valley. S. S. S. 1026

1. Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,  
Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,  
Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,  
Ժողովելու սիրելիներն,  
Ժողովելու սիրելիներն,  
Ժողովելու զանոնք վեր տուն.  
Պիտի չըլլայ մութ ձոր երբ Յիսուս գայ,  
Ժողովելու զանոնք վեր տուն:

2. Պիտի չըլլան ցաւեր երբ Յիսուս գայ,  
 Պիտի չըլլան վիշտեր երբ Յիսուս գայ.  
 Միշտ փառաւոր օրեր երբ Յիսուս գայ,  
 Ժողովելու սիրելիներն,  
 Ժողովելու սիրելիներն....
3. Պիտի չըլլայ արցունք երբ Յիսուս գայ,  
 Պիտի չըլլայ արցունք երբ Յիսուս գայ.  
 Պիտ' ըլլայ առատ հունձք երբ Յիսուս գայ,  
 Ժողովելու սիրելիներն,  
 Ժողովելու սիրելիներն....
4. Պիտ' ըլլայ ցնծութիւն երբ Յիսուս գայ,  
 Պիտ' ըլլայ ցնծութիւն երբ Յիսուս գայ.  
 Նաև ուրախութիւն երբ Յիսուս գայ,  
 Ժողովելու սիրելիներն,  
 Ժողովելու սիրելիներն....

## 496 ԵԿՈՒՐ, ՏԷՐ ՅԻՍՈՒՍ Յայտ. 22. 20.

1. Տեսքիդ կարօտովն ներսէս կը վառիմ,  
 Այ հերիք ով Տէր ամպերուն յառիմ.  
 Գժնեայ դիւային աշխարհէն անլոյս,  
 Այ աղատէ դիս, եկուր Տէր Յիսուս:
2. Զայնիդ, կարօտովն կ'ըսպառիմ ով Տէր,  
 Ականջըս տարին աշխարհիս ձայներ.  
 Ազդարարութեան ձայնովդ արտորա,  
 Սիրտըս իր խորէն արձագանդ թող տայ:
3. Փառքիդ յայտնութեան տենչանք մ'ունիմ ես,  
 Եկուր խորտակէ փառքեր սին ու վէս,  
 Ով մօրթուած Գառնուկ. ուժովդ առիւծի,  
 Երևցիր, հոգիս ալ հերիք հիւծի:

4. Վարձքին պատուական, անաչար՝ արդար,  
«Ապրիս», ի ձայնին սուրբերն դարէ դար.  
Կ'ըսպասեն, ով Տէր, խոսամանդ մեծայոյս,  
Խոստումդ կատարէ, եկուր Տէր Յիսուս:
5. Գառին հարսնիքին լաթեր բեհեզէ,  
Ուրբ ձեռքովդ հագնիլ, ո՛հ, իմ փափաքս է.  
Գառին հարսնիքին ես ալ նախընտիր,  
Մասնակցիլ կ'ուզեմ խումբին հետ ընտիր:
6. Խորտակուած խալիդ բեկորներէն ըիւր,  
Գահիդ պատուանդան շինեցիր պորփիր.  
Աթոռիդ առջև օղային ճերմակ,  
Երկրպագեմ քեզ հոգւովըս համակ:
7. Ո՛հ, հոն օղին մէջ երկրորդ դալստեան,  
Քեզմով քեզի հետ ապրիմ յաւիտեան.  
Քեզի կ'ըսպասեն սուրբերըդ ամէն,  
Եկու՛ր. Տէր Յիսուս շուտ եկուր, Ամէն:

497 Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ո Ւ Է Ամուլս 4. 12.

Would you flee from sin. Sl. H. 11

1. Մեղաւոր, շնորհաց պատգամն լսէ՛,  
Պատրաստուէ՛ Տէրն կուգայ,  
«Ահա ես շուտով կուգամ» կ'ըսէ,  
Պատրաստուէ՛, Տէրն կուգայ:  
 Պատրաստուէ՛, պատրաստուէ՛,  
 Պատրաստուէ՛, Տէրն կուգայ,  
 Պատրաստուէ՛, պատրաստուէ՛,  
 Պատրաստուէ՛, Տէրն կուգայ:

2. «Մեղաւոր, մեռնիլդ կուղև՞մ միթէ՞»,  
կ'ըսէ Տէրն, որ կուգայ.  
Դարձի ելո՞ւր, ո՞ն. ապաշխարէ՞,  
Պատրաստուէ՞, Տէրն կուգայ:  
Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . . :
3. Ահռե՛լի վտանգ կայ մէջ յապաղման,  
Պատրաստուէ՞, Տէրն կուգայ.  
«Յիմար կոյսեր» տակաւին կ'ուղևան,  
Պատրաստուէ՛, Տէրն կուգայ:  
Պատրաստու՛, պատրաստու՛ . . . :
4. Զայս աղերսանքն իր պաղատապիւն,  
Ի՛ր մերժէր, Տէրն կուգայ.  
Գուցէ պատե՛ն ժամդ այս ճ Վերջին,  
Պատրաստուէ՛, Տէրն կուգայ:  
Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . . :
5. Այս մեղմ հրաւերն սը պիտ' չի լըսեա,  
Իր փառքովն երբ Տէրն գայ.  
Փրկիչ մը չէ ալ, գթած ու հեղ,  
Իր փառքովն երբ Տէրն գայ:  
Պատրաստէ՛, պատրաստէ՛ . . . :

498 (264) ԱԶԱ ՓԵՍԱՆ ԿՈՒԴԱՅ Մատթ. 26. 6.

We shall hear a voice, an immortal voice. P. II. 162

1. Լսեցէք ահա ձայն մը սուր կուգայ,  
Յիսուս փոսան շուտ կուգայ.  
Կամ կէս գիշերուան խաւար պահերուն,  
Եւ կամ առտուան լոյս հաւախօսին.

Լսեցէք հիմա նոյն ձայնը կուգայ,

Ահա փեսան շուտ կուգայ:

Պատրաստ եղէք, ո՛հ, փեսան շուտ կուգայ,

Պատրաստ եղէք, ո՛հ, փեսան շուտ կուգայ,

կամ իրիկուն, կամ վաղ առտուն,

Կիչեր ատեն կեցէք արթուն.

Պատրաստ եղէք, պատրաստ եղէք,

Պատրաստ եղէք, ահա փեսան կուգայ:

2. Տասը կոյսերը շուտ պատրաստ կ'ըլլան,  
Դիմաւորելու փեսան.

Բայց երբոր փեսան քիչ մը կ'ուշանայ,

Ամէնն ալ խորունկ քունի մէջ կ'իյնան.

Յանկարծ ահադոջ մեծ ձայն մը կուգայ,

Շուտ ելէք, փեսան կուգայ:

Պատրաստ եղև ո՛հ . . .

3. Լսողներներն վառած կոյսերն իմաստուն,  
կը մանեն շուտ հարսնետուն,

Սակայն յիմարներն երբոր կ'ուշանան,

Դռներն կը դոցուին, ո՛հ, ինչ տեսարան,

Ի դուր ազազակ, ի դուր ազազանք,

«Ձէք կրնար մանուկ երբէք»:

Պատրաստ եղէք, ո՛հ . . .

## 499 ԶԱՐՄԱՆԱԼԻ ԶԱՅՆ Մատթ. 25. 6:

1. Զարմանալի պիտ' ձայն լըսենք,  
«Ահա փեսան կուգայ»:

Երբ կոյսերը կէս զիչերին,

Փակ աչքերով կը քընանան.

Զարմանալի պիտ' ձայն լըսենք,

«Ահա փեսան կուգայ»:

Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ,  
 Պատրաստ, պատրաստ,  
 Պատրաստ, զի փեսան կուգայ.  
 Կամ իրիկուն, կամ գիշերին,  
 Հաւախօսին, կամ թէ առտուն,  
 Պատրաստ կեցէ՛ք, զի փեսան կուգայ:

2. Այն սրտաշարժ պիտ' ձայն լըսենք,  
 «Ահա փեսան կուգայ».  
 Իբրև կորուստ երբ թուի կհանք,  
 Եւ խաչն ձածկէ մեր վերին թագ.  
 Այն սրտաշարժ պիտ' ձայն լըսենք,  
 «Ահա փեսան կուգայ»:  
 Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ . . .
3. Մենք պիտ' լըսենք այն ձայն հըղօր,  
 «Ահա փեսան կուգայ».  
 Երբ վերջին փողն մեղ աւետէ,  
 Թէ փրկութիւն մեզի մօտ է,  
 Մենք պիտ' լըսենք այն ձայն հըղօր,  
 «Ահա փեսան կուգայ»:  
 Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ . . .
4. Մենք պիտ' լըսենք ձայն կենդանի,  
 «Ահա փեսան կուգայ».  
 Երբ ննջողներ գերեզմանէն,  
 Ողջ սուրբերուն հետ վեր ելլեն,  
 Մենք պիտ' լըսենք ձայն կենդանի,  
 «Ահա փեսան կուգայ»:  
 Պատրաստ կեցէ՛ք, պատրաստ . . .

500 (281) ԴՈՒ ԿԱՄ ԹԷ ԵՍ Ղուկ. 13. 24.

1. Մարգարիտ գռներէն պիտ' մանեն,  
 Մի առ մի, մի առ մի.  
 Տէրոջը դէմքը պիտի տեսնեն,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:  
 Ոսկի փոցոցներն կը պըտըտին,  
 Քառնուկին պայծառ դէմքն կը դիտեն.  
 Անոր փառք ու գոյու թիւն կ'երգեն,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:
2. Իրկնց խաչերը հոն կը ձըղեն,  
 Մի առ մի, մի առ մի.  
 Փառաց թագերու կը տիրանան,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:  
 Երկնային անձին հետ միացոյն,  
 Զերծ է ամէն վիրշտ ու ցաւերէն.  
 Երջանիկ Անոր հետ յաւիտեան,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:
3. Ո՛հ, շատեր դուռը պիտի զարնեն,  
 Մի առ մի, մի առ մի.  
 Զեմ ճանչնար ձայնը պիտի լըսեն,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:  
 Ո՛հ, անոնք ի զուր կ'ազազակեն,  
 Զի դոցուած են մարգարիտ դռներն.  
 Յայնժամ արտում, ախսըր կը մընան,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:
4. Յաղթուծեան երգը կ'արձագանդեն,  
 Մի առ մի, մի առ մի.  
 Ոռըրերուն հետ միաձայն կ'երգեն,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:  
 Պիտի տեսնենք այն սուրբ երկրին մէջ,  
 Զատուածները այս աշխարհիս մէջ,  
 Երջանիկ Տէրոջն հետ յաւիտեան,  
 Ո՛հ, արդեօք ո՞վ, դո՞ւ կամ թէ ե՞ս:

## 501 (279) ԴՈՒՆ ՊԱՏՐԱՊՍ ԵՍ Մատթ. 25. 10.

There's a great day coming. S. V. 96

1. Ահա կուգայ, կուգայ, մեծ օրը կուգայ,  
Եւ մեզ կը մօտենայ օրէ օր.  
Երբ սուրբերն ու մեղաւորներն,  
Բաժնուին աջ ու ձախ,  
Դուն պատրա՞ստ ես գալիք մեծ օրուան:  
Դու պատրա՞ստ ես, դու պատրա՞ստ ես,  
Դու պատրա՞ստ ես, մեծ պատաստանին:
2. Այն պայծառ օրն կուգայ, պայծառ օրն կուգայ,  
Եւ մեզ կը մօտենայ օրէ օր.  
Քայց այն օր լոյս պիտի փայլի,  
Միայն փրկեալներուն վրայ,  
Դու պատրա՞ստ ես, գալիք մեծ օրուան:  
Դու պատրա՞ստ ես . . . .
3. Այն տխուր օրն կուգայ, տխուր օրն կուգայ,  
Եւ մեզ կը մօտենայ օրէ օր,  
Երբ մեր Տէրն արձակէ վճիռ,  
Մէկզի, ձեզ չեմ ճանչնար,  
Դու պատրա՞ստ ես գալիք մեծ օրուան:  
Դու պատրա՞ստ ես . . . .

## 502 ՅԻՍՈՒՍ ԿՈՒԴԱՅ Յայտ. 22. 20.

Lo! Jesus comes.


Արք. 107

1. Ահա կուգայ, Յիսուս Քրիստոս խոստացեալ Տէ-  
րըն փառաց,  
Յոյսն զարեբու զոր մարգարէք փաղուց էին  
մեզ պատմած:

Կուգայ կապեալն արձակելու, կուգայ ո՛ր կըռիւ  
 վերջացնելու,  
 Կուգայ մեծ փառքով իշխելու ՅԻՍՈՒՍ ԿՈՒԴԱՅ:  
 Ուստի երգեն խումբք փրկելոց, ալելուիա,  
 Եւ օրհնեն զՈյն՝ որ պաշտեն հրեշտակք երկնից  
 Ողջո՞յն, ողջոյն ով Դու իշխանդ խաղաղութեան  
 Զի Պիտ՝ տիրես յաւիտեանս յաւիտենից:  
 Ողջո՞յն, ողջոյն ով Դու իշխանդ խաղաղութեան  
 Զի պիտ՝ տիրես յաւիտեանս:

2. Եկեղեցի՛, զարթի՛ր, կանգնէ՛, մօտ է մէզ օրն  
 յալթութեան,  
 Կոր իւզ առէք ձեր լապտերին, որ զիմաւորէք  
 ֆեսան,  
 Նա խրատէ մեզ ըլլալ պատրաստ, որ մասնակ-  
 ցինք իրեն փառաց,  
 Եւ հռչակենք օրն մօտեցած. ՅԻՍՈՒՍ ԿՈՒԴԱՅ:  
 Ուստի երգեն խումբն վերկելոց ...

3. Արքայութիւնդ շուտով թող գայ, Քու կամքդ  
 ըլլայ ամէն տեղ,  
 Այս փառաւոր օրուան փրկեալք, միշտ կ'ըս-  
 պասեն անհամբեր.  
 Իր զաւստեան նըշաններն շատնան, առ՛ջօտն  
 կ'աւտէ պահապանն,  
 «Ամէն» մեր սիրտն տայ պատասխան, ՅԻՍՈՒՍ  
 Ուստի երգեն խումբն վերկելոց ... [ԿՈՒԴԱՅ:



503 Տ ՈՒ Ն Ս Ե Ր Կ Ի Ն Ք Ն Է ՓԻԼ. 3. 20.

1. Տուեսս երկինքն է ես շուտ հոն կ'ելլիմ,  
 ճամբան երկար չէ մինչ երուսապէմ.  
 Հոն խաղաղութեամբ պիտի հանդչիմ ես,  
 Որբոց հետ ցնծմամբ երգեմ սէրն Փրկչիս,  
 երկնից մէջ ո՛ն հոն աւել կայ,  
 նուտ եկուր, մի՛ ուշան որ.  
 Մեղքին մութ ճամբան ձըգէ,  
 Տէրոջը քաղցր ձայն քեզ կը կանչէ:
  
2. Որչափ շուտ անցած է մեր ժամանակ,  
 Քիչ վերջ պիտ' հասնինք մենք Տէրոջ քաղաք.  
 Այլ վերջացած է կռիւի ժամանակ,  
 Յաղթողին պատրաստ է կենաց պաակ:  
 Յոգնած պանդուխտ վեր նայէ՛,  
 Հանդիսուր քեզ կ'ըստասէ.  
 Յիսուս իւր հարսն պիտ' կանչէ,  
 Որ Իրեն հետ Հօրն փառքն վայելէ:
  
3. Այն խաղաղ եղերք չի վիչեր ցուրտ հով,  
 Հոն Գառնուկին երգ կ'երգեն նոր լիզուով,  
 Այն սուրբ երկրին մէջ լացն է վերջացած,  
 Հոն է լոյս անչէջ մահն է խափանուած:  
 Դուն որ շատ անգամ կուլաս,  
 Հայրենիքն կը կարօտնաս.  
 Դուն ալ երբոր արթննաս,  
 Տէրոջ զէմքէն պիտի կշտանաս:

504 (293) Ս ՈՒՐ Բ ԵՐԿԻՐ ԵՂՐ. 11. 16.

There is a land mine eye hath seen. S. S. S. 981

1. Կայ երկիր մը սուրբ և փայլուն,  
Կրնանք հաւատքով զայն տեսնել.  
Պալատները են շիշոպուն  
Սուրբեր միայն կրնան վայել:  
Ո՞վ սուրբ երկիր, իմ սէր և յոյս,  
Բնակարաններդ պատած է լոյս.  
Խաղաղ եզերքդ տեսնենք պիտի,  
Երբ լոյս ծագի, խաւար մերժի:
2. Երկիր մը որ սրբավայր է,  
Զըկայ հոն մեղք ցաւ ու վիշտեր.  
Սիրելեաց անբաժան տեղ է,  
Կը միանան բաժնըւողներ:  
Ով սուրբ երկիր...
3. Երկինքդ է միշտ լուսադայմառ,  
Առանց արեւի և լուսնի.  
Բընակիչներդ են ուղղափառ,  
Կ'ապրին Տէրոջ հետ մէջ դրախտի:  
Ով սուրբ երկիր...

505 ՏՈՒՆ ՄԸ ՈՒՆԻՄ Բ ԿՈՐՆ. 5. 1.

I have a home. Sl. H. 359

1. Տուն մը ունիմ լոյսէ ձաւլուած,  
Ճառագայթ է բիւրեղացած,  
Ուր, երբ անցնիմ ցուրտ Ռորդանան,  
Կ'ապրիմ Տէրոջս հետ յաւիտեան:

Այս փոյ ձանքի կեանքն երբ անցնի,  
 Զոյգ լոյս թեւեր, պիտ' տան ինձի.  
 Երգն յազթական, շրթանցս վրան,  
 Պիտ' սաւառնիմ զէպ այն տուն իմ:

2. Տուն մը ունիմ սուր գահուն մերձ,  
 Արտասուքէ և վիշտէ զերձ.  
 Հոն ծովն չունի ալիքներ խիստ,  
 Սուրբ յազթականք կ'ապրին հանգիստ:  
 Այս փորձանքի կեանքն երբ անցնի...

3. Տուն մը ունիմ աստղերէն վեր,  
 Թագաւորէ հոն յաւէտ սէր.  
 Տուն մը, ուր մութ չըկայ երբեք,  
 Գառնուկ արին կ'ընէ ցորեկ,  
 Այս փորձանքի կեանքն երբ անցնի...

## 506 Ե Ր Կ Ի Ր Ս Ի Ր Ո Ի Ն Յայտ. 21. 1.

Beautiful robes so white. Sl. H. 341

1. Գեղեցիկ յերկինս վերն, գեղեցիկ զգեստներն,  
 Գեղեցիկ տուն պայծառ, ուր չիք երբեք խաւար  
 Գեղեցիկ թագ փայլուն, աստղերով նըկարուն,  
 Գեղեցիկ բնագաւառ, Տէր, մեզ հոն սար:  
 Զգեստ փայլուն, երկիր սիրուն,  
 Հոյակապ տուն, օսկեձեղուն.  
 Գեղեցիկ թագ, գոլորիկ նուագ,  
 Պալատներ լուսավառ. Տէր մեզ հոն սար:
2. Գեղեցիկ այս խորհուրդ մենք իր սք. Ժողովուրդ  
 Փրկչին հետ յաւիտեան, պիտ' ապրինք անբաժան

Հողէ, վիշտէ ազատ, Իւր ժառանգն հարազատ,  
Կ'ազներսնեք անղազար, Տէր մեզ հոն տար:

Զպես փայլուն երկիր սիրուն ...:

3. Գեղեցիկ ամէն ինչ, կը շողայ զերթ լոյս ջինջ,  
Ելլե՛նք այս ձորէն խոր, հոն են մեր գանձ բոլոր  
Յարուցեալ Տէրն վկայ, հոն երբէք մահ չըկայ:  
Պիտ' ապրինք զալէ գար, Տէր մեզ հոն տար:  
Զպես փայլուն երկիր սիրուն ...:

## 507 ՎԵՐՆ ԸԱՅՐՆՆԻՔ Յայտ. 21. 10.

1. Թողէք զիս, թողէք զիս,  
Որ երթամ իմ վե՛հ Փրկչիս.  
Ո՛հ, կ'այրիմ Իւր կարօտովը.  
Կը բազմամ շուտ ելլել քովը,  
Ոսկեզէն գահին առաջ:
2. Քաղցր լոյս, քաղցր լոյս,  
Իմ հոգւոյս, կեանք և իմ լոյս.  
Երբ սրբոց ու հրեշտակաց հետ,  
Ռընակիմ պիտ' ես ալ յաւէտ,  
Եւ Քու սուրբ երեսդ տեսնեմ:
3. Ի՛նչ վսեմ, ի՛նչ վսեմ,  
Այն երգը դոր կը լսեմ,  
Ո՛հ, թէ թռչնոց թիւեր տրուէր,  
Որ թռչի աշխարհէս վեր,  
Դէպ Սիօնի բարձունքը:
4. Սիրուն դրախտ, սիրուն դրախտ,  
Ի՛նչ անուշ են պտուղներդ.  
Երբոր այդ քու ծառոց տակ զամ,  
Երազողի պէս պիտ' ըլլամ,  
Ո՛հ, Տէր հասցուր զիս Դրախտ:

5. Երնեկ օր, երնեկ օր,  
Երբ մտնեմ այն քաղաք նոր.  
Երուսաղէմ ոսկի փողոց,  
Բընակութիւն յարմար սրբոց,  
Մայրաքաղաքն Արքային:
6. Օրհնեալ յոյս, օրհնեալ յոյս,  
Ի՛նչ մեծ շնորհք ելկելուոյս.  
Փրկիչս պիտ' տեսնեմ յէմ առ դէմ,  
Ու յաւիտեան Ձինք վայլեմ,  
Ի քաղաքն ոսկեղէն:

## 508 Վ Ե Ր Ի Ն Ե Ր Ո Ի Ս Ա Ղ Է Մ Յյա. 21.4.

1. Մայր քաղցր վերին Երուսաղէմ,  
Ե՞րբ պիտի գամ առ քեզ.  
Երբ բերկրութեամբ լմնցնեմ,  
Վըշտաց այս ասպարէզ:
2. Նաւահանգիստ երանելի,  
Խաղաղ և անվրտանգ.  
Քու մէջդ պիտի չը գըտնուի,  
Հոգ, ցաւ կամ տառապանք:
3. Մութ ամպ բընաւ քեզ չըպատեր,  
Ձրկայ քու մէջըդ մէգ.  
Ձրկայ քու մէջդ աղօտ գիշեր,  
Աստուած քեզ լո ս կուտայ:
4. Պատերդ գոհար են չողչողուն.  
Յատակդ մաքուր ոսկի.  
Դռներդ մարգարիաներ վայլուն,  
Ո՛հ, թէ հոն ըլլայի:

**509** ՔԱՌԱԿՈՒՄԻ ՔԱՂԱՔՆ Յայտ. 21. 16:

The city foursquare. A. C. H. 34

1. Երկնային փառաց երկիրն,  
կայ քաղաքն քառակուսի.  
Որ երբեք պիտ' չանհետի,  
Եւ չկայ գիշեր հոն:  
Աստուած պիտ' արցունք սրբէ,  
Բոլոր յայդ աչքերէ,  
Զի ոչ մահ, ջաւ, վիշտ կայ հոն,  
Եւ չկայ գիշեր հոն:
2. Բոլոր դռներն մարգարիտ են,  
Քառակուսի քաղաքին.  
Փողոցներն զուտ ոսկի են,  
Եւ չկայ գիշեր հոն:  
Աստուած պիտ' արցունք սրբէ . . .
3. Դռներն ոչ երբեք դոցուիին,  
Քառակուսի քաղաքին.  
Կը յորդէ կենաց գետն հոն,  
Եւ չկայ գիշեր հոն:  
Աստուած պիտ' արցունք սրբէ . . .
4. Պէտք չկայ արև ու լուսնի,  
Քաղաքին մէջ քառակուսի,  
Զի Դառնուկն է լոյս անշէջ,  
Եւ չկայ գիշեր հոն:  
Աստուած պիտ' արցունք սրբէ . . .

**510** Ո Ն. Տ Ե Ն Չ Ա Մ Փիլ. 1. 23:

1. Երկնային հանդիստ, սէր, խնդում, պսակ,  
Հանոյքներ բազմատեսակ.

Սուրբ հոգւոց համար յերկինս պատրաստած,  
Կ'ըսուցասէ մեր Հայրն Աստուած:

Ո՛հ, տենչամ առնուլ թեւեր,

Սլանամ յերկինս ի վեր.

Անդ երգել Փրկչիս անուն,

Եւ իւր սէրն անհուն.

Հայրենիք, հայրենիք,

Վայր սրբրոց յաւէտ երջանիկ:

2. Հոն ամէնն է սէր խնդութիւն պսակ,  
Հրեշտակներն ալ մեզ ընկեր.  
Սուրբ արեամբ գնուած թագեր պատուական,  
Մեզ համար հոն պատրաստ կան:  
Ո՛հ, տենչամ առնուլ քեւեր . . .
3. Մեղք ու մահ, վիշտ ու արցունք դառն աղի,  
Ահը մահուան մանգաղի.  
Վերին հայրենեաց պալատներուն մէջ,  
Յաւիտեան գտնեն ալ վերջ:  
Ո՛հ, տենչամ առնուլ քեւեր . . .
4. Կեանքս է հոն անմահ, չիք արցունք գիշեր,  
Ծառ ծաղիկ շունին յուշեր.  
Զի Փրկիչս է հոն. կեանք, լոյս և արև,  
Անմահ դրախտ մ'արդարև:  
Ո՛հ, տենչամ առնուլ քեւեր . . .

## 511 Մ Օ Տ ԵՄ Ա Յ Ս Օ Ր Յայտ. 21. 4:

«In the land of fade-less day». S. S. B. 170

1. Հայրենի տանս երկնաւոր,  
Մօտ եմ շատ մօտ այսօր.  
Վերին տան միշտ լոյս ու նոր,  
Մօտ եմ շատ մօտ այսօր:

Մեղք ու վերք ու վիշա ու ցաւ,  
 Հոն պիտի չըլլան բռնաւ.  
 Գաւատին սուրբ ու անդորր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր:

2. Փրկչիս զէմքին լուսաւոր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր.  
 Պրտակին վայլուն աղուոր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր.  
 Մեծ աթոռն շրջապատած,  
 Պիտ' օրհնենք փասաց Աստուած՝  
 Օրհնութեանց սուրբ նորանոր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր:

3. Զիս սիրող ու պահող Հօր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր.  
 Պաշտպանիս գլխած հըղօր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր.  
 Բազկաց մէջ հանգըստաւէտ,  
 Պիտ' հանգչիմ ես առ յաւէտ,  
 Սուրբ գործերու փառաւոր,  
 Մօտ եմ շատ մօտ այսօր:

## 512 (321) ԵՐԲ ԽՄԲՈՒԻՆՔ ԵՍՈ. 51. 11.

Sing the wondrous love... Alex. 49, Արք. 251

1. Երգէ՛ Փրկչին սէրն հրաշալի,  
 Երգէ՛ շնորհքը, գութն առ լի,  
 Քանզի անհուն իր շնորհքով,  
 Մեզ տեղ պատրաստեց իր քով:  
 Երբ ամէնքս խմբուէնք յերկինս,  
 Ո՛հ, ի՛նչ բերկրալի օր պիտ' այն ըլլայ,  
 Երբ տեսնենք Յիսուսը,  
 Հոգիս կ'երգէ և կը ցընծայ:

2. Մինչ թափառինք պանդուխտ այսպէս,  
Ամպեր մթագնեն մեր նրկին.  
Բայց վախճանը ճամբուն տեսնես,  
Մէջն ու մըշուչ կ'անհետին:  
Երբ ամէնքս խմբուինք . . . :
3. Արդ, օ՛ն, հաւատքով և յոյսով,  
Ապրինք գործենք բոլոր օր.  
Իր մէկ ժպիտն դառն վըշտի մէջ,  
Կը փոխէ կեանքը բոլոր:  
Երբ ամէնքս խմբուինք . . . :
4. Յառա՛ջ, օն, դէպ ի մրցանակ,  
Անա չքնաղ դէմքն կ'երևնայ.  
Երկնից դռներն բաց, անապակ,  
Ոսկի փողոցներ ահա:  
Երբ ամէնքս խմբուինք . . . :

## 513 ՇԲԵՂ ՀԱՅՐԵՆԻՔ Յայտ. 21. 27:

1. Վերն չըքեղ հայրենիք բարեկամներ,  
Հաւաքուինք հոն պիտ' բոլորս ալ.  
Ուր ամէն ինչ վալլուն. չիք մուկթ ամպեր,  
Ցաւոց, վշտաց, շուքերն մըռայլ:  
Հոն հաւաքուինք, հետ սիրելեաց,  
Որք մահով զատուեցան մեզմէ ի բաց.  
Ուր բաժանման մանկաղն հատու,  
Զի տար նրբէք վախ սրտերու:
2. Վերն այն մեծ սուրբ քաղաք չ'իշխեր դիշեր,  
Ո՛հ, ե՞րբ պիտի հոն միանանք.  
Երբ անցնին պիտի շուտ այս սև օրեր,  
Ցաւերէն վերջ վայինք բերկրանք:  
Հոն հաւաքուինք հետ սիրելեաց . . . :

3. Ղերն այն վայրն ուր միայն փրկեալ հոգիք,  
 Եւ արժանի ժառանգորդներ,  
 Այ բաժանման բընաւ վախ կասկած չիք,  
 Ձեզ համար ով սրգաւորներ,  
 Հոն հաւաքուիմք . . . .
4. Ով դուք որ խոցուած էք վըշտի նեատվ,  
 Սրբեցէք արդ ձեր արցունքներ,  
 Անշուշտ քիչ վերջ բոլոր սիրելեաց քով,  
 Ազրինք անվերջ կեանք մ'անստուեր,  
 Հոն հաւաքուիմք . . . .

**514** (309) ՊԻՏԻ ՄԻԱՆԱՆՔ ԱԹԵՍ. 4. 17.

Soon will come the setting sun. S. S. S. 939'

1. Շուտ կեանքի արևն մարի,  
 Ձեռքեր գործէն պիտ' դադրի,  
 Տըկար սիրտն ալ դարնելէն կայնի,  
 Բայց վերջին փողն երբ հնչէ,  
 Պիտ' ելլենք վեր ամպերէ,  
 Միանանք պիտ' շուտ մէջ Սիօնի,  
 Միանանք հոն պիտի,  
 Ո՛հ, միանանք հոն պիտի,  
 Յիսուսի դէմքին փոխուած,  
 Միանանք մենք հոն պիտի,  
 Միանանք հոն պիտի,  
 Ո՛հ, միանանք հոն պիտի,  
 Պիտ' վայելենք մեր Տէրը՝
2. Մուտ խաւարն պատած չորս դին,  
 Հովք սաստկաշունչ կը վրչեն.

Վախ կուտայ որոտումք մեր սրտին,  
 Բայց Տէրը պիտ' հայթայթէ.  
 Ճամբայ մը, անհուն մըտքէ,  
 Միանանք պիտ' մէջ սուրբ երկինքին,  
 Միանանք հոն պիտի... ,

3. Բաժանման ցաւերն ու լաց,  
 Քափել տայ արցունք աչաց.  
 Կարճ կեանք երբ գտնէ ցաւով վախճան,  
 Բայց Տէրը անշուշտ դալով,  
 Պիտ' երկինք տանի իր քով,  
 Համայն ցաւք և վիշտք պիտ' վերջանան.  
 Միանանք հոն պիտի... ,

## 515 Հ Ո Ն Տ Ե Ս Զ Ի Ս Թայտ. 22. 1—2.

On the happy golden shore. S. S. S. 437, S. V. 160

1. Երջանիկ ավանց վըրայ,  
 Բաժանման կսկիծ չիկայ.  
 Երբ կենաց լուծն հոս կ'իհնայ,  
 Հոն տես զիս.  
 Ուր տխուր դիչեր չիլսեր,  
 Այլ ցորեկն ու վարդ շողեր.  
 Տուն հանգչի կ'երթամ ես վերն,  
 Հոն տես զիս.  
 Հոն տես զիս, հոն տես զիս.  
 Ուր կենաց ծառն միշտ կը ծաղկի.  
 Հոն տես զիս.  
 Կ'անհետին վիշտերն կեանքի,  
 Հոն ոսկի ավանց վըրայ,  
 Բաժանման կսկիծ չիկայ,  
 Հոն տես զիս.

2. Որն են հոս ոսկի յոյսեր,  
 Կը լուծուին սրտեր ու սէր.  
 Վերն չկան հոգեր յոյզեր,  
 Հոն տես զիս.  
 Գետին քով փայլուն պայծառ,  
 Քաղքին մէջ բերկրապատար,  
 Ուր հաւատքն հասնի կատար,  
 Հոն տես զիս:  
 Հոն սես զիս, հոն սես զիս...

3. Քրնարներ հրեշտակային,  
 Կ'օրհներգեն եռանդագին,  
 Պալատին մէջն Արքային,  
 Հոն տես զիս.  
 Ուր սրտեր հաշտ անխըռով,  
 Կը ձուլուին ամբիժ սիրով,  
 Եւ կ'ապրին յաւէրժ Հօրն քով,  
 Հոն տես զիս:  
 Հոն սես զիս, հոն սես զիս ..

516 Պ Ի Տ Ի Մ Ի Ա Ն Ա Ն Ք Յայտ. 22. 16:

Shall we meet deoynd the river. S. S. B. 175

1. Միանանք պիտ' գետէն անդին,  
 Ուր այլևս ալիք զաղբին.  
 Ուր ամէն բան խիստ փայլուն է,  
 Եւ ուր ցաւ չպիտի մտնէ:  
 Միանանք, միանանք,  
 Միանանք պիտ' գետէն անդին.  
 Ուր երբէք չկան տառապանք,  
 Ուր այլևս ալիք զաղբին:

2. Միանա՞նք պիտ' այն փայլուն վայր,  
Ուր չկան փոթորկահար.  
Ոուրբ կեանքի և երկնի պերճանք,  
Արդեօք հոն պիտ' միանա՞նք,  
Միանանք, միանանք...
3. Միանա՞նք պիտ' յայն սուրբ քաղաք,  
Ուր փայլի վե՛հ աշտարակ.  
Ուր պատերն են բոլոր գոհար,  
Գործ Տէրոջ մատանց ճարտար:  
Միանանք, միանանք...
4. Միանա՞նք պիտ' քովն Անհունին,  
Ուր անուշ երգեր կ'երգուին.  
Ո՛հ, արդեօք սրբոց խմբերդին  
Մեր ձայներն պիտ' մասնակցի՞ն:  
Միանանք, միանանք...
5. Միանա՞նք պիտ' այն սիրելեաց,  
Որոնք մեր գրկէն ի բաց.  
Իլուեցան, ո՛հ, մահուամբ զԺխեմ,  
Եւ տեսնենք հոն դէմ առ դէմ:  
Միանանք, Միանանք...
6. Միանա՞նք պիտի մեր Փրկչին,  
Հետի երկրէն խաւարչտին.  
Եւ արդեօք իւր մեծ շընորհքով,  
Պիտ' նստի՞նք հոն դէմ առ դէմ:  
Միանանք, միանանք...

517 ՈՂ ԻՆՁ ՄԵԾ ՓԱՌՔ Տիտ. 2. 13.

Soon will our Saviour from heaven appear. 2 Alx. 85

1. Շուտ մեր Տէրն յերկնուստ պիտի երևնայ,  
Այս խորհուրդն սրտիս ի՛նչ ցնծում կուտայ.  
Ի մի փայրկեան պիտ' փոխուին ամէն բան,  
Այս յոյսն ուրախ է մեր ճամբուն վախճանն:

Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Երբ ես տեսնեմ իր լուսափայլ դէմքն,  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Երբ ես տեսնեմ իր դէմքն:

2. Առանձնութիւնն շուտ փոխուի միութեան,  
 Երբ յօսա Փրկչին՝ սիրելիք միանան,  
 Ննջողք ելլեն յաղճող գերեզմանին,  
 Եւ ողջերն փոխուին Փրկչին պատկերին:  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք...
3. Արևն փարտաէ խաւարն գիշերուան,  
 Փոթորի՛ն տեղի տայ խաղաղութեան.  
 Յաւք. ողբ, ու կոծ, և մահ ալ լերջանան,  
 Տիրէ ցնծութիւն, օրհնութիւն աննման:  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք...
4. Զօրութիւն յաջորդէ տրկարութեան,  
 Անկատարն փոխուի կատարելութեան.  
 Վիշաք անհետին, տիրէ յոյս անվախճան,  
 Հաւատքն ալ փոխուի պայծառ տեսութեան:  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Երբ ես տեսնեմ իր լուսափայլ դէմքն.  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Ո՛հ, ի՛նչ մեծ փառք,  
 Երբ ես տեսնեմ իր դէմքն:

**518** (308; Փրկո՞ւթեան Շնորհքը Եփես. 2. 5.

Some day the silver cord will break. S. S. S. 978

1. Օր մը կենաց թելն երբ կտարի,  
 Ու դադրիմ այլեւս երգելէ.

Պիտ' արթննամ հրճուանքով լի,  
Թագաւորին հետ ապրելու:  
Պիտի տեսնեմ զԱյն զէմ առ զէմ,  
Շնորհքով փրկուեթիւնըս պատմեմ,  
Պիտի տեսնեմ զԱյն զէմ առ զէմ,  
Եւ յաւիտեան հետը երգեմ:

2. Օր մը պիտ' թողում այս տուն իմ,  
Ալ չեմ գիտեր թէ որ ատեն,  
Սակայն գիտեմ Փրկիչըս իմ.  
Պատրաստած է տեղ մը արդէն:  
Պիտի տեսնեմ զԱյն. . .

3. Օր մը պատրաստ պիտ' ըստասեմ,  
Լապտերըս վառած և արթուն.  
Երբ Տէրոջը ձայնը լըսեմ,  
Թռչիմ պիտի երկինք փայլուն:  
Պիտի տեսնեմ զԱյն. . . .

## 519 (278) ՊԻՏԻ ԿԱՅՆԻՆՔ Ա ԹԵՍ. 4. 16:

We shall stand before the king. S. S. S. 966

1. Պիտ' կայնինք Տէրոջն առջին,  
Հրեշտակաց հետ միասին,  
Եւ երգենք, և երգենք.  
Պիտ' քայինք փողոցն ոսկի,  
Եւ օրհնենք զինք աւելի,  
Յնճումով, յնճումով:  
Պիտ' կայնինք Տէրոջն առջին,  
Հրեշտակաց հետ միասին.  
Եւ երգենք ճառք Արքայինն,  
Ալէլուիա, Ալէլուիա,  
Պիտ' կայնինք Տէրոջն առջին:

2. Քէրովրէք երկնից հրճուին,  
 Երբ կայնինք Տէրոջն առջին.  
 Ի բարձունս, ի բարձունս.  
 Հոն ցաւերն պիտ' Վերջանան.  
 Երբ երգենք երգն օրհնութեան,  
 Իր անուան, իր անուան.  
 Պիս' կայնինք Տէրոջն առջին....

3. Օ'ն, ցնձա' ո՛վ իմ հոգիս,  
 Տէրոջն առջև պիտ' կայնիս,  
 Երբ ինք գայ, երբ ինք գայ.  
 Իր պատկերին պիտ' փոխուիս,  
 Ու փառքով ալ միշտ փայլիս.  
 Յաւիտեան, յաւիտեան:  
 Պիս' կայնինք Տէրոջն առջին....

4. Օ'ն, ուրեմն դու ծառայէ,  
 Քանի քեզ նա կեանք շնորհէ,  
 Վարձք ունիս, վարձք ունիս.  
 Երբ առջին հոն վերն կայնիս,  
 Պըսակըդ պիտ' ընդունիս,  
 Անթառամ, անթառամ:  
 Պիս' կայնինք Տէրոջն առջին....

**520** (316) ՊԻՏԻ ՃԱՆՁՆԱՆՔ ԶԻՐԱՐ Ա ԿՈՐ 13.12:

Shall we know each other there?

1. Երբ ելլենք այս աշխարհէն վեր,  
 Դէպ երկնային պալատներ.  
 Երբ լրսենք երգն հրեշտակներուն,  
 Ողջունել մեզ իրե՛ց տուն:

Այն երկրին մէջ պատմութեամբ հին՝  
Ուր հոգեր չունի հոգին.

Այն երկրին մէջ սըրբոց արդար՝  
Պիտ՝ ճանչնա՞նք մենք հոն զիրար:

Պիտ՝ ճանչնա՞նք զիրար հոն,

Պիտ՝ ճանչնանք մենք հոն զիրար:

2. Երբ հանգիպին մեզ սուրբերն զերն,  
Նաև մեր սիրելիներն.

Արդեօք զիրար պիտ՝ ճանչնա՞նք մենք,  
Երբ զանոնք հոն ողջունենք.

Հոս տեղ մարդու ձեւ կըրէին,

Հոն ի՞նչպէս պիտ՝ երևին,

Պիտ՝ սեղմե՞նք զանոնք սըրտի վրայ:

Սիրելիք հոն գրանեկ կա՞յ:

Պիտ՝ հանչանք, զիրար հոն...

3. Այս քաղցր խորհուրդն ինձ ուժ կուտայ,  
Սիրտս ճնշուած կը թեթեւնայ,

Թէ զերն պիտ՝ տեսնեմ ես իմ Տէրօ,

Պիտ՝ գըտնեմ սիրելիներս.

Մեր սիրելիք շատոնց մեռած,

Սուրբ արեամբ փրկչին փրկուած,

Ի՞նչ խըրախոյս, ի՞նչ մեծ բերկրանք,

Հոն պիտի զանոնք ճանչնանք:

Պիտ՝ հանչանք զիրար հոն...



# ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՐԱԳԱՆԵՐ

521 Ն Ո Ր Տ Ա Ր Ի Սողմ. 65. 11.

1. Շընորհաւոր այս նոր տարւոյն,  
Շրջանը գայ բարին.  
Ըլլայ մեզ ամէնուս սիրոյն,  
Յարգանաց հաւաստին.  
Շատ տարիներ թող փոփոխին,  
Մեր սիրտ մընայ նոյնը,  
Յոյս ու հաւատք սէր ընդ նոցին,  
Ըլլայ մեր սկզբունքը:
2. Արարչին վըրայ յոյս դընենք,  
Հաւատանք գըթածին.  
Բոլոր սրտով Ձինքը սիրենք,  
Գոհ ըլլանք տուածին.  
Աշխատինք որ Տէր Աստուծմէ,  
Ընդունինք շընորհներ.  
Ձերձ մընալով փորձանքներէ,  
Հոլովինք շատ տարիներ:
3. Ո՛վ Տէր պահէ փորձանքներէ,  
Մեզ բանաւորներըս.  
Ազատէ մեզ չարիքներէ,  
Քեզ յուսացողներըս.  
Ամանորի այս շրջանին,  
Թող յաջորդեն բարիք.  
Սէր ու հաւատք միտրանին,  
Թող հեռացունեն չարիք:

522 ԱԼԵԼՈՒԻԱ. ՓՅՈՒԲ ՏԷՐՈՋ. Սաղմ 148. 3:

Ք Ո՛հ, աստղեր բարձր գովեցէք,  
 Գանզի հոս է մեծ իշխան.  
 Կովեցէք ինչպէս հովիւներ,  
 Բեթլէհէմի գառախն յրան.  
 Ո՛հ, ի՛նչ մեծ գանձ. ո՛հ, ի՛նչ մեծ գանձ,  
 Ո՛հ. ի՛նչ մեծ գանձ.  
 Մըսրին մէջ մեղի արուած,  
 Ալէլուիա, փառք Տէրոջ,  
 Ալէլուիա, փառք Տէրոջ,  
 Ալէլուիա. փառք Տէրոջ,  
 Անոր փառք, պատիւ տանք մենք:

2. Ինք մոլորածներուն Փրկիչ.  
 Կը բուժէ մեղաւորներ,  
 Կը շնորհէ, ներում, գութ և սէր,  
 Մեղքով բեռնաւորուածներ,  
 Փառք տանք Անոր,  
 Տիեզերքի Փրկիչին:  
 Սլելուիա փառք Տէրոյ ...:

3. Օ՛ն ցնծութեան երգ երգեցէք,  
 Բարձր ձայնով գովեցէք.  
 Իր Սուրբ Աւետարանին փող,  
 Հնչէ միշտ մաքուր ձայնով,  
 Յնձումի երգ,  
 Թող լսուի երկրէ երկիր,  
 Ալէլուիա փառք Տէրոյ ...:  
 Անոր փառք, պատիւ տանք մենք, Ամէն:

## 523 ՄԵԶ ԾՆԱԻ ՓՐԿԻԶ ԵՍՈՒՅՑ

Յաւել, Հոգ, Երգ 430

1. Ոսկի փողերն թող դուռան,  
Թող զարթնուն աղբերն համայն,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

Տես հոն աստղը հրաշափառ,  
Շողայ յերկնից ի կամար,  
Սէր նըշուէ կենարար,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

Ալէլուիա գողենք Տէրն,  
Օրհնարեր է այս այգ ջինջ:

Ալէլուիա, Ալէլուիա,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

2. Արծաթ զանգակներ հնչեն,  
Թող արձագանգ տան լեռներն,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

Վախ, կասկած թող անհետին,  
Սրտեր խայտան ցնծագին,  
Այս է պարտութիւն մեղքին,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

Ալէլուիա զովեմք Տէրն....

3. Թող երգէ ամէն բերան,  
Զի այս է մեծ Յորեկան,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

Երգեցէք զի տիրէ Տէրն,  
Փրկութեան հոսին գետերն,  
Աւագ գործն է աւարտեր,  
Մեզ ծնաւ Փրկիչ:

Ալէլուիա զովեմք Տէրն....

## 524 Թ Ի Ս Ո Ւ Ս Ծ Ն Ա Ի Մատթ. 1. 23:

1. Տեսէք սիրուն ծննդեան ծառ,  
Տեսէք փայլի ի՛նչ պայծառ.  
Մ՛հ, ի՛նչ գիշեր հիանալի,  
Յիսուս ծընաւ սիրելի:
2. Ամէն աչքեր խանդով վաւին,  
Բեռնաւորուած սա ծառին.  
Ամէն սիրտեր արդ թող ցընծան,  
Զի ծնաւ Յիսուս Մեսիան:
3. Յիսուս Փրկիչ, Դու ինձ համար,  
Երկնից իջար մեր ախարհ.  
Դու որ ինձի կեանք ես տուեր,  
Կուսամ սիրալըս Քեզ նուէր:

## 525 Փ Ր Կ Ր Զ Մ Ր Ծ Ն Ս Ի Ղուկ. 2. 11, 12:

1. Յընծայից քաղցր երգեր թող թուչին ի վեր,  
Գովելու մեծածայն նորածին Արքայն.  
Ոն ի սիրտ զո արթուն մաղթենք մենք ողջոյն,  
Մեր Փրկչին մեծազօր որ ծնաւ այսօր:
2. Կը նեճէ ի մօրին մանուկ երկնային,  
Եւ մայրն ալ կորովով կը հակէ իւր քով.  
Իսկ հեռուն կապուտակ, երկնից ի յասակ,  
Կը փայլի յոյժ պայծառ, աստղիկ լուսավառ:
3. Օն մտէք համարձակ, թէպէտ չունենաք,  
Ընծաներ մեծագին, կընդրուկ և ըզմուռս.  
Նս կ'ուզէ քան զգանձ, ընծայ գերազանց,  
Զոր ամէն ոք կընայ առնել զալ առ Նա:

## 526 ՓՍՈՒՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ Ղուկ. 2. 14.

1. Ո՞հ, լսէ լո՛րկ դաշախն մէջ,  
 Մեղեգին հրեշտակաց.  
 Որ կ'երգեն ահա ձեզի խաղաղութիւն,  
 Յիսուս ծնաւ այսօր,  
 Երգեցէք, սաղմոս ըսէք,  
 Միսիային Սուրբ անունին.  
 Տիեզերք արձագանդեն,  
 Տէր Յիսուս Քրիստոս ծնաւ այսօր.  
 Փառք ի բարձունս Աստուծոյ՝ Թագաւորին,  
 Ալէլուիա, Աստուծոյ փառք ի բարձունս.  
 Թող երկինք արձագանդեն,  
 Երկրի վրայ խաղաղութիւն,  
 Եւ մարդոց մէջ տիրէ սէր հաճութիւն,  
 Փառք ի բարձունս Տէր Աստուծոյ,  
 Եւ երկիր խաղաղութիւն,  
 Յնձա երկիր երկինք.  
 Քրիստոս պիտի թագաւորէ.  
 Փառք ի բարձունս Տէր Աստուծոյ,  
 Եւ երկիր խաղաղութիւն,  
 Խաղաղութիւն և մարդոց մէջ հաճութիւն.

## 527 ՁՈՒՆԵՐ ՄԱՀԻՃ Ղուկ. 9. 58.

1. Ով սուրբ ծնունդ սղջոյն,  
 Քաղցր օր բոլոր տարւոյն.  
 Օր որ ծնաւ Փրկիչ՝ Յիսուս,  
 Որ զԱյն օրհնեց մեր Հայր.  
 Ձունէր փափուկ մահիճ,  
 Ոչ ալ բարձ գլխին տակ,  
 Երբ նոր ծնած Յիսուս մանկան,  
 Մոզերն ի տես նկան:

2. Ո՛վ սուրբ ծնունդ ողջոյն,  
 Ո՛վ օր ցնծմանց հոգւոյն,  
 Դեղեալ անյոյսն ու խեղճ անտէրն,  
 Քեզմով կ'ըլլան ուրախ.  
 Խեղճերն մենք չենք մտռնար.  
 Զանոնք պիտ' կերակրենք,  
 Դեռ օրն չեկան սուրբ ծննդեան,  
 Այս պարտքն բնինք լման:

## 528 ԱՊՇԱԾ ՀՈՎԻԻՔ ԴՈՒԿ. 2. 13—16.

1. Դարեր առաջ ձայնեց բարձրերն,  
 Թշուառ հոգւոց լուրն անդին,  
 Ու այդ ազգու մեծ ձայնին,  
 Յնծայ երկիր ու երկինք.  
 Անբիծ հրեշտակք երկնային,  
 Պաղեսսօինի դաշտաց մէջ,  
 Լուր հաշտութեան երգեցին.  
 Մեղեցին հնչէ անվերջ:  
 Ապշած հովիւք հիանօք,  
 Տեսան այս վեհ տեսարան.  
 Բեթլէհէմ տարին այս լուրը արտօրնօք,  
 Ուր մօրին մէջ մանուկ գըտան:
2. Որչափ վսեմ էր այն պատկեր,  
 Մանուկ հիւր մը երկնային.  
 Թողած երկին վար իջեր,  
 Հանգչի լուր ծոցն մտորին,  
 Երկնից կամարն, ջահն, աստղեր,  
 Պարզէ այս դէպքն ահաւոր:

Հեռու երկրաց աւետիս տայ,  
Տէրն Արքայ եկաւ այսօր,  
Ապսամ հավիւք հիանօք . . . :

3. Ինչո՞ւ իջար բարձրէն մանուկ,  
Ինչ էր քուկին նպատակ,  
Փրբանդ խեղճ էր և պարզուկ,  
Աշխարհ քեզմէ չէր գիտակ,  
Ինչ էր քու գործ վառաւոր,  
Այրած սրտեր լոկ գիտին,  
Թէպէտ մանուկ եւ անզօր,  
Երկիրք երկիր ձնունդդ պատմին,  
Ապսամ հավիւք հիանօք . . . :

## 529 ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Դուկ. 24. 6.

1. Բարի հրեշտակ մ'այս առաւօտ,  
Թըռչրաւելով անկողնիս մօտ,  
Ժպտուն, զուարթ, մանկիկ՝ ըսաւ,  
Ել եւ երգէ, Քրիստոս Յարեաւ :
2. Սիրալըս լեցուած սուրբ հրճուանքով,  
Ես ալ կ'երգեմ թէև թոթով,  
Բայց մանկական անոյշ լեզուաւ,  
Քրիստոս Յարեաւ, Քրիստոս Յարեաւ :
3. Եւ կը լըսեմ ահա այսօր,  
Մարգիկ, հրեշտակք, աշխարհ բոլոր,  
Կ'երգեն անոյշ եղանակաւ,  
Այս ազուր երգն, Քրիստոս Յարեաւ :

## 530 ՅԱՐՈՒՑԵԱԼ Է ՏԷՐ Ղուկ. 24. 6.

1. Սուրբ յարութեան զանգակք հնչեն,  
Հնուս և մօտ պատգամ խրկեն.  
Հնչուն ձայնով կարծես կ'ըսեն,  
Յարուցեալ է Տէրն մեր այսօր,  
    Լսեցէք զանգակներ,  
    Յարուցեալ է Տէրն մեր այօր,  
    Լսեցէք զանգակներ,  
    Յարուցեալ է Տէրն այսօր:
2. Կը տարածեն քաղցր զանգակներ,  
Սրհնեալ խորհուրդ քաղցր լուրեր.  
Յիսուս կ'ապրի խաչեալ Տէրն մեր,  
Յարուցեալ է Տէրն մեր այսօր,  
    Լսեցէ՛ք զանգակներ . . . :
3. Հնչեցուցէք մօտէն հեռուէն,  
Արձագանդեն երկնից աստղէն.  
Լեռանց գագաթ և ովկէաններ,  
Յարուցեալ է Տէրն մեր այսօր,  
    Լսեցէ՛ք գտնողակներ . . . :

## 531 (370) ՎԱԽ ԶԻԿԱՅ Յովհ. 16. 33.

Երգ թղոց 96

1. Այս ի՞նչ է որ գաղտուկ ինձի կողայ,  
Մա՞հն է այն, մա՞հն է այն.  
Պլպլած կեանքը որ մարել կը ջանայ,  
Մա՞հն է այն, մա՞հն է այն.  
    Թէ որ մահն է, շուտով ամէն  
    Յաւերս պիտի վախչին ինձմէ.

Աչքերս ալ Տէրն պիտի տեսնեն,  
Վախ չկայ յաւիտեան:

2. Իմ վրաս մի՛ լաք, ո՛վ իմ բարեկէմներս,  
Վախ չկայ յաւիտեան.  
Արդ ներուզեցան իմին բոլոր մեղքերս,  
Վախ չկայ յաւիտեան:  
Ձկայ երբեք քոյ իմ աչքիս,  
Որ չի կրնամ նայիլ Փրկչիս,  
Շուտ բարձրանամ պիտի յերկինս,  
Վախ չկայ յաւիտեան:
3. Զարկէք քնարնիդ դուք ո՛վ փրկեալ սուրբեր,  
Վախ չկայ յաւիտեան.  
Թող անդադար լսեմ ձեր քաղցր երգեր,  
Վախ չկայ յաւիտեան:  
Շատ հրեշտակներ յերկնից եկած,  
Անկողինիս շուրջ են պատած.  
Որ զիս տանին աշխարհ վառաց,  
Վախ չկայ յաւիտեան:
4. Ահա՛ Տէրոջըս ձայնը կը լսեմ,  
Վախ չկայ յաւիտեան.  
Զայն մեծ ցնծմամբ շուտով պիտի տեսնեմ,  
Վախ չկայ յաւիտեան:  
Մնաք բարեաւ, արդ Տէրն ընդ ձեզ,  
Ալ չեմ կրնար կենայ ես հոս.  
Հրաւէր կայ ինձ Տէր Աստուծմէն,  
Վախ չկայ յաւիտեան:
5. Ողջոյն ընդ ձեզ, արեամբ լուսցեալ խումրեր,  
Իւ շնորհօք փրկեալներ.  
Զիս ալ ձեր մէջ առէք երգենք երգեր,  
Փառարանելով ՂՏէրն:

Ահա՛ բոլոր Աստուածային,  
 Ինգութիւններ եղան իմին.  
 Ալէլուիա, անմահ Գառին,  
 Վախ չկայ յաւիտեան:

## 532 Ք Ա Ղ Յ Ր Օ Ր Ա Ք ե ս . 4 . 1 4 :

(Some sweet day)

1. Միանանք պիտ' օր մը վերն,  
 Քաղցր օր, մի քաղցր օր,  
 Այն տան մէջ ուր տիրէ սէրն,  
 Քաղցր օր, մի քաղցր օր:  
     Քաղցր օր, մի քաղցր օր,  
     Երբ հասնինք ի սուրբ Սիօն,  
     Մայր իմ ֆեղ պիտ' տեսնենք հոն,  
     Քաղցր օր, մի քաղցր օր:
2. Երբ աշխարհս ձգենք ետին,  
 Քաղցր օր, մի քաղցր օր,  
 Յաւ, հառաչ ալ կ'անհետին,  
 Քաղցր օր, մի քաղցր օր:  
     Քաղցր օր, մի քաղցր օր...:
3. Միանանք երբ սիրելեաց,  
 Քաղցր օր, մի քաղցր օր.  
 Պիտ' ըլլանք հաղորդ փառաց,  
 Քաղցր օր, մի քաղցր օր:  
     Քաղցր օր, մի քաղցր օր...:
4. Երբ կ'ելլենք վերին Քանան,  
 Քաղցր օր, մի քաղցր օր.  
 Պիտ' երգենք երգն յալթութեան,  
 Քաղցր օր, մի քաղցր օր:  
     Քաղցր օր, մի քաղցր օր...:

## 533 ՄԸՆԱՔ ԲԱՐԵԱԻ ԲՏԻՄ. 4. 6—8:

1. ձամբօրդ եմ երկինքի, մընա՛ք բա՛րեաւ,  
Եկաւ մահ հըրաւէրս, մընա՛ք բարեա՛ւ.  
Թէպէտ հոգի մէջ մարմինըս պիտի մընայ,  
Հոգիս երկինք կ'երթայ, մընա՛ք բարեա՛ւ:
2. Ինք է ինձ, ո՞վ մայր իմ, մընա՛ք բարեա՛ւ,  
Դուն ալ Հայր իմ ներէ, մընա՛ք բարեա՛ւ.  
Ո՞վ եղբայրներս և սիրելի իմ քոյրերըս,  
Հոգիս երկինք կ'երթայ, մընա՛ք բարեա՛ւ:
3. Հրեշտակք կ'ըսեն երգելով, «բարի եկար»,  
Յիսուս ալ կը կրկնէ, «բարի եկար».  
Հաղարաւոր սուրբեր չորս կողմս շրջապատած,  
Կը գոչեն ինձ «բարի, բարի եկար»:
4. Յիսուս Տէրս կ'ըսէ ինձ «բարի եկար»,  
Առ պըսակղ, դիր գլխիդ, բարի եկար»,  
Հաղարաւոր սուրբեր չորս կողմս շրջապատած,  
Կը գոչեն ինձ «բարի, բարի եկար»:
5. Ո՛հ ի՛նչ, ի՛նչ փառք է այս, փառք Քեզ Տէր իմ,  
Ո՛հ կապչիմ, կ'ըզմայլիմ, փառք Քեզ Տէր իմ,  
Երկինքն եմ, ո՛հ, չեմ երազեր, ա՛հա Տէրն իմ,  
Ի՛ւր փա՛ռք, փառք Քեզ Հայր իմ. փառք Քեզ  
Տէր իմ:

## 534 ՊԵՏԻ ԱՆՅԵԻՆ ՅՈՐԴԱՆԱՆԷՆՔ ՅՈՐ 16. 22:

Այն. 191

1. Անշուշտ շուտով պիտի անցնինք Յորդանանէն,  
Անշուշտ շուտով ալ պատերազմք պիտի լըռեն,  
Ոչ թշնամեաց նեաք մեր սրտեր պիտի խոցեն,  
Ոչ մեր սրտեր, գետեր արեան պիտի հոսին:

2. Ոչ ալ խաւար չկայ աչաց մեր մըթագին,  
 Ե՛ տչ ալ ցաւ պիտի ճանչնայ մեր հէգ հոգին,  
 Լոյսն Աստուծոյ զէմքէն պիտի ո՛հ, զեղանի,  
 Մեր վէրքերուն մեր խոցերուն ըսպեղանի:
3. Անուշ երգեր պիտի թնդան Սիօնի մէջ,  
 Անմահ կենաց արևն պիտի վայլի անշէջ.  
 Թուեր պիտի առնուն յայնժամ մեր հոգիներ,  
 Երթալ խիղախ, թուչիլ սիրոյ Աստուածն ի վեր:
4. Ի զուր դարեր պիտի չափեն մեր խնդութիւն,  
 Իւրաքանչիւր օր նոր պիտի բերէ աւիւն.  
 Այլ զու մարմին իմ երկրաքարչ մնաս բարեաւ,  
 Մնաս բարեաւ աշխարհ՝ կ'երթամ յոյսն իմ  
 Երեաւ:

## 535 ԵՐԿԻՆՔԷՆ ՁԱՅՆ ՄԸ Յայտ. 14. 13:

S. H. W. 580

1. Ու երկինքին ձայն մը լըսեցի որ կ'ըսէ գրէ,  
 «Այսուհետև, այսուհետև,  
 Երանելի են այն մեռելները,  
 Որոնք Տէրօջմով կը նընջեն.  
 Այո, կ'ըսէ հոգին, այո, այո կ'ըսէ Հոգին,  
 Որ իրենց աշխատութենէն,  
 Իրենց աշխատութենէն,  
 Հանգչին, ու իրենց, իրոնց գործքերը իրենց  
 Ետեւէն կ'երթան, ետեւէն կ'երթան»:



# Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ Ք

536 ՀՈՎՏԻՆ ՇՈՒՇԱՆԸ ԵՐԳ. 2. 1.

I've found a friend in Jesus. S. S. S. 104, Արք. 130

1. Յիսուս է իմ բարեկամս, խիստ թանկագին ինձի,  
Հազարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս.

Նա է հովտին շուշանը, Իրմով միայն ունիմ,  
Ինչ որ պէտք է մաքրել իմ բոլոր մեղքերս,  
Վշտաց մէջ մխիթարիչս, Նեղութեան մէջ պաշտ-  
Նա կ'ուզէ Իր վրայ ձրգեմ բոլոր հոգերս. {պանս,  
Նա է հովտին սիրուն շուշանն,

Պայծառ աստղն առտուան.

Հազարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս:

Վրշտաց միջ մխիթարիչս,

Նեղութեան մէջ պաշտպանս,

Նա կ'ուզէ Իր վրայ ձրգեմ բոլոր հոգերս,

(Ալէլուիա) Նա է հովտին սիրուն շուշանն,

Պայծառ աստղն առտուան,

Հազարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս:

2. Նա վերցուց բոլոր ցաւերս, վիշտերս ալ ինք կը  
Փորձութեան մէջ Նա ինձի է ապաստան. {ընց  
Իրեն համար թողում ես կուռքերս պզտիկ աւ  
Ինք պահէ զիս զօրութեամբն անսահման. {մեծ  
Թէև զիս մերժէ աշխարհն, և Ոստանն յարձա-  
Յիսուսով յաղթութիւն թանձնամ պիտի. {կի  
Նա է հովտին սիրուն շուշանն,

Պայծառ աստղն առտուան,

Հազարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս:

Վրցաց մէջ մխիթարիչս...

3. Իմ Տէրս բնաւ զիս չը թողուր, զի է հաւատարիմ  
 Հերիք որ հոս հաւատքով ընթացքս վաղեմ.  
 Իր կրակն բողբոսիքս պատէ վախնայու բան չու-  
 Մաննայովն կարօտ հոգիս յագեցնեմ, |նիմ  
 Եւ երբ վառքով համբառնամ, և օրհնեալ դէմքն  
 տեսնամ,  
 Հոն ներկայութեամբն պիտի ես կշտանամ.  
 Նա է հովտին սիրուն շուշանն,  
 Պայծառ աստղն առտուան.  
 Հաղարաց մէջ էն գեղեցիկն իմ հոգւոյս,  
 Վեսաց մէջ միսիքարիչս...

### 537 (156) Կ Ա Ն Ք Ն Ա Ծ Բ Կ Ի Ր Ն . 1 . 20 :

Standing on the promises. S. S. S. 877 Արք. 80

1. Կանգնած Փրկիչ Աստուծոյ խոստմանցը վրայ,  
 Յաւիտեան Անոր անունն վառաբանեմ.  
 Փառք ի բարձունս բարձրաձայն պիտի շարեմ,  
 Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ:  
 Կանգնած, Կանգնած,  
 Կանգնած իմ Փրկիչ Աստուծոյ խոստմանցը  
 Կանգնած, Կանգնած, [վրայ,  
 Կանգնած եմ Աստուծոյ խոստմանցը վրայ:
2. Կանգնած խոստմանցը վրայ որ բնաւ չին վիչիր  
 Թէ և յարձակին վախ. տարակոյս կամ մահ,  
 Կենդանի Աստուծոյ խօսքն հաստատ մնայ,  
 Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ:  
 Կանգնած, Կանգնած...

3. Կանգնած խոստմանցը վրայ այժմ յստակ տես-  
Արեամբն կատարեալ սրբութիւն ինձ համար [նեմ  
Քրիստոսով ազատ կ'օրհնեմ Զինք անդադար,  
Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,  
Կանգնած, կանգնած . . . :
4. Կանգնած խոստմանցը վրայ Յիսուս Քրիստոսի,  
Սիրոյն կապովն հետն միացած յաւիտեան,  
Սուրբովն Հոգւոյն ամէն օր եմ յաղթական,  
Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,  
Կանգնած, կանգնած . . . :
5. Կանգնած խոստմանցը վրայ՝ չեմ կրնար իյնալ  
Հոգւոյն ձայնն ուղղիչս է. պաշտպանս մինչեւ  
Փրկիչս ալ ամէնը ամէն բանի մէջ, [վերջ,  
Կանգնած Աստուծոյ խոստմանցը վրայ,  
Կանգնած, կանգնած . . . :

538 2 Ե Ռ Ք Է Ս Բ Ռ Ն Է Ե սա. 41. 13:

Take Thou my hand... S. S. S. 532, Արք. 106

1. Տէր իմ Դուն ձեռքէս բռնէ, ընտրէ ճամբաս,  
Ընչ թէ իմ կեանքս թող սորվիմ ըսել սրտանց,  
Թէ փոթորիկք յարձակին՝ Դուն լաւ գիտես,  
Երբ Տէրն ըլլայ ինձ պաշտպան միշտ գովեմ ես:
2. Տէր իմ, Դուն ձեռքէս բռնէ, դի եմ փուկինդ,  
Սուրբ Հոգւովդ խնդրեմ լեցուր սիրտս համովին  
Որ երբ փորձանք յարձակին չտամ տեղ,  
Քեզ համար ապրիմ մեռնիմ, Տէր սիրելի:
3. Տէր իմ, Դու ձեռքէս բռնէ, միշտ քեզ նայիմ,  
Օգնէ ինձ որ պատկերից ես նրմանիմ.  
Քու վրանիդ մէջ թող հոգիս միշտ բնակի,  
Պահէ զիս, Հա՛յր. պահէ զիս, մօտ, մօտ քեզի:

### 539 (156) Յ Ո Յ Ս Ս Ք Ե Ձ Ի Է Ս աղմ. 143. 8.

When morning lights the eastern skies. G. H. 554

1. Պայծառազեղ զէմքիդ Յիսուս,  
 Եզեր եմ սիրահար.  
 Գունն ես իմ Տէր իմ կեանքս և լոյս,  
 Ուրիշ մը չեմ ճանչնար:  
     Իմ յոյսըս ալ քեզ է,  
     Իմ յոյսըս ալ քեզ է.  
 Բաց Տէր իմ սիրտս առ քեզ քաշէ,  
 Իմ յոյսըս ալ քեզ է:
2. Ճամբաներդ են ինձ օգտակար,  
 Հոգւոյս են առաջնորդ.  
 Առանց քեզի կ'ըլլամ տըկար,  
 Քեզմով ուժիդ հաղորդ:  
     Իմ յոյսըս ալ քեզ է...
3. Եկ մօտ ինձի ով Տէր Փրկիչ,  
 Փոխէ իմ կեանքս այս բիրտ.  
 Առ քեզ կուտամ ամենայն ինչ,  
 Դըրամ և ինչք և սիրտ:  
     Իմ յոյսըս ալ քեզ է...

### 540 Յ Ի Ս Ո Ի Ս Ի Ա Ն Ո Ի Ն Ը Յ ով. 14. 12, 14.

Take the name of Jesus with you. S. S. S. 91

1. Ոէր անհուն սիրուն Յիսուսի,  
 Պահէ սրտից ի յստապի  
 Զորաւիգն է նա անյոյսին,  
 Սիրոյ ազրիւր անասակ:

Քաղցր Անունն Յիսուսի,  
 Լոյս երկնից և յոյս երկրի,  
 Քաղցր Անունն Յիսուսի,  
 Լոյս երկնից և յոյս երկրի:

2. Այգ սուրբ Անունն վեհ և անգին,  
 Պաշտպանդ է ընդդէմ չարեաց,  
 Ամպք վշտաց երբ զքեզ պատեն,  
 Խնդրէ զքեզ Բազկատարած:  
 Քաղցր Անունն Յիսուսի...

3. Սուրբ Անուամբ սիրունն Յիսուսի,  
 Սիրտք մեր հրճուանօք լցուին,  
 Եւ իր սիրասունն բազկաց մէջ,  
 Սիրոյ երգ մեր կը լսուին:  
 Քաղցր Անունն Յիսուսի...

4. Քաղցր Անունն Փրկիչ Յիսուսի,  
 Թէ սուրբ սրտիւ ձերազրենք,  
 Թագաւորաց Թագաւորին,  
 Փառաց պսակն պիտի առնենք:  
 Քաղցր Անունն Յիսուսի...

541 (173) Հ Ա Յ Ր Ս Գ Ի Տ Է Յ որ 23. 10.

I know my heav'nly Father knows. Alex. 106

1. Գիտեմ թ'երկնաւոր Հայրս գիտէ,  
 Մըրթիկն որ ճամբաս կ'արգիլէ,  
 Բայց ինք կրնայ ամպերն վտարել,  
 Եւ իմ խաւարս լոյսի փոխել,  
 Եւ իմ խաւարս լոյսի փոխել:

Գիտէ գիտէ.

Բսպառնացող փութորիկներն.

Գիտէ, գիտէ.

Եւ կը մեղմէ սաստիկ հովերն:

2. Գիտեմ թ'երկնաւոր Հայրս գիտէ,

Ինչ քարման իմ ցաւիս պէտք է.

Եւ սիրոյն հըպամարն երկնային,

Բուժէ խոցեալ հոգիս կրկին.

Բուժէ խոցեալ հոգիս կրկին:

Գիտէ, գիտէ...

3. Գիտեմ թ'երնաւոր Հայրս գիտէ,

Որչափ անզօր եմ ես ինձմէ.

Յաղթել անթիւ թըշնամիներս.

Եւ ինք զիս կ'պահէ մինչև վերջ,

Եւ ինք զիս կ'պահէ մինչև վերջ:

Գիտէ, գիտէ...

4. Գիտեմ թ'երկնաւոր Հայրս գիտէ,

Իրբ այս կեանքս հոս վերջ պիտ' գըտնէ.

Տո'ւր, Տէ'ր, այն ժամն երբ քովդ կայնիմ,

Սիրոյդ հովանւոյն տակ հանգչիմ.

Սիրոյդ հովանւոյն տակ հաղչիմ:

Գիտէ, գիտէ...

## 542 ԳԻՏԵՄ ՓՐԿՉԻՍ ԶԱՅՆ ՅՈՎԿ. 10. 27.

1 Գիտեմ Փրկչիս ձայնն է որ միշտ կը վաժսայ ինձ  
Մի' վախնար, մի' վախնար.

Գիտեմ Անոր շնորհաց հըզօր բազուկները,  
Են ապաստան ինձի համար:

Գիտեմ կարող է նա պահել,  
 Ինչ որ յանձնեմ ես իր խնամքին,  
 Գիտեմ փորձանք երբ են ահեղ,  
 Նա կը լըսէ իմ ազօթքին:

2. Գիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փսփսայ ինձ  
 Խաղաղութիւնս կուտամ քեզի:

Այսպէս իրմով անդորրը բլլալ սորված եմ ես,  
 Իր կամքին մէջ կամքս է թաղուած:

Գիտեմ կարող է նա...

3. Գիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փսփսայ ինձ  
 Դուն իմս ես, Դուն իմս ես:

Թէեւ ճամբայք բլլայ տխուր փորձանքներ շատ,  
 Իմ շնորհքս է քեզ բաւական:

Գիտեմ կարող է նա ...

4. Գիտեմ փրկչիս ձայնն է որ միշտ կը փսփսայ ինձ  
 Մօտ է երկինք, մօտ է երկինք:

Շուտով կ'անցնի այս աշխարհը փառքերով սին  
 Դուն պիտ' զտնես իմ քովս հանգիստ:

Գիտեմ կարող է նա...

## 543 ՇԵՈՐԼՔՈՎ, ՅԱՂԹՈՒԹԻԻՆ Յայտ. 6. 2:

Conquering now and still to conquer. S. S. S. 673

1. Յաղթուած ենէ՝ միշտ ի յաղթուածին հեծնէ Ար-  
 քայ մի զօրեղ,

Կ'առաջնորդէ իր զօրքերն ընտիր, զէպ ի մարտ  
 մեծ և ահեղ:

Տես ինչ քաջութեամբ կ'արշաւեն, զինեալ զէն-  
 քերով փայլուն,

Անուամբն իրենց առաջնորդին, ահա երգեն և  
 ունիւցան:

Միայն շնորհօքն Տէր Յիսուս՝ յաղթուածիւն  
մեզ պիտ' արուի,  
Զօրաւորներն պիտ' կորնչին, վաղողներն պիտ'  
չազատին:

2. Յաղթուածենէ՛ միշտ ի յաղթուածիւն՝ ո՞վ է Ար-  
քայն այս հրգօր,  
Ուսկի՞ց բանակք որ կ'օրհնաբանեն իր սուրբ  
Անուն փառաւոր.  
Նա է մեր Տէրն՝ Փրկիչ Աստուած, խաղաղու-  
թեան մեծ իշխանն,  
Նոքա՛ աստղեր որ պիտ' փայլին ի մէջ արքա-  
յութեան:

Միայն շնորհօքն Տէր Յիսուսի ...

3. Յաղթուածենէ՛ միշտ ի յաղթուածիւն, Յիսուս իշ-  
խանդ ամենուն,  
Թագեր, գահեր շուտ պիտի իյնան, տասպալին  
ալ տէրութիւնք.  
Բայց զօրքերդ որ Գեղ հետինն հաւատարիմ  
մինչ ի մահ  
Քու տանդ մէջ պիտ' գտնեն հանդիստ, երբ հոս  
սլայքարն լըմնայ:

Միայն շնորհօքն Տէր Յիսուսի ...

544 Պ Ի Տ Ի Լ Ե Տ Ե Ի Ի Մ Յովհ. 12. 26,

Down in the valley with my Saviour. S. S. S. 529

1. Դէպ ի փայլուն դաշտերն պիտ' Փրկչիս հետևիմ  
Ուր կայ ծաղկեայ արօտ, և հանդարտ ջուրք  
հոսին.

Ուր որ ինք առաջնորդէ՝ պիտ' իրեն հետեւիմ,  
Մինչև ձեռքէն վայրուն պրօսակս ընդունիմ:

Պիտի հետեւիմ, Յիսուսի հետեւիմ,

Ուր որ ինք զիս տանի՝ պիտի հետեւիմ.

Պիտի հետեւիմ, Յիսուսի հետեւիմ,

Ուր որ առաջնորդէ պիտի հետեւիմ:

2. Դէպ ի տըխուր մութ ձորն պիտ' փրկչիս հետեւիմ  
Ուր մրբիկն է վայրենի և հոսանքս ուժգին.

Իր ձեռքն երբ զիս բռնէ չեմ ըլլար ևս առանձին,  
Երբ Տէրն քովս է կրնամ տոկալ վըստանգին:

Պիտի հետեւիմ, Յիսուսի հետեւիմ . . . :

3. Ի դաշտ, ի ձոր կամ լեռնոս ճամբայ դժուարին,  
Կ'ուզեմ հոգիս ըլլայ փրկչիս հետ միասին.

Կարող է զիս առաջնորդել իր քայլած ճամբէն,  
Մինչև տունս երկնային՝ ուր բնակին սուրբերն:

Պիտի հետեւիմ, Յիսուսի հետեւիմ . . . :

## 545 (310) Փրկչիս Դէմքը Յայտ. 22. 4:

When my life work is ended. S. S. S. 967. Արք. 8

1. Երբ կեսանքիս գործն աւարտեմ և մութ գետէն  
ևս անցնիմ,

Եւ աչքն ոսկեղէն հեռուէն նշմարեմ.

Իմ փրկիչս պիտի ճանչնամ երբ միւս եզերքն  
ևս հասնիմ,

Եւ նախ իր քաղցր ժըպիտովն ողջունեմ:

Պիտ' ճանչնամ Զինք, պիտ' ճանչնամ Զինք,

Երբ վրկեալ ես կայնիմ իրեն քով.

Պիտ' ճանչնամ Զինք, պիտ' ճանչնամ Զինք,

Իր ձեռաց վէրքերու նշաններով:

2. Հոգիս ի՛նչպէս պիտ' թրթռայ երբ տեսնեմ իր  
 դէմքն սիրուն,  
 Եւ լուսավառ աչքերն իմ վըրաս փայլին.  
 Եւ ինչպէս զեղուն սրտով պիտի օրհնեմ սէրն  
 անհուն,  
 Որ պատրաստեց ինձ օթեւան երկնային,  
 Պիտ' նաեղնամ զիսf . . . :
3. Ո՛հ, սիրելիքս փառաց մէջ կ'ըսպասեն զիս ող-  
 ջունել,  
 Եւ կը յիշեմ արխուր ժամն մեր բաժանման,  
 Հոն կ'ուզեն եզեմի զաշտերուն մէջ զիս ընդ-  
 գրկել,  
 Բայց առաջ փրկչիս դէմքն տեսնել ես կ'անձկամ:  
 Պիտ' նաեղնամ զիսf . . . :

546 Փրկիչի ԿԱՐՈՂ Է Մատթ. 11. 28—30.

Come ye disconsolate. S. S. S. 719

1. Ե՛կ, ո՛վ անմըխիթար է՞ր կը վարանիս,  
 Եկ շնորհաց գահին, ի ծունր խոնարհ.  
 Հոս բեր սիրտդ վիրաւոր, հերիք տանջուիս,  
 Զիք ցաւ որ Փրկիչդ բուժել չի կրնար:
2. Տրտմածին կայ ցնծում, լոյս մոլորեալին,  
 Յոյս անըսպառ՝ անկեղծ զղջացողին.  
 Մըխիթարիչ Հոգին խօսի սիրոյ բարբառն,  
 Զիք ցաւ որ Փրկիչդ բուժել չի կրնար:
3. Ահա հոս կենաց հացն և ջուրն յորդառատ,  
 Հօրն ամոռէն հոսի ջինջ, անընդհատ.  
 Եկ սիրոյ խնճոյքին, մերժուիլ անհրնար,  
 Զիք ցաւ որ Փրկիչդ բուժել չի կրնար:

## 547 (202) Վ Ա Ս Ն Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Կող. Յ. 17.

All for Jesus, all for Jesus. S V. 391, S. S. S. 1179

1. Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Տամ զինչս ամէն ի նուէր.  
Խորհուրդ ու խօսք, գործերս բարի,  
Միայն լինին իւր ի սէր:  
Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Տամ զինչս ամէն ի նուէր.  
Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Ապրիմ միայն իւր ի սէր:
2. Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Ոտքերս քալին անխոտոր,  
Ոչքերս յառին առ նա միայն,  
Շրթներս օրհնեն ամէն օր:  
Զկռքերս պատրաստ յիւր պաշտպան,  
Ոտքերս քալին անխոտոր  
Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Շրթներս օրհնեն ամէն օր:
3. Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Թողուցի ամէն սին յոյս.  
Գլտայ իր սէրն, իմ կեանքս է նա,  
Իմ պաշտելի Տէրս Յիսուս:  
Զի երբ հոգիս գլտաւ զնա,  
Թողուցի ամէն սին յոյս,  
Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Իմ պաշտելի Տէրս Յիսուս:
4. Վասն Յիսուսի, վասն Յիսուսի,  
Տիեզերաց վեհ Աբքայն՝  
Կ'ընէ և զիս կըցորդ փառքի.  
Աբքայութեանն յաւիտեան:

Այս ի՛նչ շքնորհք հիանալի,  
 Վասն ինձ խաչեալ Յիսուսի.  
 Վասն Յիսուսի. վասն Յիսուսի,  
 Ապրիմ գործեմ ալ պիտի՛

548 ՕՆ ՊԱՇՏԵՆՔ Սաղմ. 145. 10.

O worship the king all glorious. G. II. 442

Արք. 125

1. Օ՛ն, պաշտենք Արքայն՝ վառաց մէջ բնակողն,  
 Երգք մեր բարձրանան, օրհնել մեզ սիրողն  
 Նա է մեր հինաւուրցն, վահանն և պաշտպանն  
 Սերովբէք՝ բիրք բիրոց իրեն միշտ վառք  
 լտան:
2. Օրհնենք զօրութիւնն՝ լուսոյ Աստուծոյն,  
 Իր շնորհք ալ անհուն պատմենք ամէնուն.  
 Մալթ ամպերն են իր կառքն, զայրոյթն խիստ  
 անեղ,  
 Փոթորկին մէջ իր վառքն ցոլայ յոյժ շքեղ:
3. Իր խնամքն Հայրական, պատմել ո՞վ կրնայ,  
 Բարիքն անպայման՝ թափին միշտ մեր վրայ.  
 Զիւնազարդ լիռ ու սար, արևն, անձրևներ,  
 Ոռոգեն մեզ համար, երկիրն պտղաբեր:
4. Որդիք մենք տրկար մարդոց հողեղէն,  
 Յուսանք առ քեզ յար, ո՞վ օգնողդ վերէն.  
 Քու ողորմութիւններ են ինչ գըլթալից,  
 Դու ևս միշտ պաշտպան մեր, Աստուած ու Փրկիչ:



# Շ Ա Ր Թ Ի Ք Ա Ն Ե Ր

549 Չ Ա Ր Թ Ի Ք Մատթ. 25. 6:

Ձարթի՛ք լիառք իմ զարթի՛ք, եւ ես զարթեալց առաւօտուց. Ալէլուիա:

Ձարթի՛ք ընդ զուարթուես մանկունք վերինն Սիօնի. Ալէլուիա:

Ձարթի՛ք սրղիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրըն լուսոյ. Ալէլուիա:

Ձարթի՛ք փրկեալք արեամբ, եւ տո՛ւք զփառըս փրկողին. Ալէլուիա:

Ձարթի՛ք նոր ժողովուրդք. նոր երգս առեալ նորոգողին. Ալէլուիա:

Ձարթի՛ք հարստունք հոգևով. սղասեալք գալոյ սուրբ փեսային. Ալէլուիա:

Ձարթի՛ք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն. Ալէլուիա:

Ձարթի՛ք սպարաւտեցէք իւզ լապտերաց զջերմ արտասուս. Ալէլուիա:

Ձարթի՛ք եւ մի՛ ննջէք նըման յիմար կուսից ներհէք. Ալէլուիա:

550 Ա Ռ Ա Ի Օ Տ Լ Ո Ւ Ս Ո Յ Սաղմ. 108. 1-3:

1. Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ձագեա: Բղխուլի ի հօրէ, բղխեա ի հոգւոյս, բան քեզ ի հաճոյս:

2. Գանձդ սղորմութեան, գանձիդ ձածկելոյ, գրտող զիս արա: Գուռն սղորմութեան, զաւանողիս բաց, գասեցո վերնոցն:

3. Երբեակ միութիւն, եղիւոց խնամող. եւ ինձ ողորմա: Ձարթի՛ր, Տէր. յօգնել, զարթո ըլլժմբհալք, զուարթնոց նըմաիլի:

4. Էդ Հայր անըսկիրըն. Էակից Որդի, է միշտ Սուրբ Հոգի՛ ընկալ զիս զըթամ, ընկալ ողորմամ, ընկալ մարդաւեր:
5. Թագաւոր փառաց, թողութեանց սըւող, թող ինձ ըզյանցանս: Թողո՛ւող բարեաց, Թողո՛վեա և զիս. Թողո՛վս անդրանկաց:
6. Ի Քէն Տէր հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժշկու թիւն: Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս, լուծանող ցաւոյս:
7. Խորհրդոց գիտող. խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր: Ծընունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեա լոյս փառաց:
8. Կենարար Փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա ըզգլորեալս: Հաստեա հաւատով, հաստատեա յուսով, հիմնեցս սիրով:
9. Չայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա: Ղամբարամբ լուսոյ ղեկավար ճարտար, ղօղեալս սմրացո:
10. Ճօռադայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց՝ ճեպել ի յերկինս: Միածինըդ հօր, մոյժ զիս յառադաստ, մաքուր հարսանեացդ:
11. Յորժամ գաս փառօք. յահագին աւուրն, յիշեա զիս Քրիստոս: Նորոգող հնու թեանց, նորոգեա և զիս, նորոգ վարդարեա:
12. Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն: Ուրախացո, Տէր, ոգւոյս փրկութեամբ. ոյր վասն եմ ի սուգ:
13. Չար մըշակողին, չար սերմանց նորին, չօրացո զսպուռն: Չարգեւիչ բարեաց, պարգեւեա իմոց. պարտեացս թողութիւն:
14. Չուր շնորհեա աչացո. Չերմ հեղուլ վարսօրս, չնջել ըզյանցանս: Թեւ ինըդ քաղցու, սամ հոգւոյս արբո. սան ցոյց ինձ լուսոյ:

15. Սէր ա՛յ ուն Յիսուս, սիրով քով ճմլեա, սիրա  
իմ քարեղէն. վասն գըթուլթեան, վասն ողոր-  
մութեան, վերլստին կեցո:
- 16 Տենչալւոյդ տեսւեամբ, տուր ինձ յալոնալ, Տէր  
Յիսուս քրիստոս. Բարունդ երկնաւոր, բտահա  
ղաչակերտս, բամից երկնս յնոց:
- 17 Յօղ արեան Քո Տէր, ցոյեա ի հողիս, ցըն-  
ծասցէ անձն իմ, իլւծեալըս մեղօք, լիւծեալ  
աղաչեմ, լիսեղ ինձ բարիս:
18. Փրկիչ բոլորից, փութա գիս փրկել. փորձու-  
թեանց մեղաց, Քաւիչ յանցանաց, քաւեա  
գորհնարանս, Քեզ երգել ըզփառս:

## 551 ԼՈՅՍ ԱՐԱՐԻՉ ԼՈՒՍՈՅ Ա ՅՈՎՆ. 1. 5.

1. Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս. բնակեալդ  
ի լոյս անմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց  
լուսեղինաց օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօ-  
տուս ծագեա ի հողիս մեր ըզլոյս Քո իմանալի:
2. Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար, ան-  
ճառ ծրնունդ Հօր՝ Որդի, յառաջ քան դարե. ա-  
նուն Քո գովեալ ընդ Հօր, ի ծագել լուսոյ առա-  
ւօտուս ծագեա ի հողիս մեր ըզլոյս Քո իմանալի:
3. Լոյս, ի Հօրէ ըզխումն, աղբիւր բարութեան,  
Հոգիդ Սուրբ Աստուծոյ, մանկունք եկեղեցւոյ  
ընդ հրեշտակս ըզՔեզ բարեբանեն. ի ծագել  
լուսոյ առաւօտուս ծագեա ի հողիս մեր...
4. Լոյս, երբեակ և մի անբաժանելի սուրբ եր-  
րորդութիւն, ըզՔեզ ընդ երկնայնոցն երկրա-  
ծինքըս միշտ փառաւորեմք, ի ծագել լուսոյ  
առաւօտուս ծագեա ի հողիս մեր ըզլոյս...

## 552 ԱՂՕԺՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Անեղանելիդ Աստուած, Հայր ամենակալ՝ քն-  
կալ զաղաչանքս մեր, Քոյ պաշտօնէից։

Ի Հօրէ ծագումն անճառ, արեգակն արդար,  
ծագեալ ի յանձինս մեր, զլոյսդ ողորմութեան։

Ի Հօրէ բղխեալ Հոգի, սղբիւք բարութեան.  
լուսով քով լցո՛ ըզմեզ. յայսմ առաւօտսս։

Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուա-  
ծութիւն, զՔեզ խոստովանիմք յաւէտ, Սուրբ եր-  
րորդութիւն։

## 553 ԵՐԴ ԻԻԳԱՅԵՐԻՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ Սաղմ. 113.

Եղիցի անուն Տեառն օրհնալ, ի յայսմ հետէ  
մինչև ի յաւիտեան։

Օրհնեցէք մանկունք ըզՏէր և օրհնեցէք զա-  
նուն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մին-  
չև ի յաւիտեան։

Յարեւելից մինչ ի մուտս արևու օրհնեալ է  
անուն Տեառն, ի յայսմ հետէ մինչև ի յաւիտեան։  
Փա՛ռք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ,  
Հոգւոյն, և այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-  
տենից, Ամէն։ Ի յայսմ հետէ մինչև ի յաւիտեան։

Փա՛ռք Յարութեան Քո Տէր, ո՛չ զաղարեցայց  
Քրիստոս, օրհնել զՔեզ զամենայն աւուրս կենդա-  
նութեան իմոյ։

Փա՛ռք Յարութեան Քո Տէր, ո՛չ զաղարեցայց  
Յիսուս, գովիլ ըզՔեզ ամենայն աւուրս կենդանու-  
թեան իմոյ։

Ես ոչ զադարեցայց փրկիչ, փառաւորել զՔնզ  
զամենայն աւուրս կենդանութեան իմոյ:

Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր՝ ի սրբութիւն  
և օրհնեցէ՛ք զՏէր:

Լուսապայծառ հրեշտակն նստելով՝ ի կենսա-  
տու գերեզմանին, Եւ աւետէր կանանցն Յարևաւ  
Աստուած:

## 554 Ն Ո Ր Ա Ս Տ Ե Ղ Ծ Ե Ա Լ. Յովհ 20. 1—10.

1. Նորաստեղծեալ Բանն յանէից,  
Ի սկրզբանէ զերկինս երկնից  
Եւ գերկնային զօրս անմարմնոց,  
Իմանալեացըն զբարթնոց,  
Եւ բղղալի տարերց քառից,  
Հակառակաց միաբանից,  
Որով յաւէտ փառաբանի  
Երբօրդութիւնն անճառելի:
2. Երեքսրբեան մի տէրութիւն,  
Միով բնութեամբ Աստուածութիւն,  
Լոյսն որ անեղ արարչական,  
Ասաց լինել լոյս եղական.  
Զոր ու ձագեաց յօրն առաջին,  
Միաշաբաթ կիւրապէին,  
Որով յաւէտ փառաբանի  
Երբօրդութիւնն անճառելի:
3. Բարունօրէն բացատրեսցուք,  
Զծածկեալ խորհուրդըն ծանիցուք,  
Զի լոյսն անտես իմանալի,  
Ի սոյն ձագեաց միաշաբաթ  
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.

Եկայք, փրկեալք, ընդ զըւարթնոյն,  
Տուք օրհնութիւն Յարուցելոյն:

4. Աէրըդ սիրով խոնարհեցար,  
Ի փրկութիւն մեր մարմնացար,  
Կոփին մարմնովրն խաչեցար,  
Ի գերեզման մահու եղար:  
Այսօր յարեար Աստուծաբար,  
Ի հրեշտակաց քարոզեցար:  
Եկայք, փրկեալք, ընդ զըւարթնոյն . . . .

5. Երևեցար խնկարերիցն,  
Յողջոյն կենացն ուրախալից,  
Եւ ի լերինըն Գալիլիա,  
Առաքելոց մետասանից,  
Արժանացո զմեզ ընդ նոսին,  
Զքեզ տեսանել յօրըն վերջին,  
Եկայք, փրկեալք, ընդ զըւարթնոյն . . . .

Սիրովնի որդիք, զարթիք,  
Հարսին լուսոյ տուք աւետիք,  
Եթէ փեսայն քո յարուցեալ:  
Քաղթեաց մահու իշխանութեամբ,  
Գայ պըսակէ ըզքեզ փառօք,  
Ել ընդ առաջ պճնեալ զարդօք,  
Երգեա հրդ նոր՝ Յարուցելոյն,  
Ննջեցելոց կինաց պողոյն:

## 555 Գ Ո Վ Ե Ա Ե Ր Ո Ի Ս Ա Ղ Է Մ

Գովեա երուսաղէմ զՏէր, Յարեաւ Քրիստոս ի  
մեռելոց Ալէլուիա. եկայք ժողովուրդք երգեցէք  
Տեսա՞ն Ալէլուիա. փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից  
Ամէն. Յարուցելոյն ի մեռելոց Ալէլուիա, որ զաշ-  
խարհս լուսաւորեաց. Ալէլուիա:

## 556 ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻԻՆԸ Մարկ. 16.

1. Ի գերեզման յարուցելոյն անմահի, այսօր գոչէ հրեշտակն ուժգին ի վիմի, Յարեաւ Քրիստոս, զարթեալ Քրիստոս, ի լոյս գերեզմանի, ի կոյս գերեզմանի:
2. Պահապանքն զարհուրեցան ի յահէն, քանզի ի կոյս նորափոր տապանէն, Յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս...:
3. Առ սուրբ վէմին նստեալ գոչէր, հրաշալի ի զարերքն քարոզելով՝ ասէին, Յարեալ Քրիստոս, զարթեալ Քրիստոս...:

## 557 ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ, ՍՈՒՐԲ Եսա. 6. 3:

1. Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք Քո, Օրհնո՛ւթիւն ՚ի բարձունս, օրհնեալ որ և էլիրդ և գալօց ես անուամբ Տե՛առն. Ավաննա ՚ի բարձունս:
2. Հայր երկնաւոր, որ զՈրդիդ Քո ետուր ՚ի մահ վասն մեր՝ պարտապան պարտեաց մերոց, հեղմանր արեան նորա աղաչեմք զՔեզ, ողորմեա Քո բանաւոր հօտի:
3. Յամենայնի օրհնեալ ես, Տէ՛ր, օրհնեմք զՔեզ, գովեմք զՔեզ, գահանամք զքէն, աղաչեմք զՔեզ, Տէ՛ր Աստուած մեր:
4. Որդի Աստուծոյ, որ պատարազեալ Հօր ՚ի հաշտութիւն, Հաց կենաց բաշխիս ՚ի մեզ, հեղմամբ արեան Քո սուրբ, աղաչեմք զՔեզ, ողորմեա Արեամբ քով փրկեալ հօտի:
5. Հոգի Աստուծոյ որ զփառակցի Քո զխորհուրդ իջեալ ՚ի յերկնից կստարես ՚ի ձեռս մեր. հեղմամբ արեան Սորա աղաչեմք զՔեզ, ողորմեա Քո բանաւոր հօտի:

## 558 Ը Ն Դ Բ Ա Դ Ա Ր Զ Ի Ն Մատթ. 26. 26:

Ընդ բազարջին հաց անխըմօր,  
 Ետ զմարմինն իւր զերկնաւոր,  
 Ըզկուսածինն անսերմնաւոր,  
 Զանապականն և զհոգեւոր.  
 Ընդ ոչխարին արեան ուխտին  
 Ետ մեզ զարիւնն իւր ուխտ կրկին.  
 Եւ եղեգան դառնագունին  
 Փոխան ըզվարս Աստուածային:

Թագաւորն արարածոց,  
 Զհացըն կենաց ետ քաղցելոց.  
 Եւ ըզբաժակն ուրախարար,  
 Որք յԱդամայ տրամեցելոց.  
 Այս նոր ուխտ է իմոյ արեան,  
 Փոխան հընոյ ուխտին արեանց.  
 Զոր յիշատակ իմ սռնիցէք,  
 Մինչև եկից ևս միւս անգամ:

ժողովեալքըս 'ի Քէն հայցեմք,  
 Ընդ ժողովեալ մետասանին.  
 Որ զկենարարըդ քո մարմին,  
 Բաշխեալ Ետուր ընդ բաժակին.  
 Շնորհեա և մեզ Տէ'ր ընդ նոսին,  
 Հազորդ լինել Քում սեղանին.  
 Գննաց հացիդ յոր փափաքիմք,  
 Եւ ըմպելոյդ ում ծարաւիմք:

## 559 Տ Ա Ր Ա Մ Ե Ա Լ Մատթ. 27:

1. Տարածեալ ձեռք ընդ ձեռաց,  
 Ոտք ընդ ոտից ընթանալեաց:

Փայտ ընդ փայտի դառըն պտղոյ,  
 Կեանք ընդ մահու փոխարկելով:  
 Ի մէջ երկուց անօրինաց  
 Կայր մերկացեալ տուողն օրինաց,  
 Զոր ոչ տեսին ազգըն կուրաց,  
 Բաց ի միոյն յաւաղակաց:

2. Բողէից արեգականն,  
 Ըզտիւն արար գիշերանման,  
 Զըստուերըն քօղ արկ մերկութեան,  
 Զի մի՛ տեսցէ ակն անարժան,  
 Ի միջօրեայն նըսեմացաւ,  
 Յորժամ Ագամ մեղօք մեռաւ,  
 Ի յիններորդն ի լոյս դարձաւ,  
 Յորժամ մահուամբ մահըն լուծաւ:
3. Յօղէր արտօսըր ցաւագին,  
 Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին,  
 Յորժամ լըսէր ըզժարաւին,  
 Բարբառելոյ իւր Միածնին,  
 Ետուն քացախ խառնեալ լեզի,  
 Այնմ՝ որ ըզխեաց զետ յԱզննի,  
 Եւ իվիմէն վճտակ բարի,  
 Արբոյց տոհմին դառնացողի:
4. Իիւծեալ յերրորդ ժամու օձին,  
 Ըզմիտս նախնւոյ մօրն Եւայի,  
 Ի վեցն անկեալ մարդն առաջին,  
 Հաւանական բանիւ նորին,  
 Ի սոյն ժամու Տէրն ի խաչին,  
 Զի քաւեսցէ ըզԼեզս նոցին,  
 Եւ յորժամ ել Ազամբն հին,  
 Եզ զաւաղակն ի մէջ զրախտին:

5. Փարեկի բարբառ ընդ իմ,  
 Ելի, Ելի առ Հայր գոչէր.  
 Զփոքին կամաւ Հօր աւանդէր,  
 Զհոգիս մարդկան նոյն ընծայէր.  
 Երկիր հիմամբ սասանեցաւ,  
 Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ.  
 Վէ՛մք ի յինքեանց պատառեցան,  
 Եւ գերեզմանք մահու բացան:
6. Քարոզի ի սքանչելեաց,  
 Աստուած մարմնով վասն իմ խաչեաց.  
 Մերով բնութեամբս մեռանի,  
 Աստուած անմահ խոստովանի.  
 ԿըրկնաՎրտակ կողին աղբերք,  
 Եկեղեցի իւր հաստատի.  
 Զբրովն մաքրի դարիւն ըմպէ,  
 ԶՈրդին ընդ Հօր փառաւորէ:

## 560 ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ Յովհ. Յ. 12:

Լո՛յս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս:

Եկեալքս՝ ի մօանելարեղականն, տեսաք զլոյս երեկոյիս. Յրհնեմք զՀայր եւ զՈրդի եւ զՈրուրբ Հոգիդ Աստուծոյ. Եւ ամենեքեան առեմք. Ամէն, Արժանաւորեա զմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով՝ զԱնուն փառաց Ամենասուրբ Երրորդութեանդ, Որ տայ ըզկենդանութիւն, վասն որոյ եւ աշխարհս զՔեզ փառաւորէ:

## 561 Ս Ո Ւ Ր Բ Ե Ս Տ Է Ր Ե ս ա . 57 :

1. Սուրբ և ս Տ է 'ր դօրու թեանց որ րնակեալդ ևս 'ի յերկինս, և բարերանիս 'ի սրբոց քոց :
2. Երկնային դօրու թիւնք՝ Սերովրէք և Քերովրէք անգագար օրհնեն սուրբ զԱնունդ Քո :
3. Լոյսդ որ յառաջ քան յյաւիտեանս 'ի Հօրէ առաքեցար և լուսով իմանալեալ լցեր զարարածս . օրհնեալ ևս թագաւոր յաւիտենից :
4. Որ զլոյսն 'ի սկզբանէ հաստատեցիր վերստին, և զխաւարն անգիտութեան յարութեամբդ Քո հալածեցեր . օրհնեալ ևս . . . :
5. Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն դուար թնոցն, երգեսցուք ցնծութեամբ 'ի յարութեան երեկոյիս, օրհնեալ ևս . . . :
6. Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծ 'ի ձնունդօ կանանց, քարոզէր անապատի ազդ արարող բարբառովն՝ զձադ ումն լուսոյ Արեգականն արդարութեան :
7. Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ յառաջընթաց Կարապետ և սլատմող Աստուածային օրինացն, հորդէր ճանապարհս թագաւորին յաւիտենից :

## 562 Ն Ա Յ Ե Ա Յ Ս Ի Ր Ո Վ Ս ա ղ մ . 143 . 1 :

Նայեաց սիրով, Հայրրդ գրթած,  
 Ի քոյ ստեղծեալ գործքս ձեռաց,  
 Եւ ըզբանակըս հրեշտակաց՝  
 Տուր պահապան մեզ տրկարացս .  
 Փրկեա զանձինս ի փորձանաց՝  
 Ի խաւարի շրջող դիւսց .  
 Զի ի տուրնջեան և գիշերի՝  
 Տացուք քեզ փառս անլուելի :

Էին անեղ անըսկըզրան,  
 Ծընունդ անճառ Որդի և Բան.  
 Որ արարեի ըզտիւ դորձոյ՝  
 Եւ զգիշեր 'ի հանգիստ քնոյ,  
 Տուր ի նընջել աչաց մարմնոյ՝  
 Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ: Զի ... ?

Քարուն հոգւոց բանաւորաց  
 Այլբիւր լուսոյ քաշխոյ շնորհաց,  
 Ի փակիլ զրանց ընուծեանց մարմնոց  
 Էոյս տուր աչաց սրտից մերոց,  
 Ի գիշերաց առ Քեզ կանխել՝  
 Ընդ հրեղինացն օրհնարանել: Զի ... ?

Ուրբըզ Սրբոց Երբորդուծիւն,  
 Ըզմեզ մաքրեա Քեզ բնակուծիւն.  
 Ենօրհեա ընդ մանկանց առագաստի,  
 Հանդչել ընդ Քեզ ի յանկողնի.  
 Տո՛ւր ըզհայցուած բարեկամին,  
 Ըզփոխ երից նըկանակին: Զի ... ?

Երեւելի լոյս ըստեղծեր,  
 Զտիւ և զգիշեր բաժանեցիր,  
 Իրագեա՛ մեզ. Տէր, 'ի գիշերի՝  
 Ըզճառագայիս իմանալի.  
 Տո՛ւր յամենայն մամանակի.  
 Զպահպանող աջ Քո հովանի: Զի ... ?

Սիրոյ Քո հուր արկեալ յերկիր,  
 Բորբոքեացի 'ի հոգիս մեր,  
 Զխորհուրդ սրբտից մեր մաքրեսցէ.  
 Զլոյս գիտուծեան Քո փայլեսցէ,  
 Ի քնոյ մահու զմեզ զարթուցէ.  
 Զմիտըս ըսցով Քով վառեսցէ: Զի ... ?

Ի Գեղ նայիմք լոյսդ անմատոյց,  
 Ի դգայական ծածկեալ լուսոյ.  
 Որ փասըն մեր եղար 'ի գրի,  
 Եւ ննջեցեր 'ի տապանի.  
 Առ մեզ ննջեա արթուն բնութիւն  
 Հերքեա զչարին Ներդործութիւն: Զի . . . .

Էիդ լուսոյ անըստուերի,  
 Պաղատանօք կամք առաջի.  
 Որ փակեալ զրամբք երեկոյին,  
 Երեւեցար մեռասանին.  
 Ընդ Թովմայի առ Գեղ գոչեմք,  
 Տէր և Աստուած զԳեղ դաւանեմք+  
 Ի'ջ և առ մեզ յերկոյիս,  
 Եւ առբ զողջոյն Գո 'ի հոգիս:

Րամեալքս զԳեղ, Տէր, ազաչեմք՝  
 Մեզ յօյնութիւն նայեա, հայցեմք.  
 Պահապանդ ի սրայէլի,  
 Անձանց մերոց լեր հովանի.  
 Օթեա առ մեզ խաղաղարար.  
 Եւ ննջեսցուք անխռովարար,  
 Զի ընդ առաւօտըս կանխեսցուք,  
 Օրհնել զԳեղ ընդ շօր Հոգւով:

Գոչման փողոյն Գաբրիէլի,  
 Որ 'ի վերջնումըն գիշերի.  
 Լըսել արա՛ զմեզ արժանի.  
 Եւ աջակողմն օլեաց դասի,  
 Անշէջ փռեալ լոյս լապտերաց՝  
 Ըստ իմաստուն հինգ կուսանաց.  
 Զի ընդ Փիսայիդ 'ի յառադաստ  
 Հարստեմք հոգւով մըացուք 'ի փառս:

### 563 օ Ր Ն Ն Ե Յ Է Ք Ս ա Ղ մ . 103 :

1. Օրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր օրհնեցէք և բարձր արարէք զՆա յաւիտեան :
2. Երկինք զՏէր օրհնեցէք և բարձր արարէք զՆա յաւիտեան :
3. Ի սրայէլ զՏէր օրհնեցէք, և բարձր արարէք զՆա յաւիտեան :

### 564 Խ Ո Ր Ն Ո Ի Ր Դ Մ Ե Ծ Ա Տ Ի մ . 3 . 16 :

1. Խորհուրդ մեծ և սքանչելի որ յոյսմ աւուր յայտնեցաւ, հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի :
2. Ծնաւ նոր Արքայ ի Բեթլեհէմ քաղաքի, Որդիք մարդկան օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ :
3. Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին ըաղմեցաւ :

### 565 Ա Յ Ս Օ Ր Տ Օ Ն Է Ղ ու կ . 2 . 11 :

1. Այսօր Տօն է ձընընդեան աւետիս, Տեառն մերոյ և յայտնութեան աւետիս, աւետիս :
2. Այսօր արևն արդարութեան աւետիս, երեւեցաւ ի մէջ մարդկան աւետիս, աւետիս :
3. Այսօր սուրբ կոյսն անապական աւետիս, ծնաւ երեք զանմահ արքայն աւետիս, աւետիս :
4. Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս, ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս :
5. Այսօր զըմսիւքըն սարսեցան աւետիս, գունդրք դիւայ յոյժ տրտմեցան, աւետիս, աւետիս :

## 566 ԱՆՍԿԻՉՈՆ ԷԱԿԻՑ ՅՈՎՆ. 1. 1.

1. Անըսկիղրն էակից բանըդ շօր որ էիր յառաջ քան ըզյաւիտեանն և եկեր ի փրկութիւնն ըստեղծուածոց բոց, ըզՔեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց:
